ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(80-րդ տարի) Թիվ-5 (1711) Մայիս 2026

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1 - Առաջնորդող

Լինել արժանի ժառանգորդը (էջ 1-3)

2 - Քաղաքական

Արտաշես Շահբազյան
Մեկ ընտրություն, երկու ընտրապայքար (էջ 4-6)

Անժելա Հարությունյան
Մայիսի 9. Եռատոնից դեպի պարտության հոգեբանություն (էջ 7-9)

3 - Պատմաքաղաքական

Անի Մելքոնյան
Պարտության և ուրացման փաշինյանական քարոզարշավն ընդդեմ Հայաստանի Հանրապետության (էջ 10-13)

4 - Տարածաշրջանային

Լիանա Պետրոսյան
Բաքվի թաքնված օրակարգը. ինչպե՞ս է ադրբեջանական շանտաժը թիրախավորում հայ ընտրողին (էջ 14-17)

Նարե Գևորգյան
Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանում և հունիսի 7-ի ընտրությունների աշխարհաքաղաքականությունը (էջ 18-19)

5 - Տնտեսաքաղաքական

Վահե Դավթյան
Հայաստանի էներգետիկ անվտանգությունը. ռիսկեր ու մարտահրավերներ (էջ 20-26)

6 - Գաղափարական

Արամ Շահնազարյան
Միացյալ Հայաստանը որպես ռազմավարական անհրաժեշտություն (էջ 27-29)

7 - Ժառանգություն

Սարգիս Ձէյթլեան
Միակ ապաւէնը (մայիս 28ի առիթով) (էջ 30-32)

8 - Հայ Դատ

Մարի Հովհաննիսյան
«Օղակ» գործողության նախերգանքը. Արցախի հյուսիսային դարպասի՝ Գետաշենի և Մարտունաշենի անկումը (էջ 33-37)

9 - Ընթերցումներ

Տիգրան Չանդոյան
Հայ-թաթարական բախումները ՀՅԴ գործիչների հուշերում (էջ 38-41)

Արմեն Կարապետյան
Սյունիքը Մուշեղ Գալշոյանի հրապարակագրության էջերում (էջ 42-43)

10 - Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Ազատ, անկախ, առցանց... (էջ 44)

Լինել արժանի ժառանգորդը

Ապրիլյան տխուր ու ճնշող հոգեվիճակին, կարծես մի վերին նախախնամությամբ, հետևում է մայիսյան ոգեկոչումների, հոգեպես ամրապնդվելու, զորեղանալու, սեփական պատմությամբ և մեր պատմական ինքնությամբ ոգեղեն վերածնության ժամանակը: Այդպես եղել է տասնամյակներ շարունակ, և այլ կերպ չէր կարող լինել, եթե հայ ժողովուրդը ցանկանում էր ապրել և ոչ թե ընկրկել ճակատագրի հարվածների, մեզ բաժին հասած ոչ դյուրին ճակատագրի դեմ: Այն երբեք չի եղել ինքնախաբեություն, այլ միանգամայն արդարացված հոգեվիճակ և ձգտում՝ ինչի առհավատչյան մեր բազում հաղթանակներն են, ձեռքբերումները, նվաճումներն ու արարումները: Վերջապես այն գրեթե 2000-ամյա մաքառումներից հետո հայ ժողովրդի գոյությունն ու ներկայությունն է պետականությամբ օժտված հաղթական ժողովուրդների կողքին: Մի՞թե անհավատալի սխրանք չէ 1918 թ. մայիսին՝ չավարտված ցեղասպանության պայմաններում, անկախ պետականության հռչակումը՝ որպես Առաջին Հանրապետություն: Չնայած թերահավատ շուրթերից երբեմն հնչող մոլոր մտքերին ոչ մի կասկած չի կարող լինել, որ անկախությունն ուղղակի արդյունքն էր մայիսյան անօրինակ հաղթանակների՝ Սարդարապատի, Ապարանի, և Ղարաքիլիսայի սխրանքի:

Իսկ եթե արտաքին ուժերը ցանկանային մեր ինքնահաստատումն ու վերածնունդը, չէին ձեռնարկի կամ թե կկանխեին լայնածավալ արշավանքները փոքրացած ջլատված Արևելահայաստանի դեմ:

Չլինեին մայիսյան հաղթանակները, ծվատված ու բզկտված երկիրը բաժան-բաժան էին անելու վրացիք ու կովկասյան թաթարները:

Վերջին տասնամյակներին մեր հպարտությունն իրավացիորեն բազմապատկվեց նոր Սարդարապատի՝ Արցախի ազատագրման իրողությամբ: Որքան էլ անհավատալի թվա, սակայն անկրկնելի փաստ է, որ 150.000 բնակչությամբ Արցախը, չորս կողմից շրջափակման մեջ գտնվելով, կարողացավ հաղթել 7 միլիոնանոց Ադրբեջանին: Այո, այդ գործում հայությունը աջակցեց նրան, բայց անժխտելի է, որ արցախահայությունը միայնակ ընդունեց իր վրա պատերազմի ողջ արհավիրքը, դիմակայեց ու դիմագրավեց անհամեմատ մեծ ուժին: Սեփական պատմությամբ ու արժեքներով հպարտանալը սնափառություն չէ. աշխարհի ժողովուրդները բոլոր ժամանակներում էլ ամուր լինելու, դժվարությունները հաղթահարելու և առաջ գնալու համար զորացել են՝ սնվելով ու ամրանալով սեփական պատմության ակունքներից: Եվ այսօր էլ ուրիշ հիմարացածներին խաբելով վերազգային գայթակղիչ գաղափարներով՝ աշխարհի հզորներն իրենց պատմության հետ են, սեփական ինքնության փառաբանումը չեն համարում ազգայնամոլություն, նեղմտություն կամ հետամնացություն:

Եվ հակառակը, սեփական ուժի ու ինքնության աղբյուրից հրաժարումը, հերոսական անցյալը, հաղթանակներն ու հայրենասիրական դաստիարակության մերժումը մարդկանց և ժողովուրդներին զրկում է ոտքի տակի ամուր հողից, դարձնում է գաղափարապես ու ոգեպես սնանկ՝ հետևաբար և տկար ու ճորտական կախման մեջ է գցում օտարից՝ ստրկամտորեն ապավինելու է մղում վերջինիս ողորմածությանը: Ճիշտ նույն գաղափարախոսությունը դավանեց Հայաստանում իշխանության հասած ուժը, որն իր առաջնորդի բերանով ասում է. «Պատմական Հայաստանն ու ներկա Հայաստանը հակադրության մեջ են իրար հետ, պատմական Հայաստանը վտանգում է ներկա Հայաստանի գոյությունը»: Մերժելով սեփական պատմությունը, չհավատալով սեփական ժողովրդի ներուժին՝ այս իշխանությունը փորձեց օտարին ենթարկվելու և նրա կամքը անվերապահորեն կատարելու ճանապարհով վերացնել իր երկրի նկատմամբ վերջինիս ագրեսիվ հավակնություններն ու այդ մարտավարությամբ հասնելու խաղաղության: Թեև կոպիտ կինչի այս օրինակը, կարծում եմ, սակայն, շատ նման է տվյալ հոգեվիճակին՝ բռնաբարվողը կարող է չեզոքացնել բռնաբարել ցանկացողի մտադրությունը՝ դադարեցնելով դիմադրությունը և ամբողջովին ենթարկվելով վերջինիս... Իհարկե դա չի նշանակում, թե նա կխուսափի անարգումից ու նվաստացումից և կմարի իրեն հարճի վիճակի մեջ պահելու վերջինիս ցանկությունը: Իսկ մի՞թե նույն հոգեբանական վիճակի մեջ չեն Հայաստանի իշխանությունների և հայության երեկվա թշնամիների «բարեկամական» փոխհարաբերությունները: Հայաստանի իշխանությանը ծաղրում են, հայտարարում են որ նրանց ղեկավարած երկիրն իրենց է պատկանում, և սա երևի աշխարհի միակ իշխանությունն է, որը լուռ տանում է այդ ամենը, օրինականորեն չի ընդվզում և շարունակում է թութակի նման բարբաջել խաղաղության մասին: Ոխերիմ բարեկամը պարտադրում է նորանոր զիջումներ, և Հայաստանի իշխանությունը

կատարելով դրանք՝ սեփական ժողովրդին փորձում է համոզել, թե այդ ամենն ինքն անում է իր իսկ կամքով: Ինչպիսի՛ զուգադիպություն. Ադրբեջանը Հայաստանից պահանջում է փոխել Սահմանադրությունը և հրաժարվել Հռչակագրից, իսկ Հայաստանի իշխանությունը նույն ժամանակ ինքն է որոշում փոխել պետական կարգը սահմանող երկրի գլխավոր փաստաթուղթը: Ադրբեջանի ղեկավարությունը իր մոտ դատում է Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությանը, իսկ Հայաստանի իշխանությունը զուգադիպությամբ այդ ղեկավարությանը դատում ու հալածում է Հայաստանում: Ադրբեջանը չի ճանաչում Արցախի հայկական գոյությունը, նրա պատմությունը, նրա ղեկավարությանը՝ նույնը Հայաստանի իշխանությունը: Ադրբեջանը մերժում է Հայ Առաքելական եկեղեցին և Սփյուռքը, իհարկե, այդ ամենը Թուրքիայի հետ միասին, և նույնը՝ «բոլորովին անկախ ձևով», անում է Հայաստանի իշխանությունը: Թուրքական տանդեմը ժխտում է հայոց պատմական իրավունքները, արժեքները, ցեղասպանության խնդիրը, և նույնն անում է Հայաստանի իշխանությունը՝ հասնելով մինչև Մեսրոպ Մաշտոց, հայտարարելով, թե այսօրվա Հայաստանի տարածքում օտար պետություններ են եղել, հայությունը փոքրամասնություն է կազմել: Ի՜նչ զարմանալի զուգադիպություններ:

Չափազանցված չէ, որ մի քանի օրից սպասվող ընտրությունները հայ ժողովուրդն ու ազգային ուժերը համարում են ճակատագրական՝ ընտրություն Հայաստանի մնալու կամ Ադրբեջան դառնալու միջև: Այսօր արդեն Հայաստանի համար սկսվել են այն աղետալի հետևանքները, որոնք կործանարար բնույթ են ստանալու, եթե հանկարծ Հայաստանի իշխանությունն այլևայլ ճանապարհներով հաջողացնի վերարտադրվել: Արդեն իսկ տարածաշրջանի գլխավոր ազդեցիկ ուժը որոշել է համարժեքորեն արձագանքել Հայաստանի իշխանությունների հակառուսական դեմարշին, և արդեն իսկ տեսանելի է, որ անհամեմատ թույլ ներուժով Հայաստանին սպառնում է Ուկրաինայի ճակատագիրը:

Ադրբեջանն ու Թուրքիան հետևողականորեն ամեն ինչ արեցին Հայաստանին կտրելու և հակադրելու համար դաշնակից Ռուսաստանին, որպեսզի զրկեն նրան հնարավոր աջակցությունից, իսկ իրենք ճկուն ձևով շարունակում են բարեկամություն խաղալ նույն Ռուսաստանի հետ: Հայաստանին թուրքադրբեջանական տանդեմի, ինչպես և Արևմուտքի կողմից թելադրված է դանդաղորեն խզել կապերը ԵԱՏՄ-ի հետ, և ՔՊ-ական իշխանությունը ծրագրավորված ձևով իրականացնում է այդ պահանջը: Ընտրություններում հաղթելու դեպքում այս ուժը Հայաստանը դուրս է բերելու նաև ՀԱՊԿ-ի կազմից, որից հետո երկիրը լիարժեք կերպով կընկնի ադրբեջանաթուրքական ռազմաքաղաքական ազդեցության տակ՝ նմանվելով այն վիճակին, որի մեջ էր Արևմտյան Հայաստանը՝ ցեղասպանության նախօրյակին: Հայաստանի իշխանությանը թելադրված է խզել բոլոր այն կապերը, որոնք նրան կապում են Ռուսաստանի հետ, որպեսզի կարողանան վերջնականորեն դուրս մղել Ռուսաստանին տարածաշրջանից: Հայաստանի նիկոլական իշխանության պահպանման դեպքում խզվելու են կապերը Ռուսգազարդի հետ, փակվելու է Հայկական ատոմակայանը, Երկաթուղու կառավարման իրավունքը վերցվելու է Ռուսաստանից: Այս քայլերից, ինչպես և երկրի առջև ռուսական շուկայի փակվելուց հետո Հայաստանը հայտնվելու է շատ ավելի վատ վիճակում, քան էր անցած դարի 90-ականների առաջին տարիներին: Հայաստանի արկածախնդիր իշխանությունը Ռուսաստանի հետ ունեցած կապերը ցանկանում է փոխարինել գլխավորաբար Ադրբեջանի ու Թուրքիայի հետ կապերով: Ռուսաստանի գյուղատնտեսական շուկայի փակվելուց հետո մեռնելու է հայկական գյուղատնտեսությունը և նրան փոխարինելու է Թուրքական էժան գյուղարտադրանքը՝ զանգվածորեն քայքայելով հայկական գյուղը, իսկ գյուղացուն մղելու է արտագաղթի կամ վերածելու է օտարի երկիրը շենացնող խոպանչու:

Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ տնտեսությունը քաղաքականության բաղկացուցիչ մասն է, և մեծ խելք պետք չէ պատկերացնելու համար, որ տնտեսական այդ կախումների դիմաց Հայաստանից այնպիսի զիջումներ են պահանջելու, որ երկրի անունը կմնա միայն... Եթե հիարկե չվերանվանվի Արևմտյան Ադրբեջանի:

Զարմանալի զուգադիպությամբ, թե պարտադրանքով, Հայաստանի իշխանությունը պատրաստվում է վերարտադրվելու դեպքում փակել 229 դպրոց, ի դեպ, որոնցից 48-ը Սյունիքի 100 դպրոցների շարքում են: Կարելի է պատկերացնել, թե հիմնականում սահմանային կամ հեռավոր այդ դպրոցների փակումից հետո ինչպես են դատարկվելու ռազմավարական նշանակության տվյալ տարածքները: Հայաստանի իշխանությունը քայլ-քայլ քայքայում է Հայաստանի ազգային ակադեմիան, ընտրություններից հետո նա փակելու է 42 ակադեմիական ինստիտուտները՝ իբրև թե գիտնականներին ուղարկելով բուհեր: Այնինչ իրենք՝ բուհերն այսօր աշխատում են թերի ծանրաբեռնվածությամբ

և դժվարությամբ են պահում սեփական դասախոսական կազմերին: Հետևաբար, այս քայլն ամբողջովին ցրիվ կտա երկրի գիտական պոտենցիալը:

Ժողովրդին անվերջ ու ամենուր սեր խոստովանող իշխանությանը բացարձակապես չի հուզում, թե իր կատարած քայլերի վերաբերյալ ինչ կարծիք ունի նույն ժողովուրդը:

Ինչ վերաբերում է ավանդական կապերը նորերով փոխարինելու քայլերին, այս պահին իշխանության իրականացրածն ուղղակիորեն նշանակում է կտրել այն ճյուղը, որի վրա նստած են: Վրաստանի, Ուկրաինայի և ուրիշ երկրների օրինակը կարող է վկայել, թե որքան է իրական Եվրոպական տարազ հագնելու հեռանկարը և որքանով է իրական, որ Եվրոպան իր հագեցած շուկաներում տեղ կանի նաև հեռավոր Հայաստանից հասցված մթերքների համար: Նույն չափով հեքիաթ է, որ Արևմուտքն իր զինված ուժերը կուղարկի մեզ պաշտպանելու: Եվրոպային այս տարածաշրջանում ներկայացնում է Թուրքիան: Նրանք, ովքեր փրփուրը բերանին առավոտից գիշեր Ռուսաստան են հայհոյում իրենց հայրենասիրության և իմաստնության բարձր մակարդակը ցույց տալու համար, լավ կլիներ մտածեին, թե իրենց տակի ճյուղը կտրելուց հետո ինչի վրա են նստելու: Թվում է, որ այդ փքուն խոսքերի ետևում թաքցվում են նիկոլականի կերպարները կամ թե ոմանք հաշվետվություն են տալիս Արևմուտքին՝ ստացած փողերի համար:

Ինչ վերաբերում է իշխանության գործողություններին, ապա դրանցում ազգային-պետական շահեր փնտրելն անիմաստ զբաղմունք է: Իշխանությունն ու նրա վայ առաջնորդը կաշվից դուրս գալով փորձում են արտաքին շահագրգիռ ուժերին ապացուցել, որ պատրաստակամ են նրանց յուրաքանչյուր պահանջի կատարմանը՝ վերջիններիս աջակցության դիմաց: Այդ պատճառով էլ, թե՛ իրենց և, թե՛ երկրի համար անպատեհ պահին ցուցադրում են իրենց անվերապահ հակառուսականությունը, հետապնդում են արցախցիներին և գոռում են, թե Արցախյան շարժում թույլ չեն տա, Եկեղեցու նկատմամբ հալածանքների հետևողականության մասին արձանագրում են նախընտրական ծրագրում, ստորանալով վազում են օդանավակայան և արագ ստորագրում Երկրի բնական պաշարները ամերկացիներին հանձնելու պայմանագիրը, և այդպես շարունակ:

Հայաստանը սրանց համար այն գրավն է, որը շռայլորեն կարող են բաժան-բաժան անել և բաշխել աջ ու ձախ, միայն թե պահպանեն սեփական անպատժելիությունը երաշխավորող իշխանությունը: Այդ իշխանությունը կորցնելու վախից ընտրության շեմին նրանք քաղաքական ահաբեկչության մթնոլորտ են ծավալել երկրում, մեկուսացնելու նպատակով հեղինակավոր ու ակտիվ ընդդիմադիրներին, ինչպես և վախի միջոցով նվազեցնելու համար ընտրություններին մասնակցելու հանրային տրամադրությունները:

Հայաստանի գործող իշխանությունը կենդանի վկայությունն է այն օրինաչափության, թե ինչի են վերածվում ամբոխավարները, որոնք պատահականորեն հայտնվել են պետության ղեկի մոտ և գաղափար չունեն, թե ինչպես պետք է վարել այդ ղեկը: Հայրենասիրական փքուն և մեծադղորդ ճառերից հետո իշխանությունը դարձավ ինքնանպատակ և, 180 աստիճան պտույտ կատարելով, վերածվեց արտաքին ուժերի գործիքի՝ ընդդեմ սեփական ժողովրդի: Այդ իսկ պատճառով այս ընտրությունը վերածվեց Հայաստանի լինել-չլինելու ընտրության:

Այո՛, չափազանցություն չէ, որ կրկին կանգնած ենք հայրենիքը փրկելու փորձության շեմին, իսկ ժողովուրդը պետք է ապացուցի, որ ժառանգորդն է Սարդարապատի ու Արցախյան ազատագրական պայքարի զտարյուն, աննահանջ, անպարտ սերունդների: ■

Մեկ ընտրություն, երկու ընտրապայքար

Արտաշես Շահբազյան

Այսն թվականի մայիսի 7-ից պաշտոնապես մեկնարկեց ՀՀ գալիք Ազգային ժողովի ընտրարշավը: Իրականում այս ընտրապայքարը սկսվել էր ամիսներ առաջ: Ավելի ստույգ՝ դեռևս մեկ-երկու տարի առաջ կառավարող ՔՊ-ն «Կրթությունը նորաձև է» ծրագրի և այլ նախաձեռնությունների ձևով սկսել էր քարոզարշավը:

Իշխանությունն, իհարկե, վաղուց գիտակցում էր իր հեղինակության խորը անկումն ու ժողովրդի համատարած դժգոհությունը, և նրան ժամանակային մեծ տարածություն էր հարկավոր առկա տրամադրությունները փոխելու ճիգ ու ջանքի համար:

Նախընտրական ընդհանուր մրցապայքարի առաջին իսկ շրջանում, որպես առաջատար և իշխանության հավակնող հիմնական ուժեր, առանձնացան մի կողմից իշխող ՔՊ-ն և, մյուս կողմից, ընդդիմադիր երեք հիմնական ուժերը՝ Սամվել Կարապետյանի, Ռոբերտ Քոչարյանի և Գագիկ Ծառուկյանի գլխավորությամբ: Թեև չի բացառվում, որ մեկ-երկու ուժեր ևս կարող են հաղթահարել նախընտրական շեմը: Ակնհայտ է որ մրցապայքարին մասնակցող 19-ը քաղաքական ուժերից շատերը խորհրդարան անցնելու ոչ մի հնարավորություն չունեն և նրանց դերը իրենց մեկ-երկու տոկոս փոշիացող ձայներով, գլխավորաբար, անցնող հիմնական առաջատար ուժի տոկոսը մեծացնելն է, ինչին հավակնում է Փաշինյանի իշխանությունը:

Այս ընտրապայքարում, ի սկզբանե հիմնական քաղաքական հավակնորդներն առանձնացան ոչ թե պարզապես իշխանության և ընդդիմության հակադիր թևերում գտնվելու հանգամանքով պայմանավորված, այլև նախընտրական պայքարը վարելու ոճով: Նիկոլ Փաշինյանը, ինչպես իր իշխանավարման անցնող ժամանակահատվածում, այս անգամ ևս ձգտեց ընդհանուր գործընթացն ուղղորդել ըստ իր սցենարի, որի պարագայում նա կունենար ակնհայտ առավելություն: Վերջինս նախընտրեց ընտրապայքարը դուրս բերել ծրագրերի, ու անելիքների և, մանավանդ, իշխող ուժի իրականացրած գործունեության քննարկումների դաշտից և բանավեճը տեղափոխել աղմկարարության, վարկաբեկումների ու հայհոյանքների զգացական տիրույթ և այնտեղ «հաշվեհարդար տեսնել» իր հիմնական մրցակիցների հետ: Այսինքն՝ գործադրել հայտնի մարտավարությունը, որի վերաբերյալ զգուշացվում է հայտնի ասույթում՝ չվիճել ապուշի (այս դեպքում՝ դեմագոգի) հետ, ով կիջեցնի քեզ իր մակարդակին և այնտեղ կհաղթի իր փորձի շնորհիվ:

Ակնհայտ էր, որ ընդդիմադիր հիմնական ուժերն ընտրել էին խաղաղ, ինքնավստահ ընտրապայքար տանելու մարտավարությունը՝ շատ քիչ հիշելով իշխող ուժին ու նրա առաջնորդին և կենտրոնանալով սեփական ծրագրերը ներկայացնելու վրա: Այս գործելակերպը, սակայն, ձեռնտու չէր Նիկոլ Փաշինյանին, որը ժամանակի ընթացքում ավելի ու ավելի խստացրեց հիմնական ուժերի և նրանց առաջնորդների նկատմամբ իր ամբաստանություններն ու հայհոյանքները, և, համարժեք արձագանք չստանալով, անցավ «սպանելու», «բանտարկելու», «սեփականությունները խլելու» բացահայտ սպառնալիքների:

Թերևս ավելորդ է ենթադրելը, որ եթե Փաշինյանի հայհոյանքի ու սպառնալիքի չնչին մասն իրենց թույլ տային ընդդիմադիր գործիչները, շատ արագ կհայտնվեին բանտային մեկուսացման մեջ: Կարելի է հիշել, թե ինչպես են Նիկոլին հարցեր տվող կամ հետը բանավիճող ընտրողներ հեռացվել աշխատանքից, և նույնիսկ հայտնվել ճաղերի ետևում:

Այսպիսին է արևմուտքի հովանավորությամբ ընտրապայքար իրականացնող «ժողովրդավար» առաջնորդի վարքը...

Առհասարակ նա, ով արդեն եղել է երկրի ղեկավար, ընտրությունների ժամանակ ունենում է առանձնահատուկ առավելություն, միաժամանակ կարող է ունենալ նույնքան խոցելիություն: Գործող կամ նախկին ղեկավարը, որպես մյուսների նկատմամբ առավելություն, կարող է մատնանշել իր արած գործերը և հավակնել լինելու ամենաճիշտ թեկնածուն: Միաժամանակ, նա ենթակա է այն վտանգին, որ հասարակությունն ու քաղաքական ուժերը կարող են հիշել նրա սխալները, չարածներն ու ձախողումները: Բնականաբար, այս ընտրապայքարի ժամանակ այդ հնարավոր առավելությանն ու խոցելիությանը ենթակա են երկու թեկնածուներ՝ Նիկոլ Փաշինյանն ու Ռոբերտ Քոչարյանը:

Ինչպես տեսնում ենք, Ռ. Քոչարյանը, ինչպես և նրա թիմակիցները, հիշեցնում են կառավարման երկու շրջանում երկրի համար Քոչարյանի իրագործումների մասին (թեև Քոչարյանը չի սիրում իր հասցեին գովերգումներն ու հաճոյախոսությունը): Նա սիրում է ավելի շուտ խոսել անելիքների մասին, գերադասում է լուսաբանել մարտահրավերներն ու հնարավոր լու-

ծումները՝ սկսած քաղաքական-դիվանագիտական ճակատից մինչև պետության կառավարում, տնտեսական մասշտաբային ծրագրեր և այլն: Ի դեպ, ովքեր հետևել են Քոչարյանի ելույթներին, համոզվել են, որ նշված և այլ ասպարեզների վերաբերյալ նախկին նախագահը տիրապետում է խորը և ընդարձակ գիտելիքների և տեղեկատվության, ակնհայտորեն այսօր էլ կարդում և ուսումնասիրում է, դրսևորում է ղեկավարին անհրաժեշտ մասնագիտական պատրաստվածություն:

Ինչպես նշեցինք, ի սկզբանե Նիկոլ Փաշինյանը գերադասեց ընտրապայքարը տանել հույզերի ու կրքերի հարթություն, քաղաքական դաշտը կրկին տրոհել սևի ու սպիտակի: Կրկին փորձելով մանիպուլացնել ժողովրդին կամ գուցե հաշվարկ անելով հասարակության մի փոքր հատվածի վրա՝ Փաշինյանը նախընտրական ցուցադրության առարկա դարձրեց, այսպես կոչված, «սրտիկը», դրա պատկերներով հեղեղելով բոլոր դիմանակար-պաստառները, և դրանց անճոռնի քանդակները տեղադրելով ընտրապայքարի ընթացքում օգտագործվող անհաշիվ մեքենաների վրա: Նիկոլ Փաշինյանի քաղաքական գրեթե միակ կարգախոսը «Տեր կանգնենք խաղաղությանը» արտահայտությունն է, որը ոչ միայն խոցելի է, այլև բազմաթիվ հարցեր է առաջացնում: Ընդօրինակելով դիդակտիկ նյութերով հանրության վրա ազդելու արևմտյան ժամանակակից մեթոդը՝ Նիկոլ Փաշինյանը ամենուր ցուցադրում է հուշանվերի, թե գուցե խաղալիքի վերածված Հայաստանի քարտեզը, ինչը մարդկանց մոտ ոչ միանշանակ զգացումներ է առաջացնում, երբ մանավանդ մտաբերում են, թե Փաշինյանն ինչ է արել և դեռ ինչեր կարող է անել ձեռքի խաղալիք դարձրած այս երկրի և նրա քարտեզի հետ:

Ըստ էության, երկրի ղեկավար աշխատածի և մանավանդ գործող ղեկավարի համար նախընտրական պայքարը մեծ դեր չի խաղում, որովհետև նա տարիների ընթացքում արդեն ցույց է տվել, թե ինչի է ընդունակ: Ակնհայտորեն Նիկոլ Փաշինյանը չի կարողանում մոռանալ արդեն հեռավոր անցյալ թվացող այն ժամանակը, երբ հանրային սիրո ու փառքի գագաթնակետին էր և փորձում է վերականգնել ժողովրդի ծոցից դուրս եկած պարզ, միաժամանակ ամենակարող ու զոհաբերության պատրաստ տղայի կերպարը: Դրա համար նա ոտքով չափչփում է ամբողջ երկիրը, աջ ու ձախ սրտիկներ է ցույց տալիս, համբուրում ու խոնարհվում է և իր հասարակ, մարդկային կերպարն ընդգծելու համար անընդհատ ծամում ու որոճում է տեսախցիկների առաջ: Վերջերս Գառնիում ժողովրդի հետ նախընտրական հանդիպման ժամանակ նա ճչում էր. «Պեռաշկի ուտողներն ընտրում են պեռաշկի ուտողներին, կարտոշկա ուտողներն «ուտում են» կարտոշկա ուտողներին»: Անհեթեթություն է թվում այս ամենը, անգամ այս մասին գրելը, բայց ինչ անես, երբ 8 տարի երկիր ղեկավարած անձն այս պարզունակ աճպարարությամբ է փորձում իրեն վերադարձնել ժողովրդի կորսված քվեն:

Փաշինյանը մի կողմից փորձում է ամբոխային կրքերի նոր ալեկոծություն առաջացնել, որի վրա ինքը

կթիավարի որպես հմուտ նավապետ և, մյուս կողմից ցանկանում է ճնշել ժողովրդի համընդհանուր ակտիվացման միտումը, ընտրություններին ժողովրդի մեծ մասնակցության հավանականության մեջ տեսնելով իր անխուսափելի պարտությունը: Նախընտրական պայքարի սկզբից Փաշինյանը փորձում է ժողովրդին ներարկել այն համոզումը, թե ինքը անվերապահորեն հաղթելու է, ինչպես և ձգտում է երկրում ձևավորել համատարած վախի մթնոլորտ:

Այդ տրամադրությունները, պետք է որ ընտրողին մղեն դատապարտվածության և կրավորականության տրամադրությունների և նրանք հրաժարվեն ընտրություններին մասնակցելու մտքից: Այդ պարագայում իր փոքր ընտրազանգվածի շնորհիվ Նիկոլը կհավաքի մեծ տոկոս և կապահովի անփառունակ հաղթանակ: Այնինչ նա շոկ ապրեց՝ ամենուր առճակատվելով մարդկանց հետ, ովքեր նրա երեսին ասում էին այն, ինչ մտածում էին: Հասկանալով իսկ, թե ինչ մեծ ձախողում է թեկնածուի համար ընտրողների հետ վիճելը, առկա վիճակը նրան անընդհատ հունից հանում է՝ մղելով հիստերիկ դրսևորումների: Վախի մթնոլորտ ստեղծելու նպատակով նախընտրական շրջանի համար անթույլատրելի կերպով շարունակվում են ընտրապայքարում ընդգրկված գործիչների, շտաբային պարզ աշխատողների ձերբակալությունները, շարունակում են հնչել սպառնալիքներ, թաղերում ու փողոցներում անընդհատ պտտվում են ոստիկանական մեքենաները, պատառոտվում են ընդդիմադիր հիմնական ուժերի պաստառները և այլն:

Խոսելով ձերբակալությունների մասին՝ պետք է արձանագրել, որ նախընտրական գործընթացների վրա ազդեցության հնարավորություն ունեցող ճանաչված և հեղինակավոր մարդկանց մեկուսացումը ծառայում է, միաժամանակ, ընդդիմադիր ուժերին թուլացնելու նպատակին: Նիկոլական ռեժիմի դեմ ըմբոստացած Բագրատ սրբազանի ձերբակալությունն ու ձգվող դատավարությունը ծառայում են նաև վերոնշյալ նպատակին: Այդ նպատակին են ծառայում նաև հիմնական մրցակից ուժերից մեկի ղեկավար Սամվել Կարապետյանի տնային կալանքի պարագան, Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանի ձերբակալությունը, Սիսիանի նախկին քաղաքապետ, «Հայաստան խմբակցության» և «Հայաստան» դաշինքի անդամ Արթուր Սարգսյանի տնային մեկուսա-

ցումը, հայտնի հրամանատար Աշոտ Մինասյանի (Երկաթի), բանտարկությունը, կուսակցության ղեկավար, ընտրություններին մասնակից Անդրանիկ Թևանյանի բանտարկությունը և այլն: Առանց կասկածի բանտարկությունների հալածանքների այս շարքը շարունակվելու է, և մեծ է հավանականությունը, որ պարտության իրական վտանգը զգալով՝ Փաշինյանն ավելի մեծ անօրինականությամբ կեզրափակի իր անօրինականությունների երկար շղթան:

Նիկոլ Փաշինյանը նմանվել է այն խեղդվողին, որը վերջին ճիգով կառչում է մեկ ուրիշի ոտքերից վերջինիս իր հետ տանելով անդունդ: Այս դեպքում այդ մեկ ուրիշը երկիրն է, որի համար Փաշինյանը ստեղծում է չափազանց վտանգավոր մարտահրավերներ: Մի կողմից՝ զիջումների գնալով ցեղասպան թշնամուն, մյուս կողմից, Փաշինյանը, չարդարացված առճակատման է տանում երկիրը Ռուսաստանի հետ, ինչը հղի է կործանարար հետևանքներով: Ընտրություններում չպարտվելու գերնպատակը ստիպում է Նիկոլին ձևացնելու, թե տեղի ունեցողը մեծ բան չէ, ինքն այլընտրանքային լուծումներ կարող է գտնել, այնինչ Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի ձեռնարկած քայլերն ու սպառնալիքները կարճ ժամանակ անց մեր երկրի և ժողովրդի համար կունենան աղետալի հետևանքներ: Մեր առջև սթափ դատողությունը կորցրած ավտորիտար բռնապետ է, որը, հենվելով ուժային կառույցների և արտաքին ուժերի բացահայտ աջակցության վրա, անում է այն, ինչ ուզում է՝ հաշվի չնստելով ոչ՛ օրենքի, ոչ՛ երկրի շահերի հետ:

Փաշինյանը բռնապետ է նաև սեփական կուսակցության մեջ, որտեղ, այսպես կոչված, ժողովրդավար ու առաջադեմ երիտասարդ առաջնորդները չգիտես ինչ կարգավիճակ ունեն՝ ուղեկցողի՞, թե՞ ստրուկի: Փաշինյանը նախընտրական մրցապայքարն իրականացնում է գրեթե միայնակ, իսկ կուսակիցները ֆոնի դեր են կատարում:

Սրան հակառակ, ընդդիմադիր հիմնական ուժերը հանդես են գալիս թիմերով, որտեղ հավասար իրավունքով տարբեր գործիչներ ելույթներ են ունենում, մասնակցում են բոլոր տեսակի աշխատանքներին: Արտաքուստ ոչ շատ էական թվացող այս հանգամանքն իրականում ունի շատ կարևոր նշանակություն, քանի որ մարդկանց պես քաղաքական ուժերն էլ ունեն իրենց բնավորությունը: Փաշինյանի վարվելակերպի մեջ դրսևորվում է նրա ինքնահավանությունն ու անձնիշխանությունը, անվստահությունը, կասկածամտությունն ու անհանդուրժողականությունը: Փաշինյանը մեծ ֆինանսական հնարավորություններ ընձեռելով իր թիմակիցներին՝ նրանցից պահանջում է անվերապահ հնազանդություն և հավատարմություն: Փաշինյանի տեղաշարժերի ժամանակ նրան ուղեկցում և ուղղակիորեն շրջապակում են թիկնազորային, ոստիկանական ու ԱԱԾ-ի բազմաթիվ մեքենաներ, համազգեստավոր և քաղաքացիական հագուստով ոստիկաններ ու ուժային կառույցների ներկայացուցիչներ: Այս փաստը խոսուն ձևով վկայում է, թե Փաշինյանը որքան է սիրում ու վստահում իրեն շրջապատող ժողովրդին, ինչ փոխադարձ զգացումներ են իշխում հասարակության և երկրի ղեկավարի միջև: Նա ղեկավար է, ով բոլորին սեր խոստովանելուց վայրկյաններ անց կարող է հարձակվել իր հետ չհամաձայնող կնոջ կամ երեխայի վրա: Հինգ հազար զոհերի համար մեղքը մարսած ժողովրդի առաջնորդը կարող է գոռալ տառապանքով ու զոհաբերությամբ հայրենի տունը լքած մի ողջ ժողովրդի վրա, թե ինչու եք փախել, դուք ինչո՞ւ չեք մեռել:

Անհնար է պատկերացնելը, որ նման վերաբերմունք իրենց մտերիմների, կուսակիցների կամ անծանոթ ու ծանոթ հայրենակիցների նկատմամբ կարող է ունենալ ընդդիմադիր հիմնական առաջնորդներից կամ գործիչներից որևէ մեկը: Տասը տարի երկիր ղեկավարած Ռոբերտ Քոչարյանը հանգիստ շրջում է մարդկանց մեջ, գրկախառնվում է իրեն մոտեցող մեծ ու փոքրի հետ, չի խորշում հանրության միջից կամ լրագրողների կողմից հնչեցված ցանկացած հարցից, հանգստությամբ արձագանքում է նաև հին ու նոր մեղադրանքներին:

Նույն մարդը չի կարող ունենալ բազմաթիվ բնավորություններ և բազմապիսի վարք. այնպես, որ ակնհայտ է, թե ընտապայքարն ում համար է հանրության հետ շփման հնարավորություն և ում համար՝ ժամանակավոր թատրոն:

Առանց չափազանցության մենք այսօր ընտրում ենք ոչ թե պարզապես ապագա առաջնորդող անձերի ու ուժերի, այլ նրանց, ում ցանկանում ենք, որ, ըստ իրենց բնավորության ու ընդունակությունների, վաղը հարաբերվեն մեզ հետ և որոշեն մեր ճակատագիրը: ■

Մայիսի 9
Եռատոնից դեպի պարտության հոգեբանություն

Անժելա Հարությունյան
Բանասեր, մանկավարժ

Յուրաքանչյուր ազգ իր պատմության ընթացքում անցնում է գոյության, պայքարի, վերածննդի և ինքնապաշտպանության փուլերով: Այդ ճանապարհին հաղթանակները ոչ թե սոսկ ռազմական կամ քաղաքական իրադարձություններ են, այլև ազգի կամքի, դիմադրության, պայքարի, ազատ ապրելու իրավունքի, ինքնության պահպանման, նրա պատմական հիշողության, արժանապատվության, ոգու ամրության, ազգային բարձր ինքնագիտակցության դրսևորումներ և պատմական շարունակականության հաստատում:

Մեզ՝ հայերիս համար այս ամենի հաստատումն է մայիսի 9-ը, որը երկար տարիներ ոչ թե պարզապես օրացույցային տոն է, այլ բացառիկ նշանակություն ունեցող օր: Այն մեր հաղթանակի, հերոսության, արժանապատվության, դիմադրության, պայքարի և վերածնության, ազգային հիշողության խորհրդանիշ է: Մենք այս օրը նշում ենք որպես եռատոն՝ Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթանակի օր, Շուշիի ազատագրման օր և Արցախի պաշտպանության բանակի կազմավորման օր:

Երկրորդ աշխարհամարտ: Անուրանալի է հայ ժողովրդի դերը: Հարյուր հազարավոր հայեր մասնակցեցին Երկրորդ համաշխարհային պատերազմին, հազարավորները զոհվեցին: Հայ ժողովուրդն իր թվաքանակի համեմատ ահռելի մասնակցություն ունեցավ այդ հաղթանակին, **որի հիշողությունն ազգային հպարտության աղբյուր է:** Հայ ժողովուրդը տվեց մարշալներ, գեներալներ, ծովակալներ, հերոսներ՝ որոնց անունները մտան համաշխարհային ռազմական պատմության մեջ: Հայ զինվորը կռվեց և հասավ մինչև Բեռլին: Այդ հաղթանակը միայն խորհրդային հաղթանակ չէր: Դա նաև հայ ժողովրդինն է՝ ձեռք բերված իր արյան, իր զոհաբերության և իր տոկունության գնով:

Բայց Մայիսյան հաղթանակների մեջ մեզ՝ հայերիս համար ամենաառանցքայինը և խորհրդանշականը մեր պատմության, մշակույթի ու հոգևոր ինքնության կարևորագույն քաղաքներից մեկի՝ Շուշիի ազատագրումն էր, որը դարձավ ազգային վերածննդի խորհրդանիշ: Այն ապացուցեց, որ նույնիսկ ամենածանր պայմաններում հայ ժողովուրդը կարող է հաղթել, եթե ունի կամք, հավատ և միասնականություն: Եվ ինչպես Սերո Խանզադյանն էր նշել՝ «Շուշին հայկական ոգու բերդն է: Նրա ազատագրումը մեր ժողովրդի արժանապատվության վերադարձն էր»:

Նույն այդ օրերին ձևավորվեց Արցախի պաշտպանության բանակը, որը դարձավ հայկական անվտանգության ու պետական մտածողության կարևորագույն հենասյուներից մեկը:

Այս երեք հաղթանակները միասին մարմնավորում են **հայ ժողովրդի պատմական կերպարը՝ պայքարող, դիմադրող, վերածնվող ու հաղթող:**

Մայիսի 9-ը հիշեցնում է, որ մենք՝ հայերս, պատմության մեջ եղել ենք ոչ միայն զոհ, կրել ցեղասպանություն ու կորուստներ, այլ նաև եղել ենք կռվող, պայքարող, հաղթող և ստեղծող: Այդ օրը հայի ազգային ինքնագիտակցության վերածննդի օրն է, որովհետև հաղթանակ կերտող ու այն հիշող ժողովուրդը հոգեբանորեն այլ ժողովուրդ է՝ արժանապատիվ, ըմբոստ, պատրաստ պայքարի և դիմադրության, այլ ոչ թե վախերով առաջնորդվող ու ենթակա:

Իսկ ինչ ունենք այսօր՝ մեր հաղթանակների հերձված ու արժեզրկված պատկեր: 2020 թվականի պատերազմից հետո մայիսի 9-ի խորհուրդը ծանր հարված ստացավ: Այսօր արդեն ցավով ենք արձանագրում, որ Եռատոնի վերջին երկու հաղթանակները մնացին որպես պատմական ու քաղցր, բայց կորսված իրողություն: Շուշին կորսվեց, Արցախի պաշտպանության բանակը կազմաքանդվեց և այդ կազմաքանդման գործընթացը շարունակվում է նաև Հայաստանի Հանրապետությունում:

Առավել ցավոտ է նաև այն, որ մինչ օրս պետական մակարդակով հնչում են Շուշիի հայկականությունը

կասկածի տակ դնող թեզեր, ինչը վիրավորանք է ազգային արժանապատվությանը, ազգային հիշողության քարկոծում, որովհետև Շուշին պարզապես քաղաք չէ, այլ ազգային ինքնության մի մաս, հայկական քաղաքակրթական ու հոգևոր կենտրոն:

Այս ամենի ֆոնին առավել խորհրդանշական դարձավ նաև այն փաստը, որ ներկայիս վարչապետը չմասնակցեց մայիսի 9-ի տոնակատարություններին՝ գերադասելով զբաղվել նախընտրական քարոզարշավով: Եվ այստեղ խնդիրը բնավ արարողակարգային մասնակցությունը չէ: Խնդիրն արժեքային ընտրությունն է: Երբ համաշխարհային նշանակության հաղթանակի հիշատակը, քո ժողովրդի հարյուր հազարավոր զոհերի հիշողությունը, քո ազգի հերոսների սխրանքը երկրորդ պլան են մղվում քաղաքական շահերի և սեփական վերարտադրման ցանկության դիմաց, դա խոսում է ղեկավարի արժեհամակարգի մասին:

Ո՞ր ղեկավարն է նման կերպ վարվում: Սովորաբար այն ղեկավարը, որի համար պատմական հիշողությունը ոչ թե ազգային գոյության հենասյուն է, այլ քաղաքական խոչընդոտ: Որովհետև հաղթանակ հիշող ժողովրդին դժվար է դարձնել հնազանդ: Հերոսներին հարգող ժողովրդին դժվար է դարձնել պարտության հետ համակերպվող զանգված: Ազգային արժանապատվություն ունեցող հասարակությանը դժվար է կառավարել վախով, պարտության քարոզով և անընդհատ զիջումների գաղափարով:

Պատահական չէ, որ վերջին տարիներին հետևողականորեն թուլացվում է հերոսի գաղափարը: Պատմության դասագրքերից դուրս են մղվում ազգային ազատագրական պայքարի կարևոր դրվագները, նվազեցվում է հերոսականության դերը, արժեզրկվում են ազգային պայքարի գաղափարները: Սա սովորական կրթական փոփոխություն չէ: Սա հասարակության հոգեբանական վերափոխման գործընթաց է:

Հերոսի գաղափարը ցանկացած ազգի գոյության կարևորագույն հոգևոր հիմքերից մեկն է, ազգի բարոյական չափանիշը: Ազգը միայն ընդհանուր տարածքով կամ լեզվով միավորված մարդկանց հավաքականություն չէ: Ազգը նաև ընդհանուր հիշողություն, ընդհանուր արժեքներ և ընդհանուր իդեալներ ունեցող մարդկանց հոգևոր միասնություն է: Այդ միասնության կարևորագույն առանցքը հերոսն է:

Հասարակության անդամները կարող են իրար անձամբ չճանաչել, բայց նրանք ճանաչում են նույն հերոսներին՝ Անդրանիկին, Նժդեհին, Մոնթեին, Սարդարապատի մարտիկներին, Արցախյան պատերազմներում զոհված տղաներին: Նրանք կարող են երբեք իրար չտեսնել, բայց արդեն գաղափարապես կապված են միմյանց: Հենց հերոսների միջոցով է ձևավորվում ազգային միասնականության անտեսանելի հոգեբանական ցանցը:

Երբ հազարավոր մարդիկ հարգում են, գնահատում, արժևորում նույն հերոսին, նույն սխրանքը, նույն արժեքը, նրանք սկսում են իրար ընկալել որպես նույն հոգևոր աշխարհի ներկայացուցիչներ, նրանք դառնում են գաղափարակիցներ: Սա է ազգի իրական հիմքերից մեկը: Ոչ միայն սահմաններն ու պետական հաստատությունները, այլև մարդկանց միջև գոյություն ունեցող այդ գաղափարական կապը:

Հերոսը սովորեցնում է, որ կան արժեքներ, որոնք ավելի բարձր են անձնական շահից՝ հայրենիքը, ազատությունը, պատիվը, պատասխանատվությունը, սեփական ժողովրդի ապագան և եթե պետք է, կյանքը զոհելը այդ ամենի համար: Երբ երեխան մեծանում է հերոսի օրինակով, նա սովորում է պայքարել, չհամակերպվել անարդարության հետ, պատասխանատվություն վերցնել, պաշտպանել իր հայրենիքը, իր ինքնությունն ու արժանապատվությունը: Հենց այստեղ է սկսվում ազգային դաստիարակությունը: Եվ հենց այստեղ է, որ հերոսի գաղափարը վտանգավոր է դառնում իշխանությունների համար: Որովհետև հերոսի օրինակով մեծացած սերունդը սովորաբար ունի ինքնագիտակցություն և արժանապատվություն: Նա չի համակերպվում պարտության հետ որպես բնական վիճակ: Նա հարցեր է տալիս, պահանջում է պատասխանատվություն, դիմադրում է նվաստացմանը: Այդպիսի հասարակությանը դժվար է կառավարել:

Այդ պատճառով, երբ իշխանությունը հերոսներին դուրս է մղում դասագրքերից, նսեմացնում է ազգային պայքարի գաղափարը և հերոսականությունը ներկա-

յացնում որպես ավելորդ կամ հնացած երևույթ, իրականում նա ձևավորում է այլ տիպի հասարակություն՝ հարմարվող, լռող, վախեցած, չդիմադրող և հեշտ կառավարելի:

Եթե երեխան մանկուց չի լսում հայրենիքի, ինքնության, մղված պայքարի, հաղթանակի, հերոսության, զոհաբերության, և ազգային արժանապատվության մասին, ապա նրա մեջ աստիճանաբար թուլանում է նաև դիմադրելու կամքը: Եթե նոր սերունդներին ներկայացվում է միայն պարտությունը, զիջումը և հարմարվողականությունը, ապա աստիճանաբար ձևավորվում է **պարտվողի հոգեբանություն**: Այդպիսի հասարակությունը դադարում է պայքարել իր իրավունքների, անվտանգության և ապագայի համար: Նա սկսում է մտածել, որ պայքարն անիմաստ է, որ պետք է պարզապես հարմարվել ուժեղներին, որ հայրենիքի համար զոհվելը «իմաստ չունի», իսկ ազգային հիշողությունը, արժեհամակարգը՝ ավելորդ բեռ են:

Սա չափազանց վտանգավոր գործընթաց է, և սա այն է, ինչ հետևողականորեն իրագործում է մերօրյա իշխանությունը:

Պատմությունը ցույց է տվել, որ հերոս չունեցող ազգերը երկար չեն դիմանում: Հենց հերոսներն են դառնում ժողովրդի հոգեբանական ինքնապաշտպանության համակարգը: Նրանք հիշեցնում են, որ նույնիսկ ամենածանր պայմաններում ազգը կարող է հառնել:

Ազգային հիշողությունը ժողովրդի գոյության ողնաշարն է: Ազգը գոյատևում է ոչ միայն բանակով ու տնտեսությամբ, այլ նաև հիշողությամբ: Եթե ժողովուրդը դադարում է հարգել և հիշել իր հաղթանակները, իր նահատակներին, իր հերոսներին, ապա չի գիտակցում նաև իր ազգային պատկանելության, իր ինքնության կարևորությունը, դուրս է գալիս ազգային ու պատմական հիշողության շարունակական շղթայից և պատրաստում է իր իսկ կործանումը:

Հենց այդ պատճառով մայիսի 9-ի արժեզրկումը շատ ավելի խորը իմաստ ունի, քան կարող է թվալ առաջին հայացքից: Դա պարզապես տոնի կամ շքերթի նկատմամբ վերաբերմունք չէ, այլ ազգային հիշողության, հաղթանակի գաղափարի, ժողովրդի պատմական ինքնագիտակցության: Պատմական հաղթանակների հիշատակումը միայն անցյալի մասին չէ: Դա ներկայի և ապագայի մասին է: Ազգը հաղթանակների հիշողությունից ստանում է ուժ, ինքնավստահություն և գոյատևելու կամք:

Առավել վտանգավորն այն է, որ նույն իշխանությունը հասարակությունից կրկին վստահություն է պահանջում՝ այն դեպքում, երբ նրա կառավարման ընթացքում տեղի ունեցան 44-օրյա պատերազմը, Արցախի կորուստը, հայաթափումը, սահմանային լուրջ կորուստները, ադրբեջանական ներթափանցումները Հայաստանի սուվերեն տարածքներ, հասարակության խորը պառակտումը և ազգային արժեհամակարգի ճգնաժամը:

Երբ ղեկավարն իր քաղաքական ապագան ավելի բարձր է դասում, քան ժողովրդի պատմական հիշողությունը, չի կարևորում նրա կերտած հաղթանակները, չի հարգում զոհվածների հիշատակը, դա արդեն խոսում է պետական մտածողության ճգնաժամի մասին: Այդպիսի ղեկավարի համար ժողովուրդը պարզապես ընտրազանգված է, որն իրեն այսօր պետք է զուտ քվեի համար, իսկ վաղը պետք չէ: Ժողովուրդն ինքը պիտի քաջ գիտակցի, որ դառնում է կույր գործիք իրեն իր իսկ ինքնությունից կտրող այս իշխանության ձեռքին: Քանի որ ժողովուրդները կործանվում են ոչ միայն պատերազմների հետևանքով, այլև այն ժամանակ, երբ մոռանում են իրենց հերոսներին, իրենց հաղթանակներն ու իրենց պատմական ճանապարհը:

Մենք՝ հայերս, չափազանց բարձր գին ենք վճարել մեր գոյության համար, որպեսզի այսօր հրաժարվենք մեր ազգային հիշողությունից, չկարևորենք և արժեզրկենք մեր իսկ հաղթանակները, քանի որ դրանք են ապագայի մարտահրավերներին դիմակայելու մեր հոգևոր հենարանները, մեզ ուժ ու կորով հաղորդող և կրկին որպես հաղթական ու ուժեղ ազգ վերածնվելու հիմքերը:

Մայիսի 9-ը հենց այդ հիշողության օրն է: Եվ քանի դեռ հայ ժողովուրդը հիշում է իր հաղթանակները, իր հերոսներին ու իր պայքարը, նա դեռ ունի վերածնվելու ուժ և հարատևելու հնարավորություն:

Պարտության և ուրացման փաշինյանական քարոզարշավն ընդդեմ Հայաստանի Հանրապետության

Անի Մելքոնյան
Պատմաբան

Մայիսը հայ իրականության մեջ արժևորվում է որպես հաղթանակների ամիս, սակայն վերջին տարիների ընթացքում հաղթանակների ամիսը մի տեսակ «անիմաստ» է դարձել, որովհետև այդ հաղթանակների պտուղը՝ Արցախը և հայոց ռազմական տաղանդի փառքը համարվող Շուշին, թշնամու ձեռքում են:

Հայկական հաղթանակների մայիսից մնացել է միայն մայիսի 28-ը՝ Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման և մայիսյան հերոսամարտերի տոնը:

Սակայն, չենք խոսելու ո՛չ 1918-ի մայիսյան հերոսամարտերից, ո՛չ մեծ հայրենականի հաղթանակից, ո՛չ էլ Շուշիի ազատագրումից, քանի որ բազմիցս խոսել ենք այդ մասին: Այս անգամ խոսելու ենք վերջին երեք տասնամյակների ընթացքում ի վերջո հաղթողի հոգեբանություն ձեռք բերած հայ ժողովրդին, պարտվողի, թույլի, նվաստի ու ստրուկի հոգեբանություն պարտադրելու փաշինյանական քաղաքականությունից և դրա հետևանքներից:

Ինչպես արդեն բազմիցս ասել ենք, 2020 թ. սեպտեմբերի 27-ի 44-օրյա պատերազմում կանխամտածված պարտության, Արցախի հայաթափման, Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածքների օկուպացման, Ադրբեջանի պարտադրանքով սահմանադրության փոփոխության, եկեղեցու դեմ արշավների փաշինյանական վարչակազմի քաղաքականությունը Հայաստանը տոտալ կախման մեջ է գցել Ադրբեջանից ու Թուրքիայից:

Այսպես, Արցախի հայաթափումից ու փաշինյանական կեղծ «խաղաղության դարաշրջանի» մեկնարկից հետո՝ «Հայ-ադրբեջանական սահմանագծման ու սահմանազատման հարցերի հանձնաժողովի՝ մարտի 7-ի հանդիպումից երկու օր անց Բաքվի բռնապետական վարչակարգն ապօրինի ու վերջնագրային պահանջ է ներկայացրել Հայաստանի Հանրապետությանը՝ Ադրբեջանին հանձնելու Տավուշի մարզի չորս գյուղեր՝ որպես սահմանագծման ու սահմանազատման աշխատանքների շարունակման նախապայման»[1]- սա իհարկե հետևանք էր, Փաշինյանի ամեն ինչ զիջելու և ազգային ու պետական շահերն անձնական ու խմբային շահերին զոհաբերելու սկզբունքի, սակայն Տավուշի գյուղերից հատվածների և ռազմավարական նշանակության ճանապարհների ու դիրքերի հանձնումը վերջը չէր այն պարտվողական քաղաքականության, որը Նիկոլ Փաշինյանը փաթաթեց Հայաստանի վզին՝ 2018-ից սկսած:

Իհարկե, ի հակադրություն «տանք, որ պատերազմ չլինի» նիկոլական դավաճանական թեզի, 2024-ին



նույն Տավուշից թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի առաջնորդությամբ սկսվեց շարժում, որը ժողովրդի շրջանում կոչվեց «Սրբազան շարժում»: Այս շարժման մասին արդեն խոսել ենք, ուստի, մանրամասների մեջ չմտնելով, ասենք, որ մոտ մեկ տարի տևած շարժումը թեև չհասավ գլխավոր նպատակին՝ Նիկոլ Փաշինյանի հրաժարականին, սակայն լուրջ հարված հասցրեց նրա իշխանության հիմքերին, ուժգին ցնցելով այն, իսկ Փաշազադեի ուղղորդմամբ՝ հայոց եկեղեցու դեմ ծավալած պայքարը, էլ ավելի սասանեց փաշինյանական վարչակազմի դիրքերը և լուրջ հարված հասցրեց նրա՝ առանց այդ էլ գահավիժած վարկանիշին:

Այս համապատկերում էլ մոտեցանք համապետական ընտրություններին, որին մնացել են հաշված օրեր, և Փաշինյանն իր քարոզարշավն ամբողջությամբ կառուցեց Ադրբեջանի պարտադրած գաղափարների հիման վրա, նախ՝ համոզել հայ ժողովրդին, որ Արցախը «ադրբեջանական հող է», որի վկայությունն էլ մայիսի 11-ին Կոռնիձորում՝ Արցախից մի քանի կիլոմետր հեռավորության վրա՝ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունն էր «Արցախն ինչո՞վ է մերը եղել…: Այնտեղ դպրո՞ց ենք կառուցել, մանկապարտե՞զ ենք կառուցել, գործարա՞ն ենք կառուցել, ապրե՞լ ենք էնտեղ: Ինչո՞վ ա մերը եղել»,[2] իհարկե, բնական է, որ իր գիտակից կյանքի ամբողջ ընթացքում Արցախում նույնիսկ 1 լումայի ներդրում չկատարած Փաշինյանը չէր կարող իմանալ, թե ինչե՞ր են կառուցվել Արցախում և ովքե՞ր են կառուցել, բայց ասել, որ հայերն Արցախում չէին

ապրում, ծաղրանք է նույն հայերի նկատմամբ, եթե հայեր չէին ապրում Արցախում, ինչպե՞ս ամբողջ աշխարհի աչքի առաջ՝ ընդամենը 2023-ի սեպտեմբերին 120.000-ից ավելի հայեր բռնի կերպով գաղթեցին Արցախից:

Ծանոթ ձեռագիր է չէ՞, Հայոց ցեղասպանությունից հետո, Թուրքիան էլ էր պնդում, որ Օսմանյան կայսրության տարածքում հայեր չեն ապրել կամ գրեթե չեն ապրել:

Իհարկե, մտադրություն չունենք թուրք-ադրբեջանական դեսպանի դերը ստանձնած Փաշինյանին համոզել, որ իր պատմության սկզբից իսկ Արցախը միշտ եղել է հայկական ու հայաթափվել է միայն Փաշինյանի օրոք, ամեն դեպքում, փաշինյանական պատմակեղծարար վարչախմբի թակարդը ընկած մեր միամիտ հայրենակիցների հիշողությունը թարմացնելու համար՝ մի քանի փաստեր.

« Ժողովրդագրություն

- 1851 թ.՝ Արցախում արձանագրվել է 51.000 հայ բնակչություն, 203 բնակավայր
- 1886 թ.՝ 193.000 հայ բնակիչ, որից միայն Շուշիում՝ 20.000 հայ
- 1893/94 թթ.՝ 126.026 հայ բնակիչ (22.052 տուն)
- 1909 թ.՝ 190.000 բնակիչ, 226 գյուղ
- 1922 թ.՝ նույնիսկ պատերազմներից ու կոտորածներից հետո՝ 63.752 հայ բնակիչ
- 2015 թ.՝ 151.000 բնակիչ

Շուշիի հայ բնակչությունը

- 1851 թ.՝ 7.692
- 1886 թ.՝ 20.000
- 1893 թ.՝ 21.000
- 1897 թ.՝ 14.420
- 2009 թ.՝ 3.900
- 2020 թ.՝ 4.100

Կրթական կյանք

- 1893/94 թ.՝
  - 17 ծխական դպրոց
  - 46 ուսուցիչ
  - 1.686 աշակերտ
- 1909 թ.՝
  - 68 դպրոց
  - 102 ուսուցիչ
  - 4.586 աշակերտ

Սա պատահական ներկայություն չէ: Սա կազմակերպված հայկական կրթական համակարգ է:

Եկեղեցական և հոգևոր կյանք

- 1893 թ.՝ 215 գործող եկեղեցի
- 1909 թ.՝ 221 եկեղեցի
- 1914 թ.՝ 222 եկեղեցի ու վանք

Քահանաներ

- 1851 թ.՝ 214
- 1893 թ.՝ 229
- 1909 թ.՝ 219
- 1914 թ.՝ 180

Հարյուրավոր եկեղեցիներ և հարյուրավոր հոգևորականներ չեն հայտնվում դատարկ տարածքում:

Արցախի հայկական հաստատությունների շարունակականությունը

- 2004 թ.՝ 17 գործող եկեղեցի
- 2016 թ.՝ 49 գործող եկեղեցի
- 2018–2020 թթ.՝ 66 գործող եկեղեցի ու վանք

Պատմությունը դատում են փաստերով, ոչ թե հայտարարություններով:

Արցախում հայը ոչ միայն ապրել է, այլև կառուցել է, սովորեցրել է, աղոթել է, ստեղծել է համայնք, պահել է դպրոց, շենացրել է քաղաք ու գյուղ:

Ուստի, երբ հարց է հնչում՝ «ինչո՞վ էր Արցախը մերը», պատասխանը տրված է հենց վիճակագրու-

թյամբ. 190.000 հայ բնակչությամբ, 226 գյուղով, 221 եկեղեցով, 68 դպրոցով, 4.586 աշակերտով, 102 ուսուցիչով և Շուշիի տասնյակ հազարավոր հայ բնակչությամբ:

Երբ 1851-2020 թվականներին փաստաթղթերով արձանագրված են հարյուրավոր հայկական բնակավայրեր, մինչև 190.000 հայ բնակչություն, տասնյակ դպրոցներ, հազարավոր աշակերտներ, ուսուցիչներ և հարյուրավոր եկեղեցիներ, «Արցախը հայկական չի եղել» պնդումը պարզապես չի դիմանում թվերի ծանրությանը, քանզի պատմությունը գնահատվում է փաստերով, իսկ փաստերը հստակ են՝ Արցախը եղել է հայկական ոչ թե հայտարարություններով, այլ այնտեղ ապրած, ստեղծած ու իր ներկայությամբ այդ հողը հազարամյակներով հայկական պահած հայ ժողովրդի կյանքով»:[3]

Փաշինյանի քարոզարշավի հաջորդ մեխը՝ այսպես կոչված «իրական Հայաստանն» է, որը դեռևս ոչ բաց ենթատեքստով Փաշինյանը համարում է «արևմտյան Ադրբեջան»: Դրա վկայությունը նրա ակնարկն է այն մասին, որ «Ժամանակակից Հայաստանի տարածքում եղել են պետություններ, և երբեք չի եղել այնպես, որ այս տարածքում պետություն գոյություն չունենա: Այստեղ պետություններ եղել են, բայց ոչ հայկական, և դա տևել է 1000 տարի…նախկինում Հայաստանում երբեք 90 տոկոս հայ չի եղել» [4]- թե ի՞նչ է ուզում սրանով ասել ՀՀ այսպես կոչված վարչապետը, մի փոքր մանրամասնենք:

Նախ սկսենք նրանից, որ հայկական պետականությունը, նույնիսկ առանց կենտրոնական իշխանության, գոյություն է ունեցել մինչև 1236 թվականը, այսինքն՝ խոսքը 632 տարվա մասին է: Հետևաբար, Փաշինյանի նշած «1000 տարին» որևէ աղերս չունի իրականության հետ: Բացի այդ, Փաշինյանի մատնանշած ոչ հայկական պետություններում էթնիկ ազգային կազմը հայերն էին:

Ինչ վերաբերում է ՀՀ ժամանակակից տարածքին, Փաշինյանն ակնհայտորեն սխալվում է՝ պնդելով, թե այս տարածքում հայերը երբեք 90% չեն կազմել: Հայոց պատմությունից թեկուզ փոքր-ինչ տեղեկացված մարդը շատ լավ գիտի, որ առնվազն մինչև 1604 թվականը՝ Շահ Աբասի իրականացրած բռնագաղթը, երբ Արևելյան Հայաստանի մի մասի բնակչությունը զանգվածաբար տեղափոխվեց Պարսկաստան (ավելի քան 300 հազար հայ), ժամանակակից Հայաստանի Հանրապետության տարածքում հայերը կազմում էին բնակչության 90%-ը և ավելի:

Ավելին, ոչ վաղ անցյալում՝ Խորհրդային Հայաստանում անցկացված մարդահամարների տվյալներով ևս, հանրապետության բնակչության ավելի քան 90%-ը հայեր էին:

Այս ամենից բացի, նշենք, որ ՀՀ ներկայիս տարածքում նույնիսկ առանց կենտրոնական իշխանության գոյության հայկական պետական կազմավորումներ գրեթե միշտ գոյություն ունեցել են.

Այսպես.

«1. ՀՀ ներկայիս տարածքի հիմնական՝ հարավային, մասում 998-1084 թվականներին գոյություն է ունեցել ներկայիս Սյունիքի մարզի հիմնական մասն ընդգրկող **Սյունիքի թագավորությունը**,

2. Նախորդ կետում նշված տարածքը 1084-1261 թվականներին անձնական ունիայով կցված է եղել Արցախը և Ուտիքի որոշ մասեր ընդգրկող **Խաչենի թագավորությանը**,

3. ՀՀ ներկայիս տարածքի կրկին հիմնական՝ հյուսիսային, մասում 978-1261 թվականներին գոյություն է ունեցել ներկայիս Լոռու և Տավուշի մարզերն ընդգրկող Լոռու թագավորությունը,

4. 1261-1495 թվականներին ՀՀ ներկայիս տարածքում իշխանություն է իրականացրել Օրբելյանների իշխանությունը, ընդ որում, **Օրբելյանները** կրել են «իշխանաց իշխան» կոչումը և, մոնղոլների իշխանության անկման ու հետագայում թուրքմենների թույլ տիրապետության պայմաններում, հաճախ եղել են փաստացի անկախ,

5. ՀՀ ներկայիս տարածքի հիմնական՝ հարավային, մասում 1495-1828 թվականներին գործել են **Սյունիքի մելիքները**, որոնք 1722-1735 թվականներին հասել են նույնիսկ լիարժեք ինքնիշխան կարգավիճակի,

6. ՀՀ ներկայիս տարածքում գործող որոշ **Քաղաքներում** հայերն ունեցել են քաղաքային լայն ինքնավարություն՝ Երևան, Մեղրի, Ղափան, Ագուլիս և այլն,

7. ՀՀ ներկայիս տարածքում 1045-1918 թվականներին գործել է **Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին**, որն իրականացրել է պետությանը բնորոշ պետական կառավարման որոշ տարրեր՝ տեղական ինքնակառավարում, տեղական դատավարություն և, մասնակի, տեղական ֆինանսների տնօրինում: Նույն ՀԱՄԵ-ն երբեմն իրականացրել է նաև արտաքին գործառույթներ՝ կարգավորելով հայ ժողովրդի հարաբերությունները թուրքմեն տիրակալների, օսմանյան սուլթանների և պարսկական շահերի հետ, իսկ երբեմն նաև այն ղեկավարել ու տոն է տվել ազատագրական պայքարին՝ կապեր հաստատելով եվրոպական երկրների հետ»:[5]

Համեմատության համար ասենք, որ նշյալ ժամանակաշրջանում, ոչ Քարթլիի, ոչ Կախեթիի և ոչ էլ Իմերեթիայի թագավորությունները, անկախ պետություններ չեն եղել, բոլորն էլ այս կամ այն կերպ ենթակա են եղել Պարսկաստանին, Օսմանյան կայսրությանը, կայսերական Ռուսաստանին կամ դրանց նախորդած մոնղոլներին ու սելջուկներին:

Բայց այսօր դժվար թե որևէ վրացի պաշտոնյա կասկածի տակ դնի Վրաստանի ժողովրդի տեղաբնիկությունն ու սեփական տարածքում թեկուզ կախյալ իշխանություններ ունենալու փաստը:

Հետևաբար Փաշինյանի այս քարոզը նշանակում է, որ ժամանակակից Հայաստանի Հանրապետությունը, իբր չի եղել հայ ժողովրդի հայրենիքը և, եթե որևէ մեկը համարձակվի հիշել Արցախի ու հայ ժողովրդի մյուս հաղթանակների մասին, ապա այս տարածքի «բնիկները» կարող են «վերադառնալ»:

Իհարկե, ադրբեջանական շահերի անխոնջ պաշտպան Փաշինյանը «մոռացել է», որ ոչ թե 1000, այլ 5000 տարի այս տարածաշրջանում Ադրբեջան պետություն գոյություն չի ունեցել, և առհասարակ Ադրբեջան պետությունն արհեստականորեն ստեղծվել է 1918-ին, իսկ ադրբեջանցի եզրույթը հորինվել է միայն 1936-ին Ստալինի հրահանգով:

Հետևաբար հայ ժողովրդին, ոչ միայն պարտվող, այլ նաև հայրենիք չունեցող, «եկվոր» ու «քոչվոր» ներկայացնող փաշինյանական քարոզարշավը, ոչ թե նախընտրական սովորական քարոզարշավ է, այլ հստակ հաղորդագրություն, որ «1000 տարի հայկական պետություն գոյություն չի ունեցել» և իր առաջարկած «խաղաղության դարաշրջանում» էլ «ուրիշի հողերի վրա» հայկական պետություն չի լինելու, հայ ժողովուրդն էլ փոքրամասնություն է կազմելու:

Շուշին 1850-ական թվականներին

Նիկոլ Փաշինյանի քարոզարշավը Հայաստանի Հանրապետության գոյության դեմ է, ոչ թե հանուն դրա շարունակականության ու հզորացման, որն ուղեկցվում է հայ ժողովրդի նկատմամբ ատելության խոսքով ու «ինչո՞ւ չեք զոհվել» հռետորաբանությամբ, ինչը յուրովի բացահայտում է փաշինյանական վարչակազմի տեսլականը հայ ժողովրդի ապագայի վերաբերյալ, այսինքն՝ մեծամասնությունը պետք է զոհվի, որպեսզի այս տարածքում, որը կոլաբորացիոնիստ վարչակազմը համարում է «արևմտյան Ադրբեջան», հայ ժողովուրդը 90% չկազմի:

Եվ, հունիսի 7-ին ընտրությունը հայ ժողովրդինն է, լինե՞լ Փաշինյանի պատկերացրած «արևմտյան Ադրբեջանի» փոքրամասնություն կազմող, «երբեք պետություն ու հայրենիք չունեցած» հայախոս էթնիկ խումբ, թե՞ տեր կանգնել սեփական պետությանն ու հայրենիքին՝ դնելով հայ ժողովրդի մեծ նպատակի՝ Ազատ Անկախ և Միացյալ Հայաստանի ստեղծման հիմքը:

Դարձյալ կրկնում ենք, որ հայ ժողովուրդն ինքը պետք է ընտրի վահանո՞վ, թե՞ վահանի վրա, որովհետև երրորդ տարբերակ պարզապես գոյություն չունի: ■

Ծանոթագրություններ

1. https://www.aravot.am/2024/03/12/1405328/
2. https://civilnet.am/hy/news/1011783
3. https://azg.am/news/%D5%AF%D5%A1%D6%80%D6%87%D5%B8%D6%80%D5%A8/%D5%A1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D5%A8-%D5%B4%D5%A5%D6%80%D5%A8-%D5%B9%D5%AB-%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AC-%D5%BA%D5%B6%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4%D5%A8-%D5%A2%D5%A1%D5%AD%D5%BE%D5%B8%D6%82%D5%B4/4.
4. https://news.am/hy/video/1036497
5. https://past.am/?p=442428&l=am#gsc.tab=0

Բաքվի թաքնված օրակարգը. ինչպե՞ս է ադրբեջանական շանտաժը թիրախավորում հայ ընտրողին

Լիանա Պետրոսյան
Պատմ. գիտ. թեկնածու, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասիստենտ, դասախոս

Հունիսի 7-ին սպասվող խորհրդարանական ընտրությունները սովորական քաղաքական հերթափոխ կամ պարզապես պատգամավորական մանդատների բաշխման գործընթաց չեն: Դրանք, առանց չափազանցության, ունեն էկզիստենցիալ (գոյաբանական) նշանակություն և կանխորոշելու են Հայաստանի զարգացման վեկտորը տասնամյակների համար:

Սպասվող խորհրդարանական ընտրությունների համատեքստում Հայաստանի ինքնիշխանության և սուվերենության պահպանման հարցը դառնում է այն հիմնարար սահմանագիծը, որով չափվելու է պետության ապագա կենսունակությունը: Այս ընտրական գործընթացը դուրս է գալիս սովորական ներքաղաքական մրցակցության շրջանակներից և վերածվում է պատմական մի հանգրվանի, որտեղ տրվելու է ամենագլխավոր հարցի պատասխանը. արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունը կպահպանի սեփական ճակատագիրն ինքնուրույն տնօրինելու իրավունքը, թե՞ աստիճանաբար կվերածվի արտաքին աշխարհաքաղաքական կենտրոնների և ագրեսիվ հարևանների կամքն ու թելադրանքը կատարող, սեփական սուբյեկտայնությունից զուրկ կիսագաղութային միավորի:

Այս ընտրության կարևորությունն այն է, որ քաղաքացու քվեն ուղղակիորեն կանխորոշելու է ձևավորվելիք նոր կառավարության դիմադրողականության աստիճանը: Հայաստանի առջև ծառացած արտաքին մարտահրավերները, մասնավորապես՝ Բաքվի կողմից հնչող բացահայտ պահանջները՝ ուղղված ՀՀ Սահմանադրության փոփոխությանը, պետականության հիմնարար իրավական ակտերի վերանայմանը կամ ազգային ինքնության առանցքային տարրերից հրաժարվելուն, պահանջում են ամուր լեգիտիմություն և կամային որակներ ունեցող իշխանություն: Ընտրողի որոշումից է կախված՝ նոր ձևավորվելիք քաղաքական ղեկավարությունը կունենա՞ բավարար ներքին լեգիտիմություն և սկզբունքայնություն՝ միջազգային հարթակներում և երկկողմ բանակցություններում այդ պարտադրանքներին դիմակայելու համար, թե՞ կընտրի լիակատար հարմարվողականության ու միակողմանի զիջումների ճանապարհը:

Այսպիսով, սուվերենության պահպանման հարցը դառնում է ընտրողների համար գլխավոր ջրբաժանը: Քվեարկության արդյունքները ցույց կտան հասարակության հավաքական կամքը՝ պատրաստ է արդյոք երկիրը կրել ինքնիշխանության պահպանման համար անհրաժեշտ ծանր պատասխանատվությունը, թե՞ նախընտրելու է անվտանգության թվացյալ պատրանքը՝

սեփական սուվերեն իրավունքները քայլ առ քայլ արտաքին ուժերին պատվիրակելու գնով:

Հայաստանի արտաքին քաղաքական վեկտորի հստակեցումն ու անվտանգային նոր համակարգի ձևավորումը հունիսի 7-ի ընտրությունների ամենաօրակարգային և աշխարհաքաղաքական նշանակության հարցերից են: Այսօր պետությունը հայտնվել է մի բարդ անցումային ու ռազմավարական խաչմերուկում, որտեղ տասնամյակներով գործած հին անվտանգային ճարտարապետությունը դե ֆակտո խաթարված է և չի սպասարկում Հայաստանի կենսական շահերը: Միևնույն ժամանակ, այլընտրանքային նոր անվտանգային մոդելը՝ ուղղված դեպի Արևմուտք, Եվրոպական միություն և արևմտյան ու տարածաշրջանային առանցքային երկրների հետ երկկողմ ռազմաքաղաքական նոր դաշինքների կերտմանը, դեռևս գտնվում է սաղմնային, վերջնականապես չձևավորված փուլում, գերակշռում է որպես ցանկություն և իրական երաշխիքներ չի պարունակում:

Այս իրավիճակում ընտրությունների կարևորությունն այն է, որ դրանց արդյունքներով է կանխորոշվելու, թե աշխարհաքաղաքական որ բևեռի հետ է Երևանը կապելու իր անվտանգային ապագան: Ընտրողի քվեն տալու է հստակ ուղղություն. արդյո՞ք Հայաստանը կշարունակի արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացիայի (բազմավեկտորայնու-

թյան) կուրսը, կամրապնդի՞ հարաբերությունները նոր գործընկերների հետ և կխորացնի՞ մերձեցումը եվրոպական ընտանիքին, թե՞ երկրում կհաղթանակեն այնպիսի ուժեր, որոնք կտրուկ կփոխեն ընթացքը:

Մյուս կողմից, Հայաստանի ներքին կայունության ապահովումն ու հանրային համերաշխության վերականգնումը հունիսի 7-ի ընտրությունների ամենակենսական ներքաղաքական հրամայականն է: Տարիներ շարունակվող ներքաղաքական ճգնաժամը, հասարակության ծայրահեղ բևեռացումը, «սև ու սպիտակի» կործանարար բաժանումն ու փոխադարձ ատելության քարոզը գրեթե ամբողջությամբ սպառել են պետության ներքին կենսական ու դիմադրողական ռեսուրսները: Այս պառակտված վիճակը թուլացրել է հանրային կապերն ու վստահությունը պետական ինստիտուտների հանդեպ՝ Հայաստանը ներսից դարձնելով չափազանց խոցելի արտաքին ցանկացած ցնցման նկատմամբ:

Այս համատեքստում խորհրդարանական ընտրությունները պետք է հանդիսանան այն լեգիտիմ հանգրվանը, որտեղ կվերագործարկվի և կառողջացվի պետական ու քաղաքական համակարգը: Ընտրությունների արդյունքներով և հանրության կողմից դրանց ընդունելիության աստիճանով է պայմանավորված, թե ինչպիսի ներքին միջավայր կձևավորվի երկրում հունիսի 7-ից հետո: Եթե ընտրական գործընթացն անցնի արդար ու վստահելի մթնոլորտում, ապա ձևավորված նոր քաղաքական դասավորությունը հնարավորություն կտա հանդարտեցնելու ներքին կրքերը, կայունացնելու քաղաքական դաշտը և հիմքեր ստեղծելու հանրային երկխոսության ու համերաշխության համար:

Հակառակ դեպքում, եթե ընտրությունների արդյունքները չարժանանան հանրային լայն վստահության կամ օգտագործվեն բևեռացումն էլ ավելի խորացնելու համար, երկիրը կարող է գլորվել ներքին անկայունության, քաղաքական նոր ճգնաժամերի ու բախումների շատ ավելի խորը անդունդ: Արտաքին լրջագույն սպառնալիքների և ռազմական շանտաժի ներկայիս պայմաններում նման ներքին թուլացումն ու պառակտումը կունենան պարզապես աղետալի հետևանքներ՝ կազմալուծելով պետության դիմադրողականության վերջին օջախները և ճանապարհ հարթելով նոր արտաքին կորուստների համար: Սա նշանակում է, որ հունիսի 7-ին հայ ընտրողը քվեարկում է ոչ միայն հանուն այս կամ այն ուժի, այլև հանուն սեփական պետության ներքին ամրության ու խաղաղ համակեցության:

Ի վերջո, հունիսի 7-ի քվեարկությունը հայ ընտրողի համար դառնում է անվտանգության ապահովման հայեցակարգի ընտրություն: Դա որոշում կլինի այն մասին, թե արդյոք երկիրը կգնա՞ սեփական անվտանգային միջավայրն ինքնուրույն դիվերսիֆիկացնելու և միջազգային նոր, ավելի հուսալի երաշխիքներ փնտրելու դժվարին, բայց սուվերեն ճանապարհով, թե՞ կփորձի անվտանգության երաշխիքներ ստանալ կրկին հպատակվելու և սեփական արտաքին քաղաքական ինքնուրույնությունը զոհաբերելու գնով: Ըստ էության, խորհրդարանական ընտրությունները Հայաստանի համար մեծիմասամբ ունեն նաև աշխարհաքաղաքական նշանակություն, և Ադրբեջանի (ինչպես նաև տարածաշրջանային այլ խաղացողների) ազդեցության փորձերը կրում են խիստ նպատակային, երբեմն քողարկված, բայց սուր բնույթ: Բաքվի ռազմավարությունը հիմնված չէ ուղղակի ընտրական գործընթացների, դրանց ելքերի, կամ հավանական ընտրակեղծիքների վրա. նրանք աշխատում են հայաստանյան հասարակության հոգեբանության, վախերի և ներքաղաքական բևեռացման վրա:

Ադրբեջանի կողմից կիրառվող «պատերազմի վախի» մանիպուլյացիան, որը հայտնի է նաև որպես ռազմական շանտաժ, ժամանակակից հիբրիդային պատերազմների ամենաազդեցիկ և հոգեբանորեն կործանարար գործիքներից է: Այս մեխանիզմի էությունն այն է, որ Բաքուն ոչ թե պարզապես ռազմական սպառնալիք է ստեղծում սահմաններին, այլև այդ սպառնալիքը նպատակաուղղված կերպով ներարկում է Հայաստանի ներքաղաքական դիսկուրս՝ այն դարձնելով ընտրարշավի հիմնական շարժիչ ուժը:

Այս ռազմավարության կիրառման դինամիկան ուղիղ համեմատական է հայաստանյան քաղաքական դաշտի զարգացումներին: Եթե ընտրարշավի ընթացքում որևէ ընդդիմադիր ուժ փորձում է հանդես գալ ազգային շահերի պաշտպանության ավելի կոշտ, անզիջում կամ Բաքվի նվաճողական նկրտումներին հակասող դիրքերից, Ադրբեջանն անմիջապես գործի է դնում իր հարձակողական հռետորաբանությունը: Ռազմական հռետորաբանության այսպիսի արհեստական ակտիվացմամբ Բաքուն հստակ ազդակ է հղում հանրությանը, թե որոնք են իր համար «կարմիր գծերը» և ինչպիսի վարքագիծ է ակնկալում հայկական կողմից:

Որպես հետևանք՝ ադրբեջանական կողմը հայ ընտրողին կանգնեցնում է ծայրահեղ բարդ և արհեստականորեն ստեղծված հոգեբանական երկընտրանքի առջև: Քաղաքացուն պարտադրվում է մի բանաձև, ըստ որի՝ քվեարկությունը ոչ թե երկրի ներքին զարգացման, տնտեսական ծրագրերի կամ ժողովրդավարական ինստիտուտների ընտրություն է, այլ ուղղակի ընտրություն պատերազմի և խաղաղության միջև: Ընտրողին ներշնչվում է այն միտքը, որ

Բաքվի պահանջներին հարմարվելը կամ զիջողական ուժերին ձայն տալը կանխելու է նոր արյունահեղությունը, մինչդեռ սեփական իրավունքների պաշտպանության մասին խոսող ուժերին սատարելը հավասարեցվում է նոր պատերազմ հրահրելուն:

Այս երևույթն իր բնույթով ուղղակի հոգեբանական ահաբեկչություն է ողջ հասարակության նկատմամբ: Օգտագործելով նախորդ պատերազմների թողած ծանր հուշերն ու հավաքական տրավմաները՝ Ադրբեջանը փորձում է կաթվածահար անել հայ ընտրողի ռացիոնալ մտածողությունը, սերմանել համատարած վախ ու անպաշտպանվածության զգացում և, ի վերջո, ստիպել, որ քաղաքացին ընտրություն կատարի ոչ թե ազատ կամքով, այլ սեփական կյանքի ու պետության գոյության հանդեպ ունեցած բնազդային վախից դրդված: Սրանով Բաքուն նպատակ ունի խեղաթյուրել հայաստանյան ընտրությունների բուն էությունը՝ դրանք ինքնիշխան գործընթացից վերածելով արտաքին պարտադրանքի ձևավորման գործիքի:

Ադրբեջանի կողմից նախապայմանների առաջադրումը և «խաղաղության պայմանագրի» գործընթացի շահարկումը հայաստանյան խորհրդարանական ընտրությունների վրա արտաքին քաղաքական ճնշում գործադրելու երկրորդ առանցքային ուղղությունն է: Այս մակարդակում Բաքվի հիմնական թիրախը Հայաստանի ինքնիշխան իրավական ու քաղաքական օրակարգն է, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությունը փոխելու կամ ինքնության հիմնարար տարրերից հրաժարվելու անդադար հնչող պահանջները: Այս նախապայմանները ոչ թե պարզապես դիվանագիտական բանակցությունների մաս են, այլև նպատակաուղղված կերպով ներարկվում են Հայաստանի ներքաղաքական դաշտ՝ որպես հասարակությանը պառակտող և կրքերը բորբոքող լրացուցիչ գործոն:

Այս ռազմավարության կիրառման մեխանիզմը կառուցված է հստակ հաշվարկված քաղաքական թայմինգի (ժամանակացույցի) վրա: Իլհամ Ալիևի և ադրբեջանական պաշտոնական քարոզչամեքենայի հայտարարությունները պատահական չեն հնչում. դրանք սովորաբար սինխրոնացվում են (համընկնում են) հայաստանյան նախընտրական թեժացումների, քաղաքական ուժերի հանրահավաքների կամ հանրային քննարկումների գագաթնակետերի հետ: Բաքուն միտումնավոր ստեղծում է մի իրավիճակ, որտեղ հայկական կողմի քաղաքական դիսկուրսը ստիպված է լինում ոչ թե ինքնուրույն օրակարգեր ձևավորել, այլ ընդամենը արձագանքել Ադրբեջանից հնչող պահանջներին: Սրանով փորձ է արվում հանրությանը ցուցադրել, թե իբր Հայաստանի ապագան, ներքին կայունությունն ու անվտանգությունը կախված են ոչ թե Երևանում կայացվող որոշումներից կամ ընտրողի քվեից, այլ բացառապես Բաքվի բարեհաճությունից և նրանց պայմանները ընդունելու պատրաստակամությունից:

Այս ամենի հիմքում ընկած սուր և վտանգավոր միտքն այն է, որ Ադրբեջանը փորձում է հայաստանյան խորհրդարանական ընտրությունները դե ֆակտո վերածել մի անօրինական «հանրաքվեի»՝ հանուն Բաքվի պայմաններով խաղաղության: Նմանատիպ տեղեկատվական-քաղաքական ճնշմամբ ընտրություններից լիովին դուրս են մղվում, ջնջվում ու արժեզրկվում են պետության զարգացման համար կենսական նշանակություն ունեցող ներքին հարցերը՝ տնտեսական ռազմավարությունները, սոցիալական բարեփոխումները, կրթությունը, արդարադատությունն ու ժողովրդավարական ինստիտուտների կայացումը: Հայ ընտրողին պարտադրվում է միակողմանի մի օրակարգ, որտեղ քաղաքացին քվեարկում է ոչ թե հանուն սեփական պետության զարգացման տեսլականի, այլ հանուն այն բանի, թե որ քաղաքական ուժն ավելի «անցավ» կառավարելի կլինի արտաքին պարտադրանքների ու նախապայմանների այս հորձանուտում:

Հայաստանում սպասվող խորհրդարանական ընտրությունների համատեքստում Ադրբեջանի կողմից իրականացվող հիբրիդային պատերազմն ու տեղեկատվական մանիպուլյացիաները ձեռք են բերել անսնախադեպ ծավալներ՝ դառնալով ներքաղաքական գործընթացների վրա ազդելու առանցքային գործիք: Միջազգային հետազոտական կենտրոնների, ինչպես նաև ԵԽԽՎ նախընտրական պատվիրակությունների զեկույցների համաձայն՝ Հայաստանի մեդիատիրույթում արտաքին տեղեկատվական միջամտությունը կտրուկ աճել է: Ադրբեջանական հատուկ ծառայությունները, կեղծ օգտատերերի, բոտերի և տրոլների կազմակերպված ցանցերը թիրախավորել են հայկական սոցիալական հարթակները՝ փորձելով կառավարել հանրային տրամադրությունները հենց ընտրարշավի փուլում:

Այս ամենի հետևում թաքնված սուր և հեռագնա միտքը հետևյալն է. Ադրբեջանը փորձում է հայ ընտրողի ենթագիտակցության մեջ ներարկել կործանարար մի կանխավարկած, թե «ով էլ գա իշխանության, մեկ է՝ ոչինչ չի փոխվելու, ամեն ինչ վաղուց որոշված է մեծ խաղացողների կողմից»: Սա քաղաքական նիհիլիզմի և ապատիայի (անտարբերության) արհեստական հրահրում է: Կոտրելով սեփական քվեով իրավիճակ փոխելու քաղաքացու հավատը՝ Բաքուն ձգտում է ապահովել ընտրություններին հանրության ծայրահեղ ցածր մասնակցությունը: Իսկ պասիվ, ան-

տարբեր և ընտրություններին չմասնակցող հասարակությունը զրկվում է դիմադրողականությունից՝ հնարավորություն տալով արտաքին ուժերին ընտրական գործընթացի ավարտից հետո շատ ավելի հեշտությամբ պարտադրել սեփական կամքը:

Հայաստանի ներքաղաքական բևեռացման խորացումը և հանրության պառակտումը ընտրական գործընթացների վրա ազդելու Ադրբեջանի ամենահին ու փորձված ռազմավարության՝ «բաժանիր, որ տիրես» (divide and conquer) սկզբունքի արտացոլումն են: Բաքվի աշխարհաքաղաքական հաշվարկներում համախմբումը, ներքին համերաշխությամբ օժտված և կայուն Հայաստանը ներկայացնում է լրջագույն խոչընդոտ, քանի որ միասնական հասարակությունն օժտված է բարձր դիմադրողականությամբ: Ուստի, նախընտրական շրջանում ադրբեջանական կողմի ողջ հռետորաբանությունն ու տեղեկատվական քաղաքականությունը նպատակաուղղվում են հայաստանյան հասարակության ներսում առկա ճեղքվածքներն ու տարակարծությունները բացարձակ թշնամանքի վերածելուն:

Այս ազդեցության մեխանիզմը կառուցված է ճկուն և պրագմատիկ մանիպուլյացիաների վրա, որտեղ Բաքուն թիրախավորում է թե՛ գործող իշխանությանը, թե՛ ընդդիմադիր ճամբարին՝ առաջնորդվելով բացառապես տվյալ պահի նպատակահարմարությամբ: Երբ անհրաժեշտ է թուլացնել ընդդիմության դիրքերը կամ հանրությանը ցույց տալ, որ ներկայիս կուրսն այլընտրանք չունի, ադրբեջանական պաշտոնական խողովակները կարող են յուրօրինակ «փրկօղակ» նետել իշխանությանը՝ ակնարկելով, որ նրանց հետ հնարավոր է երկխոսել կամ պայմանավորվածություններ ձեռք բերել:

Փաստացի, Ադրբեջանը հմտորեն խաղում է հայկական քաղաքական դաշտի և հանրային հոգեբանության ամենացավոտ, զգայուն լարերի վրա: Ադրբեջանի կողմից Հայաստանի նախընտրական գործընթացներին միջամտելու բոլոր վերը նշված տակտիկական քայլերը՝ ռազմական շանտաժը, սահմանադրական նախապայմանները, տեղեկատվական հիբրիդային գրոհներն ու ներքին պառակտման հրահրումը, ի վերջո, հանգում են մեկ ընդհանուր ռազմավարական գերնպատակի: Բաքվի վերջնական խնդիրը ոչ թե Հայաստանում այս կամ այն կոնկրետ քաղաքական ուժի հաղթանակն ապահովելն է, այլ հունիսի 7-ի ընտրությունների հետևանքը ինստիտուցիոնալ առումով կաթվածահար, խոցելի և կառավարելի քաղաքական համակարգի ձևավորմանը հասնելը:

Այս ռազմավարության ընդհանրական վերլուծությունը ցույց է տալիս, որ Ադրբեջանը ձգտում է ստանալ մի այնպիսի նոր իշխանություն, որն օժտված կլինի հետևյալ երեք կործանարար հատկանիշներով.

- Իշխանություն, որը չունի պետության ներսում հաստատուն հենարան և սեփական ուժերին վստահելու հնարավորություն:
- Ընտրողների ցածր մասնակցության և հասարակական համատարած անտարբերության հետևանքով

ձևավորված մի մարմին, որի ներկայացուցչականությունը հանրության աչքում կլինի կասկածելի:
- Քաղաքական դաշտի ծայրահեղ թշնամանքի պատճառով սեփական էներգիան ոչ թե արտաքին մարտահրավերներին, այլ ներքին «հաշվեհարդարներին» ու ներիշխանական ճգնաժամերին ուղղող կառավարություն:

Ադրբեջանը հիանալի գիտակցում է, որ ներքուստ կոտրված պետությունը չի կարող արդյունավետ դիմադրություն ցույց տալ դիվանագիտական սեղանի շուրջ կամ ռազմական բախման ժամանակ: Ուստի, ընտրությունների ավարտը Բաքվի համար դիտվում է ոչ թե որպես կայունության սկիզբ, այլ որպես հարմար ստարտային կետ՝ հետընտրական շրջանում իր առավելագույն ճնշումները նոր թափով շարունակելու, Հայաստանին աշխարհաքաղաքական կապիտուլյացիայի մղելու և նորանոր կենսական զիջումներ կորզելու համար:

Հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունները Հայաստանի համար լրջագույն ժողովրդավարական թեստ են, որի արդյունքներն ու անցկացման որակն ուղղակիորեն ազդելու են պետության միջազգային վարկանիշի և դիվանագիտական դիրքերի վրա: Այս համատեքստում ընտրությունների կարևորությունն ազատ, արդար, թափանցիկ և միջազգային չափանիշներին համապատասխան ընտրական գործընթացի ապահովումն է, ինչը կվերահաստատի Հայաստանի հավատարմությունը համամարդկային արժեքներին:

Ուստի պետք է գիտակցել, որ հունիսի 7-ի ընտրությունները դուրս են սովորական քաղաքական հերթափոխի կամ պարզապես իշխանություն ձևավորելու տրամաբանությունից: Սա Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական և կենսունակ պետության գոյության իրավունքն աշխարհում վերահաստատելու կամ այդ իրավունքը սեփական ձեռքով զիջելու պատմական ընտրություն է: Սա ջրբաժան է արտաքին պարտադրանքների առջև անձնատվության գնալու, պատրանքային ու փխրուն խաղաղություն մուրալու և սեփական ուժերին վստահելու, ներքին ու արտաքին անվտանգությունն ամրապնդելու ու արժանապատիվ ապագա կերտելու ծանր, բայց միակ հեռանկարային ճանապարհի միջև: ■

Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանում և հունիսի 7-ի ընտրությունների աշխարհաքաղաքականությունը

Նարե Գևորգյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս

2026 թվականի հունիսի 7-ին Հայաստանում կայանալիք խորհրդարանական ընտրությունները դուրս են գալիս սովորական ներքաղաքական մրցակցության շրջանակներից: Տարածաշրջանային անվտանգության և արտաքին կողմնորոշման համատեքստում այս ընտրությունները շատ վերլուծաբանների կողմից որակվում են որպես բախտորոշ հանրաքվե՝ երկրի ապագա աշխարհաքաղաքական վեկտորի և «խաղաղության օրակարգի» կենսունակության վերաբերյալ: Այս բարդ շախմատային տախտակի վրա ամենաուշադիր և շահագրգիռ դիտորդներից մեկը Թուրքիան է:

Անկարան, որն ավանդաբար Հարավային Կովկասում հանդես է գալիս Ադրբեջանի հետ ռազմավարական տանդեմով, վերջին մեկ տարում որդեգրել է հաշվենկատ, պրագմատիկ և միևնույն ժամանակ խիստ պայմանավորված քաղաքականություն Երևանի նկատմամբ: Ուղիղ առևտրի մեկնարկից մինչև բարձրաստիճան դիվանագիտական շփումներ՝ Թուրքիան փորձում է օգտագործել Հայաստանի ներկայիս խոցելիություններն ու արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման ձգտումները սեփական ազդեցությունն ընդլայնելու և տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերը թուլացնելու համար: Հունիսի 7-ի ընտրությունները Թուրքիայի համար այն ջրբաժանն են, որոնք կամ կկապիտալիզացնեն վերջին տարիների դիվանագիտական ներդրումները, կամ տարածաշրջանը կվերադարձնեն նախկին իրավիճակին, երբ Հայաստանի իշխանությունները խիստ զգուշավորություն էին դրսևորում այդ հարաբերություններում հայության ռազմավարական շահերը չվտանգելու հարցում:

Վերջին մեկ տարում Անկարան Հայաստանի հետ հարաբերություններում առաջնորդվում է սառը հաշվարկով՝ մի կողմից պատրաստակամություն է ցուցադրում համագործակցության հարցում, մյուս կողմից՝ բաց չի թողնում առիթը ճնշում գործադրելու համար: Թուրքիան հրաժարվել է նախկին կոշտ հռետորաբանությունից՝ փոխարենը կիրառելով փափուկ ուժի, տնտեսական գայթակղությունների և խորհրդանշական դիվանագիտության գործիքակազմը:

Վերջին մեկ տարվա ամենանշանակալի գործնական տեղաշարժը տեղի ունեցավ հենց 2026 թվականի մայիսին: Կողմերն ավարտեցին ուղիղ առևտրի մեկնարկի համար անհրաժեշտ բոլոր բյուրոկրատական և մաքսային նախապատրաստությունները: Անկարան պաշտոնապես վերացրեց երրորդ երկրների միջոցով հայկական ապրանքների ներմուծման սահմանափակումների մի մասը, և իրավական

դաշտ ստեղծվեց ապրանքների վրա ծագման երկիրն ուղղակիորեն նշելու համար: Սա տնտեսական մեծ խայծ է Հայաստանի գործարար շրջանակների համար, որոնց Թուրքիան ցույց է տալիս հսկայական շուկայի հասանելիության հեռանկարը՝ դրանով իսկ ներքին տնտեսական շահագրգռվածության միջոցով ամրապնդելով խաղաղության գործընթացի շարունակականության անհրաժեշտությունը:

Դիվանագիտական ճակատում վերջին մեկ տարում գրանցվեցին աննախադեպ շփումներ: 2026 թվականի մայիսի սկզբին Երևանում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի շրջանակներում Հայաստան ժամանեց Թուրքիայի փոխնախագահ Ջևդեթ Յըլմազը: Սա վերջին տասնամյակներում Թուրքիայի երկրորդ դեմքի մակարդակով առաջին պաշտոնական այցն էր Երևան:

Այս այցի ընթացքում կողմերը ստորագրեցին պատմական Անիի կամրջի համատեղ վերականգնման տեխնիկական համաձայնագիրը: Անկարան այս «մշակութային դիվանագիտությունն» օգտագործում է արևմտյան գործընկերներին ցույց տալու համար, որ ինքը պատրաստ է հաշտեցման և տարածաշրջանային ինտեգրման, ինչը բարձրացնում է Թուրքիայի կշիռը Վաշինգտոնի և Բրյուսելի աչքերում:

Այդուհանդերձ, վերջին մեկ տարվա դրական դինամիկան չպետք է մոլորության մեջ գցի: Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը և արտգործնախարար Հաքան Ֆիդանը տարվա ընթացքում բազմիցս վերահաստատել են իրենց գլխավոր սկզբունքը. *դիվանագիտական հարաբերությունների լիակատար հաստատումը և ցամաքային սահմանանե-*

րի բացումը (ներառյալ երրորդ երկրների քաղաքացիների համար Մարգարայի սահմանային անցակետի գործարկումը) ուղղակիորեն շաղկապված են Երևանի և Բաքվի միջև խաղաղության պայմանագրի ստորագրման հետ: Ավելին, Անկարան շարունակում է կուլիսային կոշտ ճնշում գործադրել Հայաստանի վրա՝ Սահմանադրության փոփոխության և, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» տրանսպորտային հաղորդակցության ապահովման հարցերում:

Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումը հունիսի 7-ի ընտրությունների վերաբերյալ ձևակերպված է դասական դիվանագիտական կանոններով. Անկարան հայտարարում է, որ դա «Հայաստանի ներքին գործն է», և իրենք հարգելու են հայ ժողովրդի ընտրությունը: Սակայն, քաղաքական կուլիսներում և փորձագիտական մակարդակում Թուրքիայի աշխարհաքաղաքական նախապատվություններն ու մտավախությունները խիստ հստակ են:

Անկարայի համար ներկայիս իշխող ուժի հաղթանակը նախընտրելի սցենար է մի քանի առանցքային պատճառներով.

- **Գործընթացի անհատականացում և կանխատեսելիություն.** Թուրքիայի արտաքին քաղաքականության համար կարևոր է կանխատեսելիությունը: Վերջին տարիներին Երևանի և Անկարայի հատուկ ներկայացուցիչների (Ռուբեն Ռուբինյան և Սերդար Քըլըչ) միջև հաստատվել է կայուն երկխոսություն: Իշխանության պահպանումը նշանակում է այս բանակցային կապիտալի պահպանում:
- **Ադրբեջանի հետ սահմանազատման շարունակականություն.** Թուրքիան ողջունում է Հայաստանի պատրաստակամությունը՝ գնալու սահմանազատման և միակողմանի զիջումների, քանի որ դա արագացնում է Երևան-Բաքու խաղաղության պայմանագրի կնքումը, որն էլ, ինչպես նշվեց, հայ-թուրքական սահմանի բացման գլխավոր նախապայմանն է:
- **Տարածաշրջանի «ապառուսականացումը».** Թուրքիայի հեռահար նպատակը Հարավային Կովկասից Ռուսաստանի ազդեցության աստիճանական դուրսմղումն է: Գործող կառավարության վարած՝ դեպի Արևմուտք դիվերսիֆիկացման քաղաքականությունը, ՀԱՊԿ-ի հետ հարաբերությունների սառեցումը և եվրոպական դիտորդների ներկայությունը լիովին տեղավորվում են Անկարայի ռազմավարական շահերի շրջանակում, քանի որ թուլացնում են Մոսկվայի լծակները տարածաշրջանում:

  Թուրքական վերլուծական կենտրոնները (օրինակ՝ SETA-ն) անհանգստությամբ են դիտարկում հունիսի 7-ին ընդդիմադիր, ազգայնական կամ ընդգծված պրոռուսական ուժերի հնարավոր հաջողությունը: Անկարայում կարծում են, որ իշխանափոխությունը կհանգեցնի հետևյալ հետևանքներին.
- **Բանակցությունների տապալում.** Նոր կառավարությունը կարող է վերանայել Ադրբեջանի հետ սահմանազատման սկզբունքները, հրաժարվել «Խաղաղության խաչմերուկի» ներկայիս տրամաբանությունից և որդեգրել ավելի կոշտ դիրքորոշում:

- **Ռուսական գործոնի վերադարձ.** Եթե Հայաստանում հաղթեն Մոսկվայի հետ անվտանգային կապերի վերականգնման կողմնակիցները, դա կխաթարի տարածաշրջանային նոր ճարտարապետություն ստեղծելու Թուրքիայի և Ադրբեջանի պլանները՝ Ռուսաստանին վերադարձնելով գլխավոր միջնորդի դերը:

Հետևաբար, Անկարան իր դիվանագիտական և տնտեսական վերջին քայլերով (օրինակ՝ մայիսին ուղիղ առևտրի մեկնարկով) փորձում է հայ ընտրողին ցույց տալ, որ ներկայիս կուրսի պահպանումը բերում է իրական տնտեսական օգուտ և անվտանգություն, դրանով իսկ անուղղակիորեն աջակցելով գործող իշխանության քարոզչությանը:

Հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունները կանխորոշելու են հայ-թուրքական հարաբերությունների դինամիկան առնվազն հաջորդ տասնամյակի համար: Անկարան արդեն իսկ ստեղծել է մշակութային և տնտեսական այնպիսի նախադրյալներ (Անիի կամրջի վերականգնում, առևտրային իրավական դաշտ), որոնք ցանկացած նոր կառավարության համար դժվար կլինի միանգամից չեղարկել՝ առանց տնտեսական կորուստների:

Գործող քաղաքական կուրսի պահպանման սցենարի դեպքում՝ Անկարան, ամենայն հավանականությամբ, կխթանի Երևանի և Բաքվի միջև խաղաղության պայմանագրի շուտափույթ կնքումը, որին կարող է հաջորդել հայ-թուրքական սահմանների բացումը և թուրքական ներդրումների ու կապիտալի ներհոսքը հայաստանյան շուկա: Հակառակ սցենարի պարագայում՝ հավանական է դառնում տարածաշրջանային հարաբերությունների նոր սառեցումը և քաղաքական լարվածությունը, ինչի համատեքստում Թուրքիան կարող է վերադառնալ Հայաստանի տնտեսական ու դիվանագիտական մեկուսացման իր նախկին քաղաքականությանը: Այսպիսով, Անկարան դիտարկում է զարգացման երկու հնարավոր տարբերակներն էլ՝ պատրաստ լինելով արձագանքել իրադարձությունների ցանկացած ընթացքի:

Հայաստանի էներգետիկ անվտանգությունը. ռիսկեր ու մարտահրավերներ

Վահե Դավթյան
Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հայաստանի էներգետիկ պրոֆիլը

Հայաստանը չունի սեփական ածխաջրածնային ռեսուրսային բազա, քանի որ երկրում բացակայում են նավթի և բնական գազի հաստատված պաշարներ: Երկրի ածխային պոտենցիալը նույնպես սահմանափակ է. հետախուզված պաշարները գնահատվում են մոտավորապես 154 մլն տոննա: Հայտնի են վեց ածխային շրջաններ, ինչպես նաև այրվող թերթաքարերի դրսևորումներ, սակայն դրանց արդյունաբերական շահագործումը տնտեսական արդյունավետության անորոշության պատճառով շարունակում է մնալ հարցականի տակ: Գործնականում Հայաստանում ածխի և թերթաքարային հումքի արդյունահանում չի իրականացվում: Միաժամանակ երկրի բնական-աշխարհագրական առանձնահատկությունները ձևավորել են էներգետիկ զարգացման այլ ուղղություն: Ավելի քան 400՝ հիմնականում կարճ, սակայն արագահոս լեռնային գետերը ստեղծում են զգալի հիդրոէներգետիկ ներուժ: Այդ ներուժը հիմնականում իրացվում է փոքր հիդրոէներգետիկայի ոլորտում, սակայն զուգահեռաբար դիտարկվում են դիվերսիֆիկացման հնարավորություններ նաև վերականգնվող էներգիայի այլ աղբյուրների հաշվին, առաջին հերթին՝ արևային էներգետիկայի միջոցով:

Հայաստանում վերականգնվող էներգետիկան դիտարկվում է որպես էներգահամակարգի կայունության բարձրացման և ներմուծումներից կախվածության նվազեցման առանցքային գործիք: Ռազմավարական հեռանկարում նախատեսվում է մինչև 2036 թ. վերականգնվող աղբյուրների մասնաբաժինը էներգաբալանսում հասցնել 66%-ի: Այս նպատակի իրագործումը պահանջելու է հզորությունների զգալի աճ, առաջին հերթին արևային էներգետիկայի ոլորտում, որի զարգացումը ներկայումս Հայաստանում ընթանում է առաջանցիկ տեմպերով:

Զուգահեռաբար իրականացվում են հարևան երկրների հետ էլեկտրաէներգետիկ ինտեգրման նախագծեր, որոնք պետք է բարձրացնեն էներգամատակարարման ճկունությունն ու հուսալիությունը: Իրականացվում են բարձրավոլտ միջհամակարգային կապերի նախագծեր. մասնավորապես՝ Իրանի հետ 400 կՎ լարման գիծ, ինչպես նաև Վրաստանի հետ HVDC տեխնոլոգիայով միացում: Այս ենթակառուցվածքային լուծումները կոչված են ապահովելու մատակարարման աղբյուրների դիվերսիֆիկացումը և ստեղծելու լրացուցիչ հնարավորություններ պիկային ծանրաբեռնվածությունների պայմաններում պակասորդի լրացման համար:[1]

Հայաստանի էներգահամակարգը բնութագրվում է տեղակայված հզորությունների ավելցուկով, որը գերազանցում է 4,1 ԳՎտ-ը, սակայն փաստացի հասանելի ռեսուրսը զգալիորեն ցածր է՝ 2,9 ԳՎտ-ից պակաս: Այս տարբերությունը պայմանավորված է նախևառաջ գեներացնող ակտիվների մաշվածությամբ. հզորությունների մոտ կեսը շահագործվում է ավելի քան չորս տասնամյակ: Երևանի ՋԷԿ-ի շահագործումից դուրսբերումը 2010 թ. և Հրազդանի ՋԷԿ-ի բլոկների առաջիկա փակումը միայն ընդգծում են սպասվող արդիականացման մասշտաբը: Առաջիկա 10-20 տարիների ընթացքում Հայաստանի էներգահամակարգը պահանջելու է զգալի ներդրումներ՝ ուղղված արդիականացմանը: Հաշվի առնելով Հայաստանի ներդրումային միջավայրի կտրուկ դեգրադացիան, տարածաշրջանում անորոշության շարունակական աճը, երկրում ընթացող ապաինդուստրիալիզացումը, ինչպես նաև ավանդական գեներացիոն հզորությունների, նախևառաջ՝ ԱԷԿ-ի ստորադասումը նոր՝ առավելապես անկայուն արևային գեներացիային, Հայաստանի էներգետիկ համակարգն արդեն կարճաժամկետ հեռանկարում առերեսվելու է մի շարք համակարգային ռիսկերի: Վերջիններիս աճի պարագայում էապես բարդանում է նշված ներդրումային հոսքերի ապահովումը:

Միաժամանակ, 2022 թ. փետրվարի 1-ից Հայաստանի էլեկտրաէներգետիկ շուկան ազատականացված է, իսկ դա նշանակում է, որ համակարգում ի հայտ եկած նոր ինստիտուտը՝ թրեյդերների տեսքով,

հնարավորություն է ստանում ավելի էժան էլեկտրաէներգիա ներկրել արտաքին շուկաներից՝ հեռանկարում դարձնելով Հայաստանը նետտո-ներկրող: Սա էներգետիկ անվտանգության ուղիղ ռիսկ է՝ հաշվի առնելով Հայաստանում առկա գեներացիոն հզորություններն ու «Հյուսիս-Հարավ» էլեկտրաէներգետիկ միջանցքին ինտեգրվելու հեռանկարները: Շուկայի ազատականացման պայմաններում առավել քան վտանգավոր է թմբկահարվող հայ-ադրբեջանական ու հայ-թուրքական էներգետիկ փոխգործակցությունը, որի վերջնական հետևանքը կրկին կարող է լինել տվյալ երկրներից էլեկտրաէներգիայի ներկրումը, ինչը կնշանակի ոչ թե դիվերսիֆիկացում, այլև կախվածության մոդելի փոփոխություն՝ ռուսականից՝ թյուրքականի:

Հայաստանի էներգետիկ պրոֆիլի առավել ամբողջական պատկերացման համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքին, որը 2025 թ. կազմել է ավելի քան 10 մլրդ կՎտ.ժ:

Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածք, 2025 թ. (աղբյուրը՝ ՀՀ ՏԿԵ նախարարություն)

Թեև պաշտոնական մակարդակում պարբերաբար հայտարարվում է, որ Հայաստանում արևային կայանների հզորություններն արդեն փաստացի երկու կամ երեք անգամ ավել են ԱԷԿ-ի հզորությունից, այնուամենայնիվ, դրանց դրվածքային հզորության օգտագործման գործակիցը շարունակում է մնալ բավականին ցածր՝ զիջելով ավանդական կայաններին:

Ներկայացված տվյալների ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ Հայաստանի էներգետիկ պրոֆիլը, չնայած վերականգնվող էներգետիկայի տեսակարար կշռի դինամիկ աճին, շարունակում է ցուցադրել կայուն հենվածություն ավանդական հատվածների՝ ՋԷԿ-երի, ԱԷԿ-ի և ՀԷԿ-երի վրա:

Գազատրանսպորտային հաղորդակցություններ

Գազային հատվածը Հայաստանի էներգետիկ անվտանգության կարևորագույն հանգույցներից մեկն է: Երկրի գազատրանսպորտային համակարգի միակ օպերատորը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն է, որը «Գազպրոմ» ՊԲԸ-ի 100%-ոց դուստր ընկերությունն է և վերահսկում է հանրապետության ամբողջ գազատրանսպորտային ենթակառուցվածքը: Նման կառուցվածքի ձևավորումը տեղի է ունեցել փուլային կերպով:

1997 թ. «ՀայՌուսգազարդ» համատեղ ձեռնարկության ստեղծման ժամանակ բաժնեմասերը բաշխված էին հետևյալ կերպ. 45%-ը պատկանում էր Հայաստանին, 45 %-ը՝ «Գազպրոմ»-ին, իսկ 10%-ը՝ ռուսական «Իտերա» ընկերությանը: Հետագայում ռուսական կողմն ուժեղացրեց իր դիրքերը՝ ձեռք բերելով «Իտերա»-ի բաժնեմասը: Կառուցվածքային վերափոխման առանցքային փուլը դարձավ 2013 թ. գործարքը, երբ Հայաստանի կառավարությունը փոխանցեց մնացած 20% բաժնեմասը՝ ռուսական գազի արտոնյալ մատակարարումների հետևանքով կուտակված պարտքի մարման դիմաց: Այդ ժամանակահատվածում ընկերությունը վերանվանվեց «Գազպրոմ Արմենիա», իսկ 2015 թ. «Իրան-Հայաստան» գազատարի վերջին՝ Մեղրի-Քաջարան 40-կիլոմետրանոց հատվածը ևս փոխանցվեց ռուսական ընկերության հաշվեկշռին:[2]

2006-2013 թթ. ռուսական գազի գինը Հայաստանի համար պահպանվել է հետխորհրդային երկրների համեմատ զգալիորեն ավելի ցածր մակարդակում՝ բացառությամբ Բելառուսի: Նույն մոտեցումը պահպանվում է նաև ներկայումս. Հայաստանի համար գազի գինը կազմում է 165 ԱՄՆ դոլար 1000 խմ-ի դիմաց (կալորիականության գործակիցը հաշվի առնելով՝ 177.5 ԱՄՆ դոլար), ինչը ռուսական արտահանման ուղղությունների մեջ նվազագույն գներից է Բելառուսից և Ղրղզստանից հետո: 2013 թ. գազային համաձայնագրերի շրջանակում ամրագրվեց նաև երկարաժամկետ ինստիտուցիոնալ պարտավորություն. Երևանը պարտավորվեց մինչև 2043 թ. ապահովել «Գազպրոմ»-ի իրավունքների և շահերի պահպանումը: Նման իրավական կառուցվածքը հաճախ դիտարկվում է որպես զգայուն քաղաքական-տնտեսական գործոն, քանի որ այն սահմանափակում է սեփականության և կարգավորման կանոնների միակողմանի փոփոխության հնարավորությունը: Այս հարցը քննարկումների առարկա է դառնում ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտաքին դերակատարների շրջանում, հատկապես նրանց կողմից, ովքեր հանդես են գալիս տարածաշրջանում ռուսական էներգետիկ ներկայության կրճատման օգտին:

2021 թ. վերջին երկարատև բանակցությունների արդյունքում կողմերը վերանայեցին 2013 թ. համաձայնագրերի որոշ դրույթներ: Ամրագրվեց, որ Հայաստան մատակարարվող գազի գինը տասնամյա ժամանակահատվածում չի վերանայվի բարձրացման ուղղությամբ: Ջուգահեռաբար Հայաստանը ստանձնեց «Գազպրոմ Արմենիա»-ին տարեկան 31,79 մլն ԱՄՆ դոլարի փոխհատուցում տրամադրելու պարտավորություն՝ կապված Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շահագործման դադարեցման հետևանքով առաջացած վնասների հետ: Կայանի աշխատանքի դադարեցման պատճառը «Իրան-Հայաստան» 3-րդ էլեկտրահաղորդման գծի շինարարության ձգձգումն էր, որը պետք է ապահովեր էլեկտրաէներգիայի փոխհոսքերի աճը: 5-րդ էներգաբլոկի տնտեսական մոդելը կառուցված է «գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» բարտերային սխեմայի վրա: Արդյունքում չստացված շահույթը վերածվեց մոտ 100 մլն ԱՄՆ դոլարի պարտքային բեռի:[3]

Միաժամանակ «Գազպրոմ»-ը շարունակում է ներդրումային ակտիվությունը Հայաստանի գազատրանսպորտային ենթակառուցվածքներում: 2026-2030 թթ. համար նախատեսված են շուրջ 400 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ, ներառյալ Աբովյանի ստորգետնյա գազապահեստարանի ընդլայնումը, գազատրանսպորտային ցանցի արդիականացումը և լրացուցիչ հզորությունների զարգացումը Երևանում և այլ ուղղություններով:[4] 2022 թ. ռուսական գազի մատակարարումների դիմաց հաշվարկներն իրականացվում են ռուբլով, ինչը տեղավորվում է արտաքին առևտրային հաշվարկների դեդոլարիզացիայի ավելի լայն ռազմավարության մեջ: Հայաստանի համար նման մեխանիզմներին մասնակցությունը նշանակում է երկարաժամկետ մատակարարումների ավելի կանխատեսելի մոդել, ինչն առանձնահատուկ կարևորություն ունի՝ հաշվի առնելով գազային գեներացիայի բարձր մասնաբաժինը ազգային էներգահամակարգում:

«Գազպրոմ»-ը շարունակում է մնալ բնական գազի հիմնական մատակարարը Հայաստանի համար: 2025 թ. արդյունքներով հանրապետություն մատակարարված բնական գազի ընդհանուր ծավալը կազմել է 2 մլրդ 318.6 միլիոն խմ, իսկ վերջնական սպառողներին իրացվել է 2 մլրդ 223.1 միլիոն խմ:[5] Միաժամանակ Հարավային Կովկասում ուժային հավասարակշռության վերափոխման ֆոնին Հայաստանի գազային անվտանգությունը բախվում է նոր մարտահրավերների: Դրանցից մեկը պաշտոնական Երևանի կողմից պարբերաբար առաջ քաշվող ադրբեջանական գազի հնարավոր ներմուծման գաղափարն է: Հայաստանի և Ադրբեջանի միջև բացակայում է գործող գազատրանսպորտային ենթակառուցվածքը. խորհրդային շրջանում գործող «Ղազախ-Երևան» գազատարն ապամոնտաժվել է: Նույնիսկ դիվանագիտական հարաբերությունների հաստատման դեպքում նոր մայրուղային գազատարի կառուցումը տնտեսապես վիճահարույց է թվում՝ հաշվի առնելով Հայաստանի համեմատաբար փոքր ներքին պահանջարկը՝ տարեկան 2.3-2.4 մլրդ խմ:

Հայաստանի գազատրանսպորտային համակարգը ձևավորվել է ռուսական մատակարարումների, ռուսական կապիտալի և երկարաժամկետ պայմանագրային մեխանիզմների հիման վրա, ինչի արդյունքում երկրի էներգետիկ կայունությունն այսօր անմիջականորեն կապված է Ռուսաստանի հետ համագործակցության պահպանման հետ: Այս պայմաններում Ռուսաստանից արագ կամ քաղաքականապես մոտիվացված դիստանցավորումը կարող է հանգեցնել ոչ միայն մատակարարումների խափանման ռիսկերի, այլև լայնածավալ գազատրանսպորտային ճգնաժամի՝

ուղեկցվելով գազի սակագների կտրուկ աճով, արդյունաբերական ծախսերի բարձրացմամբ, էլեկտրաէներգիայի ինքնարժեքի թանկացմամբ և բնակչության սոցիալական բեռի ավելացմամբ: Այլընտրանքային մատակարարման ուղղությունները ներկայումս չունեն բավարար ենթակառուցվածքային, տնտեսական և քաղաքական հիմքեր՝ կարճաժամկետ հեռանկարում ռուսական գազին լիարժեք փոխարինելու համար: Հետևաբար գազային ոլորտում կտրուկ վերադասավորումները կարող են վերածվել ոչ միայն էներգետիկ, այլև սոցիալ-տնտեսական և քաղաքական անկայունության գործոնի: Այս համատեքստում հատկանշական է ԵԱՀԿ-ում ԱՄՆ նախկին դեսպան Դանիել Բայերի հայտարարությունը. «Հայաստանը պետք է պատրաստ լինի մի քանի սառը ձմեռների»:[6]

«Խաղաղ ատոմը» Հայաստանի էներգետիկ անվտանգության համակարգում

2026 թ. Հայաստան-ԵՄ մայիսյան գագաթնաժողովի արդյունքներով ընդունված համատեղ հռչակագրի[7] էներգետիկայի մասին հատվածներում շեշտվում են դիվերսիֆիկացիան, էներգետիկ անցումը, ցանցերի ամրապնդումը և եվրոպական շուկաների հետ ինտեգրումը: Բայց այստեղ առանցքային խնդիրը ոչ թե էներգետիկայի զարգացումն է, այլ այն, թե որ, իսկ ավելի շուտ՝ ում տրամաբանությամբ է այդ զարգացումն իրականացվելու: Դիվերսիֆիկացիան ներկայացվում է որպես կախվածության նվազեցում, սակայն իրականում այն կարող է վերածվել կախվածության ուղղակի փոփոխության՝ դեպի եվրոպական կարգավորիչ և տեխնոլոգիական համակարգեր:

Ամենազգայուն կետը միջուկային էներգետիկան է: Հայկական ԱԷԿ-ի շահագործումից դուրսբերման ճանապարհային քարտեզի վերաբերյալ ԵՄ աջակցությունը ձևակերպվում է որպես տեխնիկական և անվտանգային համագործակցություն, սակայն փաստացի այն արձանագրում է մի գործընթաց, որի վերջնարդյունքը ակնհայտ է՝ գործող ատոմային բլոկի փակումը: Հարց է առաջանում՝ ինչով է այն փոխարինվելու: Հռչակագրում դրա մասին հստակ պատասխան չկա: Սա նշանակում է, որ Հայաստանի էներգետիկ համակարգի բազային, կայուն հզորությունը դրվում է հարցականի տակ՝ առանց համարժեք այլընտրանքի: Հիշեք Իգնալինի ԱԷԿ-ը, որը կոնսերվացվեց Լիտվայի ԵՄ անդամակցելուց հետո՝ առանց նոր հզորությունների ձևավորման: Արդյունքում Լիտվան առ այսօր ստիպված է թանկ էլեկտրաէներգիա ներկրել Սկանդինավիայից:

Հռչակագրում խոսվում է նաև Սևծովյան էլեկտրամալուխին Հայաստանի միանալու հեռանկարի մասին: Վերջինս ԵՄ-Ադրբեջան համատեղ մի նախաձեռնություն է, որը կոչված է ադրբեջանական «կանաչ» էներգիան արտահանել եվրոպական շուկա: Ակնհայտ է, որ առանց կայուն գեներացնող հզորությունների Հայաստանն այդ հաղորդակցության մեջ պարզապես անելիք չունի: Ակնհայտ է նաև, որ առկա պայմաններում Բաքուն ամեն կերպ խոչընդոտելու է Հայաստանի միացումը ադրբեջանական լոբբիզմի արդյունք հանդիսացող այդ մալուխին:

Հարցը ենթադրում է գեոտնտեսական վերլուծության անցկացում:

Ռուսաստանը ավանդաբար Հայաստանի հիմնական գործընկերն է ատոմային էներգետիկայի ոլորտում՝ ինչպես Հայկական ԱԷԿ-ի շահագործման, այնպես էլ 2015 թ.՝ դրա արդիականացման ուղղությամբ: Այս հանգամանքը մեծապես պայմանավորում է արտաքին տարբեր դերակատարների հետաքրքրությունը Հայաստանի ազգային ատոմային հատվածում ներկայության ուժեղացման նկատմամբ: 2003 թ. Երևանի և Մոսկվայի միջև ստորագրվեց համաձայնագիր, որով Հայկական ԱԷԿ-ը հինգ տարի ժամկետով փոխանցվեց ռուսական «Ինտեր ՌԱՕ ԵԷՍ» ՓԲԸ-ի վստահված (ֆինանսական) կառավարմանը: Ընկերությունը ստանձնեց կայանի անվտանգ շահագործման և միջուկային վառելիքի անխափան մատակարարման պարտավորությունները: Ֆինանսական մոդելը նախատեսում էր շահույթի բաշխում հետևյալ հարաբերակցությամբ՝ 75%-ը Հայաստանի օգտին, 25%-ը՝ կառավարող ընկերության: Բացի այդ, «Ինտեր ՌԱՕ ԵԷՍ»-ը մարեց կայանի շուրջ 40 մլն ԱՄՆ դոլար կազմող կուտակված պարտքը:[8] 2008 թ. համաձայնագիրը երկարաձգվեց, սակայն 2011 թ. ռուսական կողմը նախաձեռնեց դրա վաղաժամկետ դադարեցումը՝ հայտարարելով, որ ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կատարվել են:[9]

2020 թ. հայ-ռուսական «ատոմային երկխոսության» շրջանակում սկսեցին ի հայտ գալ որոշակի լարվածության տարրեր: Դրանցից մեկը դարձավ այն, որ հայկական կողմը հրաժարվեց 2015 թ. Ռուսաստանի կողմից տրամադրված միջպետական վարկի մի մասից, որը նախատեսված էր Հայկական ԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգման համար:[10] Վարկի ընդհանուր ծավալը կազմում էր 270 մլն ԱՄՆ դոլար, սակայն դրանցից շուրջ 107 միլիոնը մնաց չօգտագործված: Միաժամանակ ռուսական «Ռուսատոմ Սերվիս» ընկերությունը պահպանեց արդիականացման աշխատանքների գլխավոր կապալառուի կարգավիճակը: Արդյունքում համագործակցության բնույթն աստիճանաբար ռազմավարական մակարդակից տեղափոխվեց առավելապես տեխնիկական համագործակցության հարթություն: Իրականացված արդիականացման աշխատանքների արդյունքում ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի հզորությունը բարձրացվեց 407.5 ՄՎտ-ից մինչև 448 ՄՎտ, իսկ կայանի շահագործման ժամկետը երկարաձգվեց մինչև 2026 թ.: Ներկայումս Հայաստանի կառավարությունը նախաձեռնել է աշխատանքներ կայանի շահագործումը մինչև 2036 թ. երկարաձգելու ուղղությամբ:

Հայ-ռուսական հարաբերություններում որոշակի բարդացումների ֆոնին, որոնք կապված են ինչպես ՀԱՊԿ-ի շուրջ ճգնաժամային միտումների, այնպես էլ Երևանի կողմից հռչակվող եվրոպական ինտեգրման

օրակարգի հետ, Հայաստանի ատոմային էներգետիկայի ոլորտում նկատվում է արևմտյան դերակատարների ակտիվացում: Այս համատեքստում կարևոր ուղենիշ է Եվրոպական միության և Հայաստանի միջև 2017 թ. ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (CEPA),[11] որում ներառված են ատոմային էներգետիկայի երկարաժամկետ վերափոխմանը վերաբերող դրույթներ: Փաստաթուղթը նախատեսում է կողմերի համագործակցություն Հայկական ԱԷԿ-ի փակման և անվտանգ շահագործումից դուրսբերման ուղղությամբ՝ հետագայում այն նոր հզորություններով փոխարինելու ճանապարհային քարտեզ մշակելու միջոցով, որոնք կապահովեն էներգետիկ անվտանգություն և կայուն զարգացում: Միևնույն ժամանակ ապագա հզորությունների տեխնոլոգիական բնույթը փաստաթղթում հստակեցված չէ, ինչը տարբեր մեկնաբանությունների հնարավորություն է ստեղծում՝ վերականգնվող էներգետիկայից մինչև նոր սերնդի ատոմային գեներացիա՝ հատկապես հաշվի առնելով այն, որ 2022 թ. միջուկային էներգետիկան ներառվեց եվրոպական տաքսոնոմիայի մեջ:

Ներկայումս ռազմավարական քննարկումների մակարդակում դիտարկվում են Հայաստանում նոր ատոմային էներգաբլոկի կառուցման երկու հիմնական տեխնոլոգիական առաջարկներ՝ ռուսական և ամերիկյան: Ռուսական կողմն առաջարկում է կառուցել ՎՎԷՌ-1200 տիպի ռեակտորի հիման վրա կայան, որը դասվում է արդեն փորձարկված և լայնորեն կիրառվող տեխնոլոգիաների շարքին: Նման հարթակը բնութագրվում է տեխնոլոգիական բարձր մշակվածությամբ, կայուն վառելիքային ցիկլի առկայությամբ, սպասարկման զարգացած համակարգով և պատրաստված մասնագիտական կադրային բազայով:

Ամերիկյան առաջարկը ենթադրում է փոքր մոդուլային ռեակտորների (SMR) ներդրում, ընդ որում հենց ԱՄՆ-ում նման կայանքները դեռևս գտնվում են նախագծման և լիցենզավորման փուլում, իսկ դրանց արդյունաբերական շահագործումը սպասվում է ոչ շուտ, քան 2031 թ. հետո: Վերլուծական գնահատականները մատնանշում են այդ տեխնոլոգիայի մի շարք սահմանափակումներ՝ ներառյալ էլեկտրաէներգիայի բարձր ինքնարժեքը, գործող էներգացանցերում ինտեգրման բարդությունները և արդյունաբերական կիրառման փորձի բացակայությունը: Այսպիսով, նախագիծը բնութագրվում է բարձր տեխնոլոգիական և տնտեսական անորոշությամբ, ինչը Հայաստանի սահմանափակ կայունություն ունեցող էներգահամակարգի պայմաններում կարող են ձևավորել լրացուցիչ ռիսկեր ազգային էներգետիկ անվտանգության համար:

2025 թ. հունվարի 14-ին ստորագրված հայ-ամերիկյան ռազմավարական գործընկերության խարտիան անդրադառնում է նաև ատոմային էներգետիկայի ոլորտին, այդ թվում՝ այսպես կոչված «123 համաձայնագրի» մեխանիզմի միջոցով, որը կարգավորում է ամերիկյան միջուկային տեխնոլոգիաների արտահանումը:[12] Փաստացի ԱՄՆ-ը Հայաստանը դիտարկում է որպես փոքր մոդուլային ռեակտորների տեխնոլոգիաների փորձարկման հնարավոր հարթակ:

Նախագծի հնարավոր ֆինանսական մոդելը, որի ծավալը, ըստ ԱՄՆ փոխնախագահ Ջ. Վենսի՝ 2026 թ. փետրվարին Երևան կատարած այցի ընթացքում արված հայտարարության, կարող է կազմել շուրջ 9 մլրդ ԱՄՆ դոլար,[13] հավանաբար կունենա վարկային բնույթ՝ ներառելով ոչ միայն սարքավորումների մատակարարումը, այլև դրանց սպասարկումը: Սա կարող է մեծացնել Հայաստանի արտաքին պարտքը և ստեղծել լրացուցիչ ֆիսկալ ռիսկեր: Այցի ընթացքում կողմերը ստորագրեցին նաև հիշյալ «123 համաձայնագիրը», որը փաստացի վերացնում է ԱՄՆ-ից Հայաստան միջուկային տեխնոլոգիաների մատակարարման սահմանափակումները:

Ներկայումս Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկում ռուսական մասնակցությամբ իրականացվում է շահագործման ժամկետի երկարաձգման ծրագիր, որի ընդհանուր ծավալը կազմում է մոտ 165 մլն ԱՄՆ դոլար: Ծրագրի շրջանակում իրականացվում են միջուկային և հրդեհային անվտանգության բարձրացման, օժանդակ սառեցման համակարգերի արդիականացման, նախագծային վթարային սցենարների ընդլայնման, նյութագիտական հետազոտությունների և ռեակտորի կորպուսի մետաղի վիճակի վերահսկման աշխատանքներ: Այս ամենը պայմանավորված է կայանի երկարաժամկետ շահագործման անհրաժեշտությամբ՝ նախագծային սկզբնական ժամկետից դուրս:

Հայաստանում նոր ԱԷԿ-ի կառուցման հեռանկարների քննարկումները՝ փոքր մոդուլային ռեակտորներից մինչև խոշոր էներգաբլոկներ, բացահայտում են հիմնարար ռիսկերի ամբողջություն, որոնց անտեսումը կարող է ունենալ երկարաժամկետ հետևանքներ երկրի էներգետիկ անվտանգության համար: Առանցքային խնդիրներից մեկը տեխնոլոգիական փորձարկման ռիսկն է: Ինչպես արդեն նշվել է, փոքր մոդուլային ռեակտորները, չնայած որոշ առավելություններին՝ ճկունության և համեմատաբար ցածր կապիտալ ծախսերի տեսքով, ներկայումս դեռևս չեն ապացուցել իրենց արդյունավետությունը լայնածավալ արդյունաբերական շահագործման պայմաններում: Նախագծերի զգալի մասը գտնվում է նախագծման կամ փորձնական փորձարկումների փուլում, ինչն օբյեկտիվորեն սահմանափակում է դրանց հուսալիությունը: Այս պայմաններում նման լուծումների ներդրումը սահմանափակ և կառուցվածքային առումով խոցելի էներգահամակարգ ունեցող երկրում կարող է ձևավորել համակարգային ռիսկեր: Հատկանշական է նաև, որ «Ռոսատոմ»-ը, հաշվի առնելով Երևանի կողմից փոքր մոդուլային ռեակտոր կառուցելու դեռևս ոչ ֆորմալացված որոշումը, առաջարկում է իր սեփական նախագի-

ծը՝ «ՌԻՏՄ-200Ն» փոքր ռեակտորը, որը մշակվել է «ՌԻՏՄ-200» ռեակտորի հիման վրա և արդեն շահագործվում է «Ակադեմիկ Լոմոնոսով» ատոմային սառցահատի վրա:

Հարցն անհրաժեշտ է դիտարկել նաև նորագույն թվային տեխնոլոգիաների զարգացման համատեքստում: Հայաստանում արհեստական բանականության (ԱԲ) գործարանի կառուցման նախագիծն առաջին հայացքից տեխնոլոգիական առաջընթացի և տարածաշրջանային մրցունակության ամրապնդմանն ուղղված քայլ է: Սակայն նման նախաձեռնությունները պետք է դիտարկել ոչ միայն թվային տնտեսության զարգացման տրամաբանությամբ, այլև՝ էներգետիկ համակարգի կառուցվածքային սահմանափակումների համատեքստում:

Վրաստանի փորձը ցույց է տալիս այդ խնդրի էությունը: Կարճ ժամանակում տվյալային և մայնինգային ենթակառուցվածքները դարձել են զգալի սպառող՝ հասնելով ընդհանուր պահանջարկի 5%-ին: Արդյունքում փոխվել է պահանջարկի կառուցվածքը. առաջացել է կենտրոնացված, կայուն և բարձր բեռնվածություն ստեղծող սեգմենտ:

Դա, իր հերթին, բերել է համակարգային պակասորդի: 2026 թ. սկզբին Վրաստանում սպառումը գերազանցել է 2.7 մլրդ կՎտ.ժ-ը, մինչդեռ արտադրությունը կազմել է ընդամենը 1.9 մլրդ կՎտ.ժ: Պակասորդը լրացվում է ներմուծման միջոցով: Հետևանքը՝ էլեկտրաէներգիայի գնի կախվածություն արտաքին շուկաներից և սակագների աճ (ս.թ. ապրիլի 1-ից դրանք աճել են 21-33%-ով): Միևնույն ժամանակ, տվյալային կենտրոնները, լինելով բարձր վճարունակություն ունեցող սպառողներ, դուրս են մղում այլ սպառողներին՝ վերաձևելով էներգիայի ներքին բաշխման տրամաբանությունը:

Հայաստանի պարագայում այս ռիսկերը բազմապատկվում են: Էներգետիկ համակարգն արդեն իսկ ունի կառուցվածքային սահմանափակումներ՝ կախվածություն ներմուծվող էներգակիրներից, հիդրոռեսուրսների սեզոնայնություն, գործող ատոմակայանի սահմանափակ ժամկետային ռեսուրս:

Վրաստանի փորձը ցույց է տալիս, որ տեխնոլոգիական զարգացման անվան տակ ձևավորվող էներգատար սեկտորները կարող են վերափոխել ամբողջ էներգետիկ բալանսը: Ու դա այն դեպքում, երբ Վրաստանում չեն գործում տվյալային կենտրոններ, որոնք իրենց հզորություններով մոտ են այն նախագծին, որն իրականացվում է Հայաստանում: Ըստ NVIDIA ընկերության փոխնախագահ Ռև Լեբարեդեանի՝ տարեվերջին, երբ գործարկվեն 50 հազար գրաֆիկական պրոցեսորներ՝ GPU-ները, Հայաստանը դրանց քանակով աշխարհի առաջատար հնգյակում կհայտնվի՝ շրջանցելով Եվրոպայի խոշոր պետություններին: Հաջորդ փուլում նախատեսվում է Հայաստանում կենտրոնացնել ևս 60 հազար GPU, և դրանց ընդհանուր քանակը հասցնել 110 հազարի: Հետևաբար, Հայաստանի համար առանցքային հարցը ոչ թե ինքնին տվյալային կենտրոնի կառուցումն է, այլ այն, թե ինչ էներգետիկ հիմքի վրա է այն գործելու:

Եզրակացությունը պարզ է: Եթե Հայաստանը նպատակ ունի զարգացնել ԱԲ-ն և ձևավորել նման մասշտաբի թվային ենթակառուցվածքներ, ապա անհրաժեշտ է նախապես ապահովել կայուն գեներացիոն հզորություններ: Արևային գեներա-

ցիան դա ապրիորի ի վիճակի չէ ապահովել: Այս տրամաբանությամբ, ավանդական հզորությունների ատոմային էներգաբլոկի կառուցումը վերածվում է համակարգային անհրաժեշտության՝ ինչպես էներգետիկ անվտանգության, այնպես էլ տեխնոլոգիական զարգացման տեսանկյունից:

Մյուս կողմից, հարկ է ընդգծել, որ Հայաստանի շուրջ՝ մակրոռեգիոնալ կտրվածքով, դինամիկորեն զարգանում է «խաղաղ ատոմը»: Միջուկային մեգածրագրեր են իրականացնում Թուրքիան, Իրանը, ԱՄԷ-ն, Եգիպտոսը, Ուզբեկստանը, Ղազախստանը, իսկ վերջերս էլ նման հավակնությունների մասին ավելի հստակ սկսեց խոսել նաև Բաքուն: Ադրբեջանի էներգետիկայի նախարար Շահբազովի համաձայն՝ երկրի էներգետիկ հաշվեկշիռը կառուցված է լինելու երեք բաղադրիչների վրա՝ ածխաջրածիններ, վերականգնվող էներգետիկա, «խաղաղ ատոմ»: Դրան զուգահեռ Հայաստանում, որը դեռևս տարածաշրջանում «խաղաղ ատոմ» ունեցող միակ երկիրն է, փաստացի հարցականի տակ է դրված այդ ռազմավարական, էքզիստենցիալ նշանակության ոլորտի ապագան: Մոսկվան հստակ ասում է՝ Երևանի ներկայիս արտաքին քաղաքական կուրսի շարունակության դեպքում Հայկական ԱԷԿ-ի մոդեռնիզացիան 2031 թ. հետո կարող է դադարեցվել: Այսինքն՝ անգամ 2036 թ. այդքան կանխատեսելի թվացող հեռանկարն այլևս հարցականի տակ է: Փաստացի հարցականի տակ է հայտնվում նաև թմբկահարվող մոդուլային ռեակտորի նախագիծը, որի իրագործման ամբողջ ցիկլը կպահպանջի առնվազն 7-8 տարի:

Ինչևէ, գործընթացները շատ տրամաբանական են ու փոխլրացնող: Էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացում-Ադրբեջանի հետ էներգահամակարգերի միացում-ազգային ատոմային էներգետիկայի պարալիզացում-Ադրբեջանից ներկրում:

Եզրակացություններ

- Հայաստանի էներգետիկ համակարգը շարունակում է մնալ ոչ միայն տնտեսական, այլև աշխարհաքաղաքական հավասարակշռության առանցքային տարր, որտեղ ցանկացած կտրուկ վերադասավորում անմիջապես անդրադառնում է երկրի արտաքին քաղաքական մանևրելու հնարավորությունների վրա: Էներգետիկ անվտանգությունը Հայաստանի համար վերածվում է պետական սուբյեկտության պահպանման առանցքային գործոնի, իսկ էներգետիկ քաղաքականությունը՝ արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության կարևորագույն ուղղություններից մեկի:
- Ռուսաստանից արագ դիստանցավորումն էներգետիկ ոլորտում կարող է հանգեցնել ոչ թե իրական դիվերսիֆիկացիայի, այլև կախվածության մոդելի փոփոխության՝ ռուսականից դեպի թուրք-ադրբեջանական և արևմտյան ենթակառուցվածքային ու տեխնոլոգիական համակարգեր:
- Էլեկտրաէներգետիկ շուկայի ազատականացումը և տարածաշրջանային ինտեգրման ներկայիս տրամաբանությունը երկարաժամկետ հեռանկարում ստեղծելու են Հայաստանի՝ նետտո-ներմուծող պետության վերածվելու վտանգ, ինչն էապես թուլացնում է պետական սուվերենության էներգետիկ բաղադրիչը:
- Հայկական ԱԷԿ-ի ապագայի շուրջ անորոշությունը վերածվում է ոչ միայն էներգետիկ, այլև ռազմավարական ռիսկի, քանի որ ատոմային էներգետիկան Հայաստանի համար տարածաշրջանային ուժային հավասարակշռության կարևոր գործոն է: Եթե գործող ատոմային հզորությունները դուրս բերվեն առանց համարժեք փոխարինման, ապա Հայաստանը կարող է կորցնել Հարավային Կովկասում իր եզակի տեխնոլոգիական և արդյունաբերական դիրքը՝ հայտնվելով արտաքին էներգետիկ կենտրոններից ավելի մեծ կախվածության մեջ:
- Ադրբեջանի, Թուրքիայի և տարածաշրջանային այլ դերակատարների կողմից «խաղաղ ատոմի» ուղղությամբ իրականացվող ծրագրերը ցույց են տալիս, որ տարածաշրջանում ձևավորվում է նոր էներգետիկ մրցակցություն, որի պայմաններում Հայաստանի նահանջը կարող է ունենալ երկարաժամկետ աշխարհաքաղաքական հետևանքներ:
- Արևմտյան տեխնոլոգիական նախագծերի, այդ թվում՝ փոքր մոդուլային ռեակտորների և ԱԲ ենթակառուցվածքների ներգրավումը, առանց բավարար էներգետիկ հիմքի, կարող են վերածել Հայաստանը տեխնոլոգիական փորձադաշտի՝ բարձր ֆինանսական և համակարգային ռիսկերով:
- Գազային և ատոմային ոլորտներում ռուսական ներկայության կտրուկ թուլացումը, առանց նախապես ձևավորված **իրատեսական այլընտրանքների**, կարող է հանգեցնել ոչ միայն սակագնային և սոցիալական ճգնաժամի, այլև ներքաղաքական անկայունության խորացման:

Հղումներ

1 International Energy Agency: Energy Security of Armenia / https://www.iea.org/reports/armenia-energy-profile/energy-security-2?utm_source=chatgpt.com
2 https://armenia.gazprom.ru/about/
3 https://am.sputniknews.ru/20211223/armeniya-soglasovala-tsenu-na-rossiyskiy-gaz-o-chem-dogovorilis-storony-36786566.html
4 https://armenia.gazprom.ru/press/news/2025/12/1763/
5 https://armenia.gazprom.ru/press/news/2026/01/1771/
6 https://www.aravot.am/2024/09/16/1443380/
7 https://data.consilium.europa.eu/doc/document/ST-8799-2026-INIT/en/pdf
8 https://www.arlis.am/hy/acts/11359
9 https://ria.ru/20111126/498791107.html
10 https://base.garant.ru/70916576/
11 https://edit.wti.org/document/show/ee712cee-69d8-4ace-b4ed-94ff07f0ba0f
12 https://www.mfa.am/hy/press-releases/2025/01/14/ARM-US-Charter/13032
13 https://news.am/hy/video/929564

Միացյալ Հայաստանը որպես ռազմավարական անհրաժեշտություն

Արամ Շահնազարյան
Քաղաքական վերլուծաբան

Այսօր, երբ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է իր պատմության ամենաբարդ և ճակատագրական շրջադարձային կետում, երբ 2020–2023 թվականների պատերազմական աղետները ոչ միայն զրկեցին մեզ Արցախից, այլև խորապես վերաձևեցին տարածաշրջանի ուժային հավասարակշռությունը և ցնցեցին մեր ազգային անվտանգության հիմքերը, անհրաժեշտ է վերահիմաստավորել մի տեսլական, որը վերջին տարիներին հաճախ ներկայացվում է որպես «անիրատեսական» կամ նույնիսկ «վտանգավոր»: Ի՞նչ է իրենից ներկայացնում Միացյալ Հայաստանի տեսլականը, և արդյո՞ք այն կարող է ընկալվել ոչ թե որպես հռետորական հռչակագիր, այլ որպես երկարաժամկետ ազգային ուղենիշ: Այս հարցադրումը հատկապես արդիական է այն պայմաններում, երբ հայկական քաղաքական խոսույթը հաճախ սահմանափակվում է կարճաժամկետ ճգնաժամերի կառավարման շուրջ՝ առանց ապագայի համակարգված պատկերացման: Փաստ է, որ պետությունները, որոնք չեն ձևակերպում իրենց երկարաժամկետ զարգացման ուղղությունը, ժամանակի ընթացքում հայտնվում են արտաքին ուժերի օրակարգերի շրջանակում՝ կորցնելով ինքնուրույն գործելու կարողությունը: Այս առումով Միացյալ Հայաստանի գաղափարի քննարկումը դուրս է զուտ պատմական կամ զգացմունքային դաշտից և մտնում է ազգային ռազմավարական մտածողության տիրույթ:

Հայ Յեղափոխական Դաշնակցության համար Միացյալ Հայաստանի գաղափարը երբեք չի եղել պարզապես ռոմանտիկ հայրենասիրական հռչակագիր: Այն ձևավորվել է որպես հստակ քաղաքական ծրագիր՝ հիմնված այն կանխադրույթի վրա, որ տարածքային սահմանափակվածությունը փոքր պետությունների համար ստեղծում է անվտանգության կառուցվածքային խնդիրներ: Սակայն այս պնդումը պահանջում է հստակեցում և վերլուծություն: Պատմականորեն փոքր տարածք ունեցող պետությունները գոյատևել են տարբեր կառուցվածքային ձևաչափերով. որոշները՝ ուժեղ դաշնակցային համակարգերի միջոցով, մյուսները՝ տնտեսական հզորության կամ տեխնոլոգիական գերազանցության հաշվին: Հայաստանի դեպքում խնդիրը ոչ միայն տարածքային սահմանափակվածությունն է, այլև այդ սահմանափակվածության հարաբերությունը շրջափակման, հաղորդակցային կախվածության և հակամարտությունների մշտական սպառնալիքի հետ: Այդ գործոնների համադրությունն է, որ ստեղծում է բարձր խոցելիության միջավայր: Այդ հանգամանքների ամբողջությունը ցույց է տալիս, որ Միացյալ Հայաստանի գաղափարը կարող է դիտարկվել որպես այս առարկայական խնդիրների երկարաժամկետ վերաձևման փորձ, բայց միայն այն դեպքում, եթե այն ընկալվի ոչ թե որպես ինքնաշխատ լուծում, այլ որպես փուլային և պայմանական ռազմավարական ուղղություն:

Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ստանում Հայ Յեղափոխական Դաշնակցության մեծ տեսաբան և գաղափարախոս Սարգիս Զեյթլյանի գաղափարական ժառանգությունը, որը փորձեց Հայ Դատի սահմանները տեղափոխել անցյալի արդարության պահանջից դեպի ապագայի պետականության կառուցման ռազմավարություն: Զեյթլյանի մոտեցման առանցքային արժեքն այն է, որ նա Միացյալ Հայաստանը չէր դիտարկում որպես քաղաքական դրվագ կամ հուզական նպատակ, այլ որպես պատմական գործընթաց, որի իրականացումը պահանջում է երկարաժամկետ քաղաքական կամք և գաղափարական հետևողականություն: Նրա պատկերացմամբ՝ ազգային նպատակները չեն սպառվում մեկ սերնդի քաղաքական օրակարգով, այլ պահանջում են շարունակականություն, համակարգային հիշողություն և գաղափարական անսասանություն՝ որպես պետական մտածողության հիմք:

Սակայն այս մոտեցումը չի կարող սահմանափակվել միայն գաղափարական դաշտով և պահանջում է խորքային վերարժևորում՝ հատկապես այն հարցում, թե ինչպես է պատմական արդարության գաղափարը վերածվում իրական քաղաքական արդյունքի:

Սարգիս Ջեյթլյան

Պատմական փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ ամենաօրինաչափ և հիմնավորված ազգային պահանջներն ինքնին չեն վերածվում քաղաքական իրականության, եթե դրանց թիկունքում բացակայում են գործող մեխանիզմները՝ պետական կամք, համակարգված հետևողականություն ու ուժային, դիվանագիտական և տնտեսական կարողությունների համադրություն: Այլ կերպ ասած՝ միջազգային հարաբերություններում պատմական կամ իրավական հիմնավորումը բավարար չէ, եթե այն չի ամրապնդվում ազդեցության գործիքներով և երկարաժամկետ ռազմավարական ներկայությամբ:

Հետևաբար, Միացյալ Հայաստանի գաղափարը կենսունակ կարող է լինել միայն այն դեպքում, երբ այն չի դիտարկվում որպես հռչակված նպատակների համակարգ, այլ ձևավորվում է որպես բազմամակարդակ ռազմավարություն, որտեղ գաղափարական ձևակերպումն ուղեկցվում է քաղաքական գործիքակազմով, դիվանագիտական աշխատանքով և տնտեսական ու անվտանգության կարողությունների հետևողական զարգացմամբ:

Այս խորապատկերում, ազգային ազատագրական պայքարի գաղափարը Ջեյթլյանի մոտ առավել ամբողջական է, քանի որ այն ներառում է բազմաշերտ մոտեցում: Ժամանակակից պայմաններում այդ մոտեցումը կարելի է վերածել կոնկրետ ռազմավարական օրինակի: Դիվանագիտական մակարդակում դա նշանակում է միջազգային օրակարգում հայկական հարցի վերաիմաստավորում՝ ոչ միայն որպես պատմական արդարության խնդիր, այլև որպես անվտանգության և ինքնորոշման հարց: Տնտեսական մակարդակում դա ենթադրում է Սփյուռքի ներուժի համակարգված օգտագործում ոչ թե հատվածական ներդրումների, այլ երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի միջոցով: Ռազմաքաղաքական մակարդակում անհրաժեշտ է անցում կատարել պաշտպանական մտածողությունից դեպի զսպման համակարգի ձևավորում, որը կստիպի հակառակորդին հաշվի նստել հնարավոր կորուստների հետ: Գաղափարական մակարդակում առաջնային է հանրային խոսույթի փոփոխությունը՝ հրաժարում պարտվողական հոգեբանությունից և երկարաժամկետ նպատակների վերականգնում:

Ներկա քաղաքական իրականության պայմաններում ՀՀ գործող իշխանությունների կողմից առաջ է քաշվում, այսպես կոչված, «Իրական Հայաստանի» մոտեցումը, որն ընդգծում է խիստ սահմանափակ նպատակներ և գոյություն ունեցող սահմանների ներսում «անվտանգության և կայունության» ապահովում: Առաջին հայացքից, այս մոտեցումը տեսականորեն կարող է ունենալ որոշակի խելամիտ հիմք, հատկապես կարճաժամկետ անվտանգության տեսանկյունից, սակայն, իրականում, այն պարունակում է մի շարք խորքային և ռազմավարական վտանգներ: Առաջինը՝ արտաքին դերակատարներից կախվածության խորացումն է, քանի որ փոքր պետությունը, չունենալով լայն ռազմավարական օրակարգ, ստիպված է ապավինել արտաքին երաշխիքներին: Երկրորդը՝ բանակցային դիրքերի թուլացումն է, քանի որ երկարաժամկետ տեսլականից հրաժարումը սահմանափակում է մանևրելու հնարավորությունները: Երրորդը՝ հասարակության կրավորականացումն է, երբ բացակայում է մեծ նպատակը, որը կարող է միավորել և առաջ մղել հանրության տարբեր շերտերին: Հետևաբար, խնդիրը ոչ թե այս մոտեցումը պարզապես մերժելն է, այլ այն փոխարինելը ավելի համապարփակ և կենսունակ ռազմավարությամբ:

Աշխարհաքաղաքական միջավայրը, որտեղ գործում է Հայաստանը, գտնվում է շարունակական փոփոխության մեջ և չի ենթարկվում մեկ ընդհանուր բանաձևի, ուստի, այն ավելի ճիշտ է դիտարկել որպես հնարավոր սցենարների համադրություն: Թուրքիայի պարագայում տնտեսական ճգնաժամի խորացումը և ներքին քաղաքական լարվածության աճը կարող են մի կողմից սահմանափակել նրա արտաքին ակտիվությունը, սակայն, մյուս կողմից՝ խթանել ավելի ագրեսիվ արտաքին քաղաքական վարքագիծ՝ ներքին խնդիրների շեղման նպատակով: Այս երկակի միտումը Թուրքիան դարձնում է ոչ թե կանխատեսելի, այլ փոփոխական և իրավիճակային արձագանքների ենթակա ուժային կենտրոն: Իրանի պարագայում, չնայած արտաքին ճնշումներին, նրա ռազմավարական շահը Հարավային Կովկասում ուժերի հավասարակշռության պահպանման մեջ մնում է համեմատաբար կայուն, ինչը ստեղծում է համագործակցության հնարավորություններ՝ հատկապես էներգետիկ, տրանսպորտային և անվտանգության ոլորտներում՝ պայմանով, որ դրանք դիտարկվեն փոխադարձ ռազմավարական շահերի շրջանակում: Ռուսաստանի

դիրքերի վերադասավորումը և ռեսուրսների վերաուղղումն այլ ռազմավարական թատերաբեմեր ստեղծում են ազդեցության որոշակի վակուում Հարավային Կովկասում, որն աստիճանաբար փորձում են լրացնել այլ կենտրոններ՝ հատկապես արևմտյան պետությունները՝ ձևավորելով մրցակցային ազդեցությունների նոր դաշտ: Այս իրավիճակը տարածաշրջանը վերածում է բազմաբևեռ և մրցակցային համակարգի, որտեղ փոքր պետությունների համար ձևավորվում է մանևրի հնարավորություն, սակայն այն կարող է իրացվել միայն այն դեպքում, եթե առկա է հստակ և երկարաժամկետ ռազմավարություն, ինչպես նաև արագ հարմարվելու և փոփոխվող ուժային հարաբերություններին արձագանքելու կարողություն:

Այս համատեքստում հնարավոր է առանձնացնել մի քանի սցենար՝ արտաքին ուժերի մրցակցության սրում, սահմանափակ կայունացում կամ տարածաշրջանային վերաձևումներ: Յուրաքանչյուր սցենար ունի իր հնարավորություններն ու վտանգները, և դրանցից որևէ մեկն ինքնին չի ապահովում ցանկալի արդյունք: Սա նշանակում է, որ ռազմավարությունը պետք է լինի ճկուն և պատրաստ՝ տարբեր զարգացումներին արձագանքելու:

Միացյալ Հայաստանի գաղափարի իրատեսականությունը պետք է գնահատել հենց այս բազմաշերտ միջավայրում: Այն չի կարող դիտարկվել որպես կարճաժամկետ քաղաքական ծրագիր, այլ պետք է ընկալվի որպես երկարաժամկետ գործընթաց: Այս գործընթացը կարելի է բաժանել փուլերի՝ կարճաժամկետ՝ պետական ինստիտուտների ամրապնդում և տնտեսական կայունացում, միջնաժամկետ՝ ազդեցության ընդլայնում տարածաշրջանում, և երկարաժամկետ՝ հնարավոր աշխարհաքաղաքական փոփոխությունների օգտագործում: Այս մոտեցումը թույլ է տալիս գաղափարը դուրս բերել հուզական դաշտից և դարձնել ռազմավարության ձևավորման մաս:

Միաժամանակ անհրաժեշտ է ընդունել, որ այս ճանապարհը լի է անորոշություններով և վտանգներով: Միջազգային դիմադրությունը, ռազմական էսկալացիայի վտանգը և ներքին սահմանափակումները կարող են լրջորեն խոչընդոտել ցանկացած նախաձեռնություն: Սակայն այդ վտանգների գիտակցումը ոչ թե սահմանափակում է ռազմավարական մտածողությունը, այլ հնարավորություն է ստեղծում այն կառուցել ավելի հաշվարկված, հավասարակշռված և երկարաժամկետ հեռանկարի վրա՝ իրատեսական քաղաքական տրամաբանությամբ:

Ներքին համախմբվածության խնդիրն այս ամբողջ գործընթացում առանցքային է: Առանց հասարակական վստահության և համակարգային կայունության որևէ ռազմավարություն չի կարող արդյունավետ լինել: Միացյալ Հայաստանի գաղափարը կարող է դառնալ համախմբող գործոն, բայց միայն այն դեպքում, եթե այն ներկայացվի որպես բաց և զարգացող ռազմավարություն, այլ ոչ թե կարծրացած գաղափարախոսություն:

Ուրեմն պետք է ընդգծել, որ Միացյալ Հայաստանի գաղափարը չի կարող դիտարկվել ոչ որպես ցնորք, ոչ էլ որպես վտանգավոր արկածախնդրություն: Այն իր էությամբ քաղաքական տեսլական է, որը կարող է պահպանել իր արդիականությունը միայն այն դեպքում, երբ վերածվում է վերլուծված, փուլային և կիրառելի ռազմավարության: Առանց մեծ և երկարաժամկետ տեսլականի պետությունները կորցնում են իրենց ուղղությունը, սակայն տեսլականն ինքնին բավարար չէ. այն պետք է հիմնվի գործիքակազմի, հաշվարկի և քաղաքական կամքի վրա:

Այսօր, երբ տարածաշրջանը գտնվում է խորքային աշխարհաքաղաքական ցնցումների փուլում, բացվում են հնարավորությունների պատուհաններ, որոնք կարող են լինել ինչպես անցողիկ, այնպես էլ ճակատագրական: Մենք պարտավոր ենք պատրաստ լինել այդ իրականությանը ոչ միայն ռազմական և դիվանագիտական իմաստով, այլև գաղափարական մակարդակում՝ վերականգնելով ռազմավարական հեռանկարին միտված համակարգային մտածողությունը: Միացյալ Հայաստանի գաղափարն այդ համատեքստում պետք է ընկալվի որպես ազգային կողմնացույց և երկարաժամկետ հանգանակ, առանց որի քաղաքական ընթացքը կորցնում է իր պատմական ուղղվածությունը:

Ինչպես Սարգիս Ջեյթլյանն է նշել՝ ազգային ազատագրական պայքարը չի սահմանափակվում մեկ սերնդով, դա իրարահաջորդ սերունդների գործն է: Ազգային նպատակները չեն իրականանում ակնթարթորեն, և մեր խնդիրը ոչ թե արագ հաղթանակներ արձանագրելն է, այլ ճիշտ ուղղության պահպանումը՝ պատմության երկար ընթացքի մեջ: Այդ պայքարը չի սնվում թշնամու նկատմամբ ատելությունից, այլ՝ ազգային պատասխանատվությունից և պատմական հիշողությունից, այն գիտակցումից, որ ժողովուրդները գոյատևում են ոչ թե վերացական գաղափարներով, այլ՝ հստակ նպատակով:

Եվ հենց այդ իմաստով Միացյալ Հայաստանը ոչ թե չիրագործվող նախագիծ է, այլ շարունակվող հավատք՝ պետություն ձևավորող գաղափարական առանցք, որը պետք է ապրի ներկայի մեջ և փոխանցվի ապագային:

Միակ ապաւէնը (մայիս 28ի առիթով)

Սարգիս Ջէյթլեան

(Խմբագրական «Ազդակ Շաբաթօրեայ Դրօշակ»ի, ԺԴ Տարի, թիվ 20, 29 Մայիս 1983)

Տարաբախտ բանաստեղծը ամբողջ պատմութիւն մը կը խտացնէր, երբ «սերունդներ դուք ձեզ ճանաչէք Սարդարապատից» պատգամով կը շնչաւորէր հայ ժողովուրդի հրաշափառ յարութեան նուիրուած իր քայլերգը:

Յաղթական ճակատամարտներէ շատ աւելին կը խորհրդանշէ Սարդարապատի հերոսամարտը եւ, այդ համոզումով ալ, Սեւակները ազգային ինքնաճանաչումի անսպառ աղբիւր մը տեսան հայոց աշխարհի խենթերուն գտած այդ հնարին մէջ:

Մանաւանդ այսօր, հայոց պատմութեան լուսաւոր այդ օրերէն 65 տարիներ ետք, պահանջատէր մեր ժողովուրդին նորահաս սերունդները ամէն պատճառ եւ իրաւունք ունին 28 Մայիս 1918ի դարագլուխ բացող քայլին մէջ փնտռելու եւ գտնելու իրենց ազգային ինքնավստահութեան միակ ապաւէնը:

Վերջին հաշուով ժամանակը իրեն հետ կը տանի գաղափարական բոլոր հաշիւները եւ վէճերը, գալիքին կտակելով միայն այն, որ կրնայ տոկալ դարերու մաշումին՝ իբրեւ ազգ մը ապրեցնող ուժերուն գերագոյն նուիրագործումը:

Անկախ Հայաստանի Հանրապետութեան հռչակումը եւ ազգային պետականութեան մը նորագոյն անօթին կերտումը փաստօրէն եղան հանդիպման կէտը այն բոլոր ուժերուն, որոնք հայ ժողովուրդին հետ դիմադրեցին դարաւոր ստրկութեան գործած աւերին: Հայոց պատմութեան անկիւնադարձային այդ խոյանքին մէջ, ազգերու գոյատեւումը պայմանաւորող յեղափոխական երկունքով մը, կը շղթայազերծուէին հազարամեակներու վրայ երկարած մեր անցեալին մղիչ ուժերը: Իրարու կը հանդիպէին ազատօրէն ստեղծագործելու, անկախ ապրելու եւ միացեալ հայրենիք մը նուաճելու հայ ժողովուրդին դարաւոր ձգտումները: Թուրքիոյ ցեղասպանական ոճիրը կը սպառնար Հայաստանի ու հայութեան մնացորդացին եւ միայն նման սպառնալիքի մը տարողութեան համապատասխան վճռականութեամբ կարելի էր շրջել պատմութեան անիւը:

Ազգային այդ վճռականութեան պսակադրումը եղաւ Մայիս 28ի Անկախութեան քայլը:

Ահա թէ ինչո՛ւ մենք պայքարողն ենք, որպէսզի ոչ ոք կարենայ մեր ժողովուրդէն խլել ազգային ինքնաճանաչումի անփոխարինելի ապաւէնը՝ Ազատ Անկախ եւ Միացեալ Հայաստանի ձգտումը, զայն արեամբ նուաճելու Արամներու մարտունակութիւնը:

Անփոխարինելի է այդ ապաւէնը, նա՛խ հայ ժողովուրդին յիշողութիւնը եղծումի բոլոր ճիգերուն դէմ պաշտպանելու համար:

Քաղաքական աշխարհը ոչ միայն անպատիժ ձգած է հայութեան դեմ գործուած ցեղասպանական ոճիրը եւ հայրենի մեր հողերուն ապահայացումը եւ բռնագրաւումը, այլեւ՝ նոյնիսկ յոգնութիւնը յանձն չ՛առներ պատմական հայրենիքով եւ պետական մշակոյթով հազարամեակներ ապրած ազգի մը գոյութեան մեր իրաւունքը փաստագրելու համար: Մեր օրերու մարդկութեան համար Հայը ընդհանրապէս ազգային փոքրամասնութիւն է եւ, լաւագոյն պարագային, պատմութեան, փոշիներուն տակ հազիւ խլրտող ազգային մշակոյթ մը: Հայաստանի Հանրապետութեան փաստը, իբրեւ խարիսխը ներկայ Հայաստանի խորհրդային վարչաձեւով հայկական պետականութեան, կը հանդիսանայ ինքնահաստատումի մեր պահանջին հատու զէնքը:

Տակաւին քանի մը շաբաթ առաջ նոյնինքն թուրք պետութիւնը կու տար ապացոյցը ազգային մեր հիշողութիւնն ալ եղծելու ընդհանուր այդ վերաբերումին, երբ պետական հրահանգով պատրաստուած «հայկական թղթածրար»ի իր տարբերակին ամբողջ տրամաբանութիւնը կը հիմնէր նոյն ճիգին վրայ, իբրեւ թէ փաստելով որ հայ ժողովուրդը ոչ մէկ ատեն, իր պատմութեան ընթացքին, կրցած է լիիրաւ ազգի իր հանգամանքը հաստատող միաձոյլ հայրենիք եւ ազգային պետականութիւն նուաճել:

Մայիս 28-ի պատմական քայլը իր լրիւ իմաստը կը ստանայ ճիշդ ա՛յս պատճառով: Հայ ժողովուրդին անկախ հայրենիք եւ ազգային պետականութիւն բերելու իր շօշափելի նուաճումէն անդին, Հայաստանի Հանրապետութեան փաստը կրակով ու արեամբ

մաքրեց հայ ազգի պետական անկախութեան յիշողութիւնը կրծող ժանգերը: Հեռաւոր անցեալի մշուշին մէջ թաղուած հայոց թագաւորներուն փոխարէն՝ Վրացեաններ, Ռուբենեանէր, եւ Դրոներ միս ու ոսկոր տուին դարաւոր գերութեան դիմադրած հայ ժողովուրդի Անկախութեան ձգտումին: Պետական ազգի մեր յիշողութեան այդ ապաւէնը ոչ ոք կրնայ եղծել, մանաւանդ՝ խլել գալիք սեռնդներէն:

Անփոխարինելի է այդ ապաւէնը, ա՛պա, հայ ժողովուրդին մարտունակութիւնը վերահաստատելու ճամբուն վրայ:

Ոճրագործը անպատիժ ձգելով զոհին յանցանքը մատնանշող դատաւորներու կը նմանին յատկապէս օտար այն հեղինակները, որ հայոց պատմութեան հեռաւոր թէ մօտաւոր անցեալին վրայ հակելով՝ նոյնինքն հայութեան մէջ կը փնտռեն մեր աշխարհին բաժին հանուած չարիքներու պատասխանատուութիւնը: Կը տեսնեն միայն մեր ժողովուրդին խաղաղասիրութիւնն ու համբերատարութիւնը. հայուն անմիութիւնն ու միայն դանակը ոսկորին հասնելէ ետք ըմբոստանալու անոր հակամիտութիւնը. դարերով տաճարներ կերտելու եւ մատեաններ մանրանկարելու հայկական փորձառութիւնը՝ երբ ռազմականօրէն անառիկ ամրոցներ պէտք էին արշաւողներու դէմ: Բայց չեն ուզեր կանգ առնել այդ բոլորի կողքին ու ետին եռեւեփող հայ ժողովուրդի սրբազան ըմբոստացումներու առջեւ, ազգային մեր մարտունակութեան պարբերական շղթայազերծումներուն դիմաց:

Հայ ժողովուրդի պատմական փորձառութիւնը գլխիվայր շրջուած պատկերով դիտելու եւ արժեւորելու այդ փորձութիւնը փաստօրէն այսօր կ՛առաջնորդէ քայլերը քաղաքական այն բոլոր ուժերուն, որոնք լակոնական համարձակութեամբ մը չեն վարանիր պահանջատէր հայութեան հաշուոյն իրենք ճշդելու «հայավարի» եւ «ոչ-հայկական» արարքները... «օրինապահ» հայու իրենց գունազարդած տիպարը եւ անոր

Դարոյր Սեւակ

ինքնալքումն ու պարտուողականութիւնը դրուատելով՝ հակադրաբար մեր ժողովուրդի արեան կանչին ականջալուր այն հայերուն, որոնք չեն ուզեր խզուիլ դարերը կտրած եւ մեր օրերը լուսաւորող Անկախ Հայաստանի երազէն:

1918ին, Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսէի ռազմաճակատներուն վրայ օրհասական իր կռիւը առանձին մղելով եւ յաղթանակ կերտելով, մեր ժողովուրդը միանգամընդմիշտ իր ճակատէն սրբեց դարաւոր գերութեան մուրը եւ ոչ ոք իրաւունք

ունի, գիտութեամբ թէ անգիտութեամբ, մոռնալու կամ անտեսելու այս փաստը: Մայիս 28ի հայութիւնը ոչ միայն լքուած էր քաղաքական աշխարհէն, ոչ միայն անհաւասար ուժերով կդիմագրաւէր Հայասպանութեան վճիռով արշաւող մեծ երկրի մը զօրքերը, այլեւ՝ ռուսական բանակի նահանջէն ետք, դարերէ ի վեր առաջին անգամ ըլլալով, յանկարծ դէմ յանդիման կը գտնուէր պետական ազգի մը տարողութեամբ ռազմունակ ուժ դառնալու մարտահրաւէրին: Հայ ժողովուրդը կրցաւ այդ ուժին վերածուիլ, որովհետեւ ի հեճուկս դարերու մաշումին եւ երկարատեւ գերութեան՝ անոր մէջ անդուլ շարժած եւ ժայթքումի իրենց ելքը փնտռած էին ազգային մեր մարտունակութեան «կամրջընկէց» ծառացումի ալիքները: Ոչ մէկ բռնակալութեան կամ օտար տիրապետութեան համակերպելու հայութեան նոյն այդ մարտունակութենէն իր թափը առած էր Հայաստանի Հանրապետութեան խոյանքին ենթահողը պատրաստած յեղափոխական մեր երկունքը՝ ազատագրական մեր շարժումին շուրջ երեսնամեայ մեր պայքարը:

Իբրեւ մարտունակ ազգի մեր արժանաւորութեան փառապսակը՝ մայիս 28ի յաղթանակը եղաւ ու պիտի մնայ հայ ժողովուրդին միակ ապաւէնը՝ հայ ժողովուրդին առջեւ անարգ համակերպումի ուղին գծող բոլոր ուժերուն դէմ: Անփոխարինելի է այդ ապաւէնը, վերջապէ՛ս, հայ ժողովուրդին ուղղուած եւ քաղաքական իրատեսութեամբ շպարուած բոլոր յորդորներուն դէմ:

Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի նպատակով բանաձեւուած իր ուղին գտնելու համար, հայ ժողովուրդը մարդկային պատմութեան ամէնէն մութ դարերը ճեղքեց եւ, ազգերու ընդհանուր արժեչափերով, ամէնէն սուղ գին վճարող ազգը եղաւ յանուն իր անկախութեան: Մեծապետական ուժերու ո՛չ մէկ հաւասարակշռութիւն եւ ընկերաքաղաքական ոչ մէկ վարչաձեւ կրնայ ստիպել մեր ժողովուրդը, որ կոնակ դարձնէ այդքան արեամբ գնուած ազգային քաղաքական իր հասունութեան: Ո՛չ. հայ ժողովուրդին ազգային վերականգնումը տարբեր երաշխիք չի կրնար ունենալ: Կ՚ը բաւէ որքան տուրք վճարեցինք մասնատուած հայրենիք եւ բաժան հայութիւն ըլլալու պատմական չարիքին: Կը բաւէ որքան ուժ մսխեցինք՝ մեր անկախութեան սեղմումին վրայ խարսխուած տիրապետութեանց հաշւոյն: Կը բաւէ որքան հեռու տեղ գացինք՝ ազատօրէն ստեղծագործելու հնարաւորութիւն ունենալու համար:

Եթէ իրապաշտութիւն կը թուի հայ ժողովուրդին ազգային միութիւնը, հողային ամբողջականութիւնը, ազատութեան իրաւունքը եւ անկախութեան ձգտումը քաղաքական այս կամ այն ուժին եւ պայմաններուն այս կամ այն չափով զոհելու դիրքորոշումը, այդ պարագային իրատես ոչ մէկ քաղաքականութեամբ կարելի է բացատրել Յանդգնութիւնը Անոնց, որ Մայիս 1918ի ճգնաժամային այդ օրերուն իրենց ազգային ճակատագիրը իրենց իսկ ձեռքերով դարբնելու որոշումը տուին եւ հայ ժողովուրդին յարութեան կոիւը մղեցին:

Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի կերտումը, իր դիմագրաւուած բոլոր խոչընդոտներով, հայ ժողովուրդի պատմական վերականգնումը նուաճելու իրատեսութեան առջեւ դրուած կարելի միակ ելքն էր:

Իբրեւ այդպիսին՝ կը մնայ նաեւ միակ ապաւէնը ինքնաճանաչումի եւ ինքնահաստատման, ազգային եւ հողային իր ամբողջականութեան ուղին որոնող մեր օրերու հայութեան, անոր ազատագրութեան համար պայքարող եւ հայոց պատմութեան Անկախ Հայաստանի ձգտումէն ներշնչուող բոլոր սերունդներուն: ■

ՍԱՐԳԻՍ ՋԷՅԹԼԵԱՆ, ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ,
Հատոր առաջին, էջ 189-191.Երեւան եւ Լոս Անճըլէս, 1995

«Օղակ» գործողության նախերգանքը. Արցախի հյուսիսային դարպասի՝ Գետաշենի և Մարտունաշենի անկումը

Մարի Հովհաննիսյան
Քաղաքագիտության մագիստրոս

1991 թվականի գարնանային արևն Արցախի հյուսիսային դարպաս Գետաշենի և Մարտունաշենի համար բերեց ոչ թե զարթոնք, այլ մահաբեր «Օղակ»:[1] Սա սովորական զինվորական գործողություն չէր, այլ Ադրբեջանի հատուկ նշանակության (ՕՄՕՆ) զինված ջոկատների և ԽՍՀՄ ՋՈՒ և ՆԳՆ ներքին զորքերի ստորաբաժանումների համատեղ իրականացրած պետական ահաբեկչություն Խորհրդային Միության քաղաքացի հանդիսացող հայ ժողովրդի դեմ,[2] որի նպատակն էր վերջնականապես լուծել «Ղարաբաղյան հարցը» բռնի տեղահանման և սպանդի միջոցով:

Պատմական ակնարկ

Գետաշենը պատմական Հայաստանի Մեծ Հայքի Արցախ աշխարհի Գարդման գավառի ամենամեծ բնակավայրն է՝ փռված Մռավ լեռնաշղթայի հյուսիսային անտառածածկ գոտում, Կյուրակ գետի խոր ձորի մեջ:[3]

1923 թ. հուլիսի 7-ին կազմավորված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ), համաձայն հռչակագրի, պետք է ընդգրկեր երկրամասի ողջ հայաբնակ տարածքը: Սակայն Մայր Հայաստանից մարզը աշխարհագրորեն մեկուսացնելու նպատակով դրա սահմաններից դուրս թողնվեց ամբողջ Հյուսիսային Արցախը՝ նախկին Գյուլիստանի մելիքության տարածքը: Թեև 1930 թ. օգոստոսի 8-ին ձևավորվեց Շահումյանի շրջանը, Գետաշենի ենթաշրջանը (6 հայկական և մեկ խառը բնակչությամբ գյուղերով) շրջանների խոշորացման պատրվակով անջատվեց Շահումյանից: Այն Նարիմանովի շրջան անվամբ կցվեց Սաֆարալիևի ադրբեջանական շրջանին, ինչը միտված էր հայ ազգաբնակչության հոծ զանգվածների տարանջատմանը: 1938 թ. հուլիսի 19-ին Նարիմանովի շրջանը վերանվանվեց Խանլարի շրջան, որից հետո տեղի ունեցավ հայ պաշտոնյաների զանգվածային ազատում զբաղեցրած պաշտոններից: ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս մնացած հայկական բնակավայրերը ներառվեցին Շահումյանի, Խանլարի, Գետաբեկի, Շամխորի և Դաշքեսանի (պատմական Քարհատ) շրջանների կազմում, որոնց բնակչությունը տասնամյակներ շարունակ անարդյունք պայքարեց ինքնավար մարզի կազմի մեջ ընդգրկվելու համար:[4]

Գետաշենի և Մարտունաշենի գրոհը. Ռազմական կանոնավոր ուժերի և պատժիչ ջոկատների տանդեմը

ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս մնացած այս երկու խոշոր հայաբնակ կենտրոնները, հանդիսանալով Հյուսիսային Արցախի բնական դարպասը, արդեն իսկ հակամարտության թիրախում էին: Սակայն 1991 թ. գարնանը ճնշումները վերածվեցին բացահայտ ռազմական ագրեսիայի:[5]

1991 թ. ապրիլի 29-ի լույս 30-ի գիշերը ԽՍՀՄ զինված ուժերը (մասնավորապես՝ Կիրովաբադում տեղակայված 4-րդ բանակի ստորաբաժանումները) և Ադրբեջանի ՆԳՆ հատուկ նշանակության միլիցիայի ջոկատները (ՕՄՕՆ/ՄՀՆՋ) նախաձեռնեցին գյուղերի դեմ միաժամանակյա և համակարգված գրոհ:[6]

Գործողության կոդային անվանումը՝ «Օղակ», ամբողջությամբ արտահայտում էր դրա իրականացման մարտավարական մեխանիզմը: Առաջին փուլում խորհրդային կանոնավոր զորքերը և ներքին զորքերի ստորաբաժանումները զրահատեխնիկայի կիրառմամբ ստեղծում էին բնակավայրերի անթափանց ռազմական շրջափակում (օղակ)՝ մեկուսացնելով գյուղերն արտաքին աշխարհից և կտրելով ինքնապաշտպանական ուժերի նահանջի կամ օգնության հնարավոր ուղիները: Երկրորդ փուլում, օգտվելով ստեղծված անպաշտպան վիճակից, ադրբեջանական պատժիչ ջոկատներն ու ՕՄՕՆ-ը ներխուժում էին գյուղերի տարածք՝ իրականացնելով բնակչության բռնի տեղահանում, թալան և սպանդ:

Ուժերի հարաբերակցությունը և գրոհի ընթացքը

Գետաշենի և Մարտունաշենի դեմ ձեռնարկված ռազմական գործողությունն իր ծավալներով ու ներգրավված միջոցներով աննախադեպ էր խաղաղ

Գետաշեն

Մարտունաշեն

բնակչության դեմ իրականացվող պատժիչ արշավանքների պատմության մեջ: Համատեղ գրոհին մասնակցում էր խորհրդային կանոնավոր բանակի, Ադրբեջանի ՕՄՕՆ-ի և ադրբեջանցի զինյալների շուրջ 13.000-անոց անձնակազմ: Հարձակման թափն ապահովում էր հսկայածավալ զրահատեխնիկան՝ 207 մարտական մեքենա, որոնցից շուրջ 100-ը տանկեր էին: Օդային աջակցության և բնակավայրերի ահաբեկման նպատակով գործողության մեջ էին դրվել «Կոկորդիլոս» և «Կոբրա» տիպի 6 մարտական ուղղաթիռներ:

Գրոհը մեկնարկեց գյուղերի շուրջ տեղակայված գերիշխող բարձունքներից ընթացող ծանր հրետակոծությամբ: Այդ օրերին արձանագրված վավերագրական վկայությունների համաձայն՝ բնակավայրեր ներխուժած որոշ խորհրդային զինվորների դեմքերը պատված էին կանաչուկով, ինչը կիրառվում էր տեղանքում սեփական զինծառայողներին ադրբեջանցի զինյալներից տարբերակելու և հատուկ նշանագրման նպատակով:[7]

Այս ահռելի ռազմական ճնշման ներքո շուրջ 200 տնտեսություն ունեցող Մարտունաշեն գյուղը ենթարկվեց անողոք հրետակոծության՝ գրեթե հիմնովին ավերվելով ու հրդեհվելով: Միևնույն ժամանակ, ավելի քան 1497 հայ ընտանիքով բնակեցված Գետաշենում բնակչությունը հավաքվեց գյուղի կենտրոնում՝ փորձելով կազմել կենդանի ինքնապաշտպանական օղակ, և դիմադրել բռնագաղթին: Այդուհանդերձ, ուժերի ծայրահեղ անհավասարության պայմաններում, մայիսի առաջին օրերին ԽՍՀՄ կայսերական բանակի զրահատեխնիկայի անմիջական ու կոշտ ճնշման տակ երկու գյուղերի անկումը եղավ միաժամանակյա: 1991 թ. ապրիլի 30-ից մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածում Հյուսիսային Արցախի խոշորագույն հայաբնակ կենտրոնները՝ Գետաշեն և Մարտունաշեն գյուղերը, հիմնովին ավերվեցին, իսկ ավելի քան 3.500 խաղաղ բնակիչներ ենթարկվեցին բռնագաղթի:[8] Մայիսի սկզբին՝ ընդամենը մեկ շաբաթվա ընթացքում, Գետաշենի ենթաշրջանում ավելի քան 27 հայերի սպանության և 100-ից ավելի խաղաղ բնակիչների վիրավորման փաստագրված դեպքերն ակնառու վկայում են «Օղակ» ռազմաահաբեկչական գործողության բացահայտ ցեղասպանական բնույթի մասին:[9]

Ինքնապաշտպանության առաջնորդները. Թաթուլ Կրպեյան և Սիմոն Աչիքգյոզյան

Գետաշենի և Մարտունաշենի հերոսական ինքնապաշտպանությունը կազմակերպվեց կամավորական ջոկատների կողմից, որոնց առաջնորդների անունները ոսկե տառերով գրվեցին հայոց պատմության մեջ:

Թաթուլ Կրպեյան (Գետաշենի արծիվը). ԵՊՀ պատմության ֆակուլտետի ուսանող Թաթուլ Կրպեյանը 1990 թ. սեպտեմբերից ստանձնել էր Գետաշենի ենթաշրջանի ընդհանուր ինքնապաշտպանության հրամանատարությունը: Նա ոչ միայն զինվոր էր, այլև ուսուցիչ. գյուղի դպրոցում երեխաներին դասավանդում էր հայոց պատմություն, որի դասավանդումը խորհրդային տարիներին փաստացի արգելված էր: Թաթուլն ասում էր. «Ինչո՞ւ եք վախենում մահից: Հողի համար ես հենց հիմա պատրաստ եմ մեռնելու... Ես ոչ մի անգամ չեմ գնա Երևանի օդանավակայանում իջնեմ, ասեմ՝ Գետաշենը հանձնեցի»: Ապրիլի 30-ին, օգտագործելով իրավիճակը, նա պատանդ վերցրեց ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի Բաքվի գնդի հրամանատար գնդապետ Մաշկովին՝ փորձելով կանխել գյուղացիների կոտորածը: Բանակցությունների ժամանակ Թաթուլը դավադրաբար սպանվեց:[10]

Սիմոն Աչիքգյոզյան (Դեդ). 52-ամյա գեոֆիզիկոս, գիտությունների թեկնածու Սիմոն Աչիքգյոզյանը 1991 թ. ապրիլին ստանձնել էր Մարտունաշենում գործող հայտնի «Արաբո» ջոկատի հրամանատարությունը: Ապրիլի 30-ին նա իր մարտիկների հետ միասին մտավ անհավասար մարտի մեջ՝ պաշտպանելով Մարտունաշենի դիրքերը ԽՍՀՄ բանակի տանկերի և ադրբեջանական ՕՄՕՆ-ի դեմ: Նա հերոսաբար զոհվեց դիրքերում՝ հնարավորություն ընձեռելով խաղաղ բնակչության մի մասին նահանջելու:[11]

Թաթուլի և Սիմոնի հետ նահատակվեցին նաև նրանց հավատարիմ զինակիցները՝ փոխհրամանա-

Թաթոյլ Կրպեյան

Սիմոն Աչիքգյոզյան

տար Արթուր Կարապետյանը, Հրաչ Դանիելյանը (Զարզանդ) և Վալերի Նազարեթյանը:[12]

Գետաշենի և Մարտունաշենի ողբերգության վավերագրումը. իրավապաշտպան կազմակերպությունների արձանագրություններ և ականատեսների վկայություններ

Գետաշենի և Մարտունաշենի հայաթափումն ուղեկցվել է խաղաղ բնակչության հանդեպ դաժան վերաբերմունքի և խոշտանգումների բազմաթիվ դրսևորումներով, որոնք մանրամասնորեն արձանագրվել են անկախ իրավապաշտպան կառույցների զեկույցներում և վավերագրվել վերապրող ականատեսների անմիջական վկայություններով:

«Օղակ» գործողության ընթացքում Շահումյանի շրջանում գտնվող ռուս գրող և իրավապաշտպան Ինեսա Բուրկովան, անձամբ հանդիպելով Բուզլուխում պատսպարված մարտունաշենցիներին, արձանագրել է նրանց վկայությունները: Իր զեկույցներում Բուրկովան նշում է, որ խաղաղ բնակչության կրած տառապանքները վեր էին մարդկային ուժերից. հրետանային ռմբակոծություններից, փողոցներում դղրդացող զրահատեխնիկայից ու այրվող տներից բացի, ականատեսները նկարագրում էին արկերով ջախջախված հարազատների, տանկերի թրթուրների տակ մնացած մարմինների, կացնով մասնատված հարևանների և կանանց խմբակային բռնաբարությունների սահմռկեցուցիչ տեսարաններ: Իրավապաշտպանն արձանագրել է. «Հայկական Մարտունաշեն գյուղը ոչնչացված է… Շատ քիչ մարտունաշենցիներ են փրկվել: Մի մասը հասցրել է փախչել Գետաշեն, որտեղ շրջափակման մեջ տառապում են սովից, ցրտից և վախից: Մյուսները շարժվել են դեպի անտառ, բացի այդ, ՕՄՕՆ-ականները նրանց հետևից որս են սկսել՝ ավտոմատների կրակահերթով սանրելով տեղանքը»:[13]

Բռնի տեղահանման գործողություններն իրականացվել են մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտումներով: Չեն հարգվել նույնիսկ լրագրողների և բժիշկների անձեռնմխելիության միջազգային օրենքները: Գետաշենի բնակիչ Էլմիրա Հակոբյանը վկայում է, որ ապրիլի 30-ին գյուղ ներխուժած տանկերից ու ՕՄՕՆ-ականներից բացի, տեսել է պատառոտված հարևանին, ում օգնության էր շտապել Երևանից ուղղաթիռով ժամանած վիրաբույժ Գևորգ Գրիգորյանը: Հետագայում բժշկին՝ 16 տարեկանից բարձր բոլոր տղամարդկանց հետ միասին, ադրբեջանցի զինյալները պատանդառեցին և տեղափոխեցին անհայտ ուղղությամբ: Իսկ տան շեմին նստած տարեց կանանց, ովքեր կարծում էին, թե տարիքի պատճառով իրենց ձեռք չեն տա, գնդակահարում էին հենց սեփական տան շեմին:[14]

Ադրբեջանի մեկուսարաններում պատանդների պահման պայմաններն ու նրանց նկատմամբ ֆիզիկական բռնության կիրառման մեխանիզմները կատարման դաժանությամբ հավասարազոր էին սպանություններին: Ականատեսների հուշերում խորը հետք են թողել հատկապես հայր ու որդի Չիլինգարյանների նկատմամբ իրականացված խոշտանգումները: ՕՄՕՆ-ի աշխատակիցները հոր աչքի առջև գլխամաշկ են արել որդուն: Պատանդառված Մեժլում Չիլինգարյանը հետագայում վկայել է, որ իրենց ստիպել են լիզել զինվորական երկարաճիտ կոշիկները, միմյանց ականջները կծել, կիսով չափ կտրել են Արամայիս Սահակյանի ականջը, իսկ ավտոբուսների նստարանների արանքում բերանքսիվայր պառկեցնելով՝ կանգնում էին մարդկանց վրա և դաժանորեն ծեծում:[15]

Այս վայրագությունների կազմակերպված ու սադիստական բնույթը հիմնավորվում է նաև պաշտոնական դատաբժշկական եզրակացություններով: Մասնավորապես, կամավորական դիրքերում զոհվածների մարմինների զննությունը փաստում է անդամախեղումների մասին.

«Ապրիլի 30-ին հիվանդանոց բերեցին Վալերի Նազարյանի դիակը, որի աջ ականջը կտրել էին մինչև սպանելը: Դատաբժշկական փորձագետի եզրակացությամբ առկա էին գլխի հրազենային միջանցիկ վիրավորումներ, քերծվածքներ, կապտուկներ դեմքի և մեջքի վրա, աջ ականջի խեցին կտրված էր»:[16]

Պատանդառված քաղաքացիական անձանց մի մասը, ովքեր հետագայում միջազգային կառույցների միջնորդությամբ ազատ արձակվեցին, կրած ծանր ֆիզիկական ու հոգեբանական խոշտանգումների հետևանքով մահացան հայրենիք վերադառնալուց կարճ ժամանակ անց:

Իրադարձությունների միջազգային փաստագրման տեսանկյունից առանցքային են Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի անդամ, բարոնուհի Քերոլայն Քոքսի վկայությունները: Նա անձամբ այցելել է տարածաշրջան և հավաքագրել վերապրողների ու ականատեսների հիշողությունները:

Իր զեկույցներում բարոնուհին նկարագրում է խաղաղ բնակչության դեմ իրագործված դաժանությունների կոնկրետ դրվագներ, որոնք փաստում են գործողության պատժիչ և ահաբեկչական բնույթը: Քոքսն արձանագրել է տեղահանված տարեց կանանցից մեկի պատմությունը, ում տասը տարի շարունակ կաթվածահար ամուսնուն ՕՄՕՆ-ի զինծառայողները, տունը լքելու հրամանին չենթարկվելու պատրվակով, հրազենային հարվածներով թողել են արնաքամ լինելու, իսկ կնոջը բռնի ուժով դուրս են քաշել տնից: Բարոնուհու զեկույցում հիշատակվում է նաև մեկ այլ սահմոկեցուցիչ դեպք, երբ հղի կնոջն օգնելու փորձ կատարած ամուսնուն ՕՄՕՆ-ականները կրակել են բերանի մեջ՝ կնոջ աչքի առաջ:[17]

Բռնի տեղահանման գործողություններն ուղեկցվել են միջազգային մարդասիրական իրավունքի և Ժնևի կոնվենցիաների նորմերի կոպտագույն խախտումներով: Ոտնահարվել են նույնիսկ զինված հակամարտությունների ժամանակ օգնություն ցուցաբերող բժշկական անձնակազմի և լրագրողների անձեռնմխելիությանը վերաբերող միջազգային իրավական դրույթները:

Այս համատեքստում արձանագրվել է Գետաշենում վիրավորներին բուժօգնություն ցուցաբերող հայ բժիշկների (այդ թվում՝ Երևանից կամավորական հիմունքներով ժամանած մասնագետների) գերեվարումն ու խոշտանգումը ադրբեջանական ՕՄՕՆ-ի կողմից: Տարածաշրջան այցելած միջազգային պատվիրակությունների անդամներն իրենց զեկույցներում հետագայում արձանագրել են պատանդառված բժիշկների մարմինների վրա առկա ֆիզիկական բռնության ակնառու հետքերը:[18] Գերեվարված բժիշկների թվում էր վիրաբույժ Գևորգ Գրիգորյանը, ով Գետաշենում և Ադրբեջանի մեկուսարաններում տեղի ունեցած իրադարձությունները, պատանդների խոշտանգումներն ու բժշկական անձնակազմի նկատմամբ իրականացված բռնությունները հետագայում մանրամասնորեն նկարագրել է իր հուշագրությունում,[19] ինչպես նաև Արցախյան 2020 թվականի պատերազմից հետո Զորյան ինստիտուտի իրականացրած բանավոր պատմության նախագծի շրջանակներում տված հատուկ հարցազրույցում:[20]

Իրավական կողմը. Ինչո՞ւ սա սովորական պատերազմական հանցագործություն չէր, այլ պետական ահաբեկչություն

Միջազգային իրավունքի տեսանկյունից «Օղակ» գործողությունը չի կարող դիտարկվել որպես սովորական ռազմական բախում կամ ստանդարտ պատերազմական հանցագործություն, քանի որ այն ունի պետական ահաբեկչության (State Terrorism) բոլոր իրավական բնորոշիչները: Սրա առաջին վկայությունը պետական ապարատի կիրառումն էր սեփական քաղաքացիների դեմ, քանի որ գործողությունն իրականացվել է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության (Յազով), ՆԳՆ-ի (Պոգոդին) և Ադրբեջանական ԽՍՀ իշխանությունների (Մութալիբով) պաշտոնական որոշմամբ և համակարգմամբ, երբ պետությունն իր ողջ ռազմական մեքենան ուղղել էր անզեն խաղաղ

բնակչության դեմ: Միևնույն ժամանակ, գործողության ընթացքում առաջ քաշված «անձնագրային ռեժիմի ստուգումը» և «զինաթափումը» ընդամենը իրավական քողարկում էին էթնիկ զտումներն իրականացնելու համար, ինչի անմիջական ապացույցն է այն, որ մայիսի 2-ին ՕՄՕՆ-ը տարածեց կեղծ փաստաթուղթ, թե իբր հայերը «կամավոր խնդրում են» իրենց տեղահանել:[21] Այս ամենը զուգորդվում էր ահաբեկման միջոցով քաղաքական նպատակի իրականացումը, քանի որ ԽՍՀՄ և Ադրբեջանի իշխանություններն ահաբեկչական մեթոդներով (զանգվածային սպանություններ, բռնաբարություններ, տների հրդեհում) նպատակ ունեին կոտրել արցախահայության կամքը և ստիպել հրաժարվելու ինքնորոշման իրավունքից:

Այս համատեքստում միջազգային ատյաններում «Օղակ» գործողությունը պետք է ստանա հստակ միջազգային-իրավական որակումներ, քանի որ արձանագրված արարքներն իրենց բնույթով համապատասխանում են նախևառաջ մարդկության դեմ ուղղված հանցագործության չափանիշներին՝ բնակչության համակարգված բռնի տեղահանման և էթնիկ զտումների համար: Միաժամանակ, այն պատերազմական հանցագործություն է՝ Ժնևի կոնվենցիաների կոպտագույն խախտումների, պատանդառության, բժիշկների նկատմամբ անօրինական վերաբերմունքի և խոշտանգումների հիմքով: Ավելին, խմբի մասնակի կամ ամբողջական ոչնչացման միտումը փաստում է ցեղասպանական գործողությունների առկայությունը, ինչն արձանագրվել է նաև ԱՄՆ Սենատի թիվ 128 բանաձևով (1991 թ. մայիսի 17):[22]

Արցախի դարպաս Գետաշենի կորստի պատմական նշանակությունը

Գետաշենի և Մարտունաշենի կորուստը 1991 թ. մայիսին սովորական տարածքային կորուստ չէր, այլ աշխարհաքաղաքական և ռազմավարական ծանր հարված Արցախյան ազատամարտի ողջ տրամաբանությանը: Ինչպես դեռևս 1991 թ. ապրիլի 28-ին՝ գործողության մեկնարկից ընդամենը երկու օր առաջ, իր հուսահատ նամակում զգուշացնում էր «Գետաշեն» հայրենակցական միության նախագահ Բ. Սիայանը. «Գետաշենի և Մարտունաշենի կորուստը ամբողջ Արցախ աշխարհի կորուստն է»:[23]

Այս հանգուցային բնակավայրերն իրենց աշխարհագրական դիրքով Արցախի հյուսիսային դարպասն ու անառիկ վահանն էին, որոնք տարիներ շարունակ կասեցնում էին ադրբեջանական պատժիչ ստորաբաժանումների առաջխաղացումը դեպի երկրամասի խորքերը: Մարտունաշենի և Գետաշենի հայաթափմամբ Լեռնային Ղարաբաղի հյուսիսային թևը զրկվեց իր հիմնական հենակետից և պաշտպանական ամրություններից: Այս ռազմավարական բարձրադիր գոտու կորուստը ոչ միայն թուլացրեց հարակից շրջանների ինքնապաշտպանական ներուժը, այլև ճանապարհ հարթեց Ադրբեջանի հետևողական ցեղասպանական քաղաքականության հաջորդ փուլերի համար՝ նախադեպ ստեղծելով մեկ տարի անց՝ 1992 թ. ամռանը, ամբողջ Շահումյանի շրջանի բռնազավթման և Հյուսիսային Արցախի վերջնական հայաթափման համար:

Հղումներ

1. «Օղակ» օպերացիայի մաին համապարփակ վերլուծությունը կներկայացնենք «Դրօշակի» հաջորդ համարում՝ ներառելով պատմական ու աշխարհաքաղաքական համատեքստը, պլանավորումն ու դերակատարներին, իրականացման փուլերը, մարդու իրավունքների խախտումներն ու իրավական գնահատականը (էթնիկ զտում, պետական ահաբեկչությո՞ւն, թե՞ ցեղասպանություն):
2. Բալայան Վ., Արցախի պատմությունը. Հնադարից մինչև մեր օրեր, Երևան, 2011, էջ 270, Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, Հանրագիտարան, Երևան, 2004, էջ 695, Пономарев В. А., Операция «Кольцо» (1991 г.): Окончательный и бесповоротный переход проблемы Нагорного Карабаха в стадию вооруженного конфликта // Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ («Կաճառ» գիտական տարեգիրք, Գիրք 4), Ստեփանակերտ, 2010, էջ 120:
3. Կարապետյան Ս., «Գետաշեն», Երևան, 1992, էջ 3, Բարսեղյան-Կրպեյան Ի., «Թաթուլ Կրպեյան. Հյուսիսային Արցախի Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանությունը», Երևան, 2016, էջ 18:
4. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջ 178:
5. Կարապետյան Ս., «Գետաշեն», էջ 3-5; Բարսեղյան-Կրպեյան Ի., «Թաթուլ Կրպեյան...», էջ 18-22:
6. Բարսեղյան-Կրպեյան Ի., «Թաթուլ Կրպեյան...», էջ 155-156:
7. Пономарев В. А., Операция «Кольцо» (1991 г.)… , էջ121-124, Բարսեղյան-Կրպեյան Ի., «Թաթուլ Կրպեյան...», էջ 157-160:
8. Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, նշված աշխատությունը, էջ 695:
9. Բարսեղյան-Կրպեյան Ի., «Թաթուլ Կրպեյան...», էջ 197
10. Նշված աշխ., էջ 85-125:
11. Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, նշված աշխատությունը, էջ 67:
12. Բարսեղյան-Կրպեյան Ի., «Թաթուլ Կրպեյան...», էջ 191:
13. https://armenpress.am/hy/article/1014037 (հասանելիության ամսաթիվը՝ 21.05.2026):
14. https://armenpress.am/hy/article/1013959 (հասանելիության ամսաթիվը՝ 21.05.2026):
15. Բարսեղյան-Կրպեյան Ի., «Թաթուլ Կրպեյան...», էջ 199-201:
16. Նշված աշ;., էջ 198:
17. Cox, C., & Eibner, J. (1993). Ethnic Cleansing in Progress: War in Nagorno Karabakh. Zurich; London: Christian Solidarity International (CSI), էջ 35-40:
18. Նշված աշխ.:
19. Գրիգորյան Գ., Դժոխքից վերադարձ կա, Երևան, Անտարես, 2016:
20. Տե՛ս Վիրաբույժ Գևորգ Գրիգորյանի բանավոր վկայությունը, Հարցազրույց Զորյան ինստիտուտի (Հայաստան) «Արցախյան պատերազմի բանավոր պատմության արխիվային նախագիծ», Երևան, 2021 թ. (չհրատարակված արխիվային նյութեր):
21. Пономарев В. А., Операция «Кольцо» (1991 г.)… , էջ128:
22. https://www.armenian-genocide.org/Karabakh.377/current_category.360/nagorno-karabakh_detail.html (հասանելիության ամսաթիվը՝ 26.05.2026):
23. Բարսեղյան-Կրպեյան Ի., «Թաթուլ Կրպեյան...», էջ 54:

Հայ-թաթարական բախումները ՀՅԴ գործիչների հուշերում

Տիգրան Զանդոյան
Քաղաքագետ

1905 թվականի մայիսի 23-ին Երևանի շուկայում թաթարները հրացաններով հարձակվում են հայերի վրա՝ սպանելով ու վիրավորելով մոտ 20 մարդու: Հայ-թաթարական բախումները Երևանում տևում են երկու օր, և դադարում են այն ժամանակ, երբ հայերն են մայիսի 25-ին ռումբ նետում մի թաթարի տան վրա՝ սպանելով մոտ 20 մարդու: Երևանում դադարած բախումները շարունակվում են ողջ նահանգում, հատկապես բուռն՝ Ղամարլուի (Արտաշատ) և Աշտարակի շրջաններում (Վարանդեան 384-385):

Այսպիսով, 20-րդ դարը սկսվեց մի իրադարձությամբ, որը բախտորոշ էր լինելու ինչպես կովկասահայության, այնպես էլ ողջ Անդրկովկասյի համար:

Նախապատմություն

Նավթի արդյունահանման տեխնոլոգիաների զարգացման արդյունքում 1870-ականներից շեշտակիորեն ընդլայնվում է Բաքվում նավթի արդյունահանումը՝ դարձնելով այն Կովկասի ամենամեծ քաղաքն ու հզոր տնտեսական կենտրոնը (Tadeusz Swietochowski, Russian Azerbaijian 1905-1920, 20-21, Cambridge, 2004), դեպի ուր հարստություն և աշխատանք գտնելու համար սկիզբ է առնում բնակչության մեծ հոսք: Աճում է նաև հայերի թիվը, և եթե 1851 թվականին Բաքվի 7431 բնակչից 405-ը հայեր էին, ինչը բնակչության 5.5 տոկոսն էր (*Kavkazskii Kalendar* na 1852g., 305–307), արդեն 1897 թվի մարդահամարով Բաքուն ուներ 19099 հայ բնակիչ, որը քաղաքի բնակչության 17.1 տոկոսն էր կազմում (https://www.demoscope.ru/weekly/ssp/emp_lan_97_uezd.php?reg=323): Ա-Դոն Բաքվի բնակչությունը 1904 թվականի տվյալներով ներկայացնում է մշտական և ժամանակավոր բնակիչներով 222 հազար, որից՝ 82 հազարը մահմեդական, 61 հազարը՝ ռուս, 51 հազարը՝ հայ (Ա-Դո, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում, 1905-1906 թ:, 13, Երեւան, 1907): Բաքվի մուսուլման բնակչությունը զբաղվում էր հիմնականում սեզոնային բանվորական աշխատանքով, իսկ մասնագիտական հմտություններ պահանջող աշխատանք կատարողները հայերն ու ռուսներն էին (Swietochowski, 21): Հայ բնակչության աճող թիվը աստիճանաբար հանգեցրեց հասարակական-քաղաքական կյանքի կազմակերպման, և արդեն հայ-թաթարական բախումների նախօրյակին Բաքվում ձևավորվել էին հայ ազգային քաղաքական կուսակցությունների բջիջներ, որոնցից առավել ուժեղ էին Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը և Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը (Swietochowski, 37):

Դաշնակցության գործունեության արդյունքում ձևավորվում է Բաքվի՝ «Ոսկանապատ» կենտրոնական կոմիտեությունը, որի մեջ մտնում էին Բաքուն՝ իր շրջաններով (Բալախանի, Բիբի Էյբաթ, Սուրախանի, Բինագեադի), Շամախիի, Գյոկչայի և Դերբենդի գավառները (Աբրահամ Գիուլխանդանեան, Բագուի դերը մեր ազատագրական շարժման մեջ, 205, Թեհրան, 1981), Բաքվի կենտրոնական կոմիտեությանը երբեմն կցված են եղել ամբողջ Հյուսիսային Կովկասն ու Գանձակի (Ելիզավետպոլ) նահանգը:

Մյուս քաղաքների համեմատ Բաքվում ոստիկանական հսկողությունը համեմատաբար թույլ էր, և սա հնարավորություն էր տալիս սոցիալիստական և հեղափոխական գործիչներին գործունեություն ծավալելու այստեղ. «Գուցե ոչ մի տեղ այնքան հայդուկներ չեն գտնվել, որքան Բաքվում: Ոստիկանության խիստ հսկողությունից զուրկ և աշխատանք ճարելու միակ վայրն ամբողջ Անդրկովկասում Բաքուն էր: Կարելի է ասել, որ մեր բոլոր հայդուկները եղել են Բաքվում, կամ ժամանակավորապես եկել գնացել են» (Գիուլխանդանեան, 64):

Արդյունքում 1905 թ. սկզբին Բաքվում կային դաշնակցական մարտական խմբեր, որոնք հայ-թաթարական բախումների ընթացքում ինքնապաշտպանական մարտեր և հակագրոհներ էին կազմակերպում թաթար ամբոխի հարձակումների դեմ:

Սկիզբը

Հայ-թաթարական բախումների սկիզբը համարվում է հետևյալ դեպքը. 1905 թվականի փետրվարի 6-ին, Բաբան անունով մի թաթար ատրճանակով

կրակում և վիրավորում է Պարապետ հրապարակում գտնվող հայկական եկեղեցու բակում հավաքված հայերից մեկին, ով ցարական բանակի զինվոր էր: Պատճառն այն էր, որ օրեր առաջ, երբ մի խումբ զինվորներ ձերբակալել և դատարանից բանտ էին ուղեկցում ավազակախմբի առաջնորդ Աշուրբեկով անունով մի հայտնի թաթարի, Աշուրբեկովը փորձում է փախչել, և երբ ուղեկցող զինվորները կրակում են հետևից, մի հայ զինվորի գնդակ դիպչում ու սպանում է Աշուրբեկովին: Հենց այդ զինվորի վրա էլ հայկական եկեղեցու բակում, վրեժ լուծելու նպատակով, կրակում է Բաբաևը (Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, առաջին հատոր, 362, Փարիզ, 1932): Հայերը Բաբաևին հանձնում են ոստիկանությանը, ու երբ նա փախուստի է դիմում, հետապնդելով՝ ատրճանակով սպանում են նրան: Թաթարները վերցնելով Բաբաևի դին՝ սայլին դրած շրջում են մուսուլմանական թաղամասերով՝ կոչ անելով վրեժ լուծել հայերից և տալով բախումների մեկնարկը:

Բաքվում հայերի ինքնապաշտպանությունը կազմակերպում և ղեկավարում է հայտնի հայդուկապետ Նիկոլ Դումանը: Բախումները տևում են չորս օր, որի ընթացքում թաթարների կողմից լինում է 111 սպանված, իսկ հայերի կողմից՝ 205 (Վարանդեան 364, 367):

Դրանից յոթ ամիս անց Բաքվում նորից սկսվում են բախումներ: Օգոստոսին տեղի ունեցած բախումների ընթացքում սպանվում են 270 մուսուլման, 130 հայեր ու այլազգիներ. Բաքվի երկրորդ բախումների ժամանակ հայկական կողմն ավելի պատրաստված ու կազմակերպված էր:

Բաքվում սկիզբ առած բախումները տարածվում են այն տարածքներում, որտեղ հայերն ու թաթարները շերտավորված էին բնակվում: Հայ բնակչությունը հատկապես մեծ կորուստներ կրեց Նախիջևանում, որտեղ մուսուլման բնակչությունը քանակապես գերազանցում էր: 1905 թվականի մայիսի 12-15-ը տևած բախումները ավելի շուտ պոգրոմի էին նման, քանի որ հայությունը այստեղ թվապես քիչ էր և թույլ: Չորս օր տևած բախումների ընթացքում թալանվում և այրվում են հայերի 178 խանութներ, արձանագրվում է մոտ 400 զոհ և վիրավոր, գրեթե նույն թվով զոհեր ունենում են մուսուլմանները (Վարանդեան 377-378): Բաքվում բախումների հանդարտվելուց հետո Նիկոլ Դումանն անցնում է Երևանի նահանգի ինքնապաշտպանության կազմակերպմանը:

Ամենաբուռն բախումները տեղի ունեցան Արցախում և Սյունիքում, որտեղ հայկական կողմը լավ կազմակերպված էր ու զինված, իսկ մուսուլմանների կողմից բախումների մեջ ներգրավված էին մեծ մասամբ կիսաքոչվոր կենսակերպ վարող թյուրքական, ինչպես նաև քրդական ցեղեր: Օգոստոսի յոթից բախումներ են սկսվում Շուշի քաղաքում, որոնք ընդհատումներով և տարբեր ուժգնությամբ շարունակվում են մինչև հուլիսի 22-ը, որի հետևանքով հայերն ունենում են մոտ 40 զոհ, 68 վիրավոր, իսկ թաթարները մոտ 500 զոհ (Վարանդեան 389, 399):

Նիկոլ Դուման

Բախումների ալիքը տարածվում է դեպի Գանձակ, ապա՝ Թիֆլիս: Նոյեմբերի 18-ից սկսված ջարդերին զոհ են գնում մոտ 100 հայեր, որն հաջողվում է կասեցնել և հակահարված տալ միայն երկու օր անց, երբ Թիֆլիսից Գանձակ է վեադառնում Աբրահամ Գյուլխանդանյանը, որը նշանակվել էր Գանձակի դաշնակցական զինված խմբերի հրամանատար: Նա այլ դաշնակցական գործիչների հետ կազմակերպում է Գանձակի հայերի ինքնապաշտպանությունը: Գանձակի գավառում բախումները շարունակվում են մինչև 1906 թվականի հունվար (Վարանդեան 418, 423):

Գրեթե միաժամանակ (1905 թվականի նոյեմբերի 22) բախումներ են սկսվում Թիֆլիսում: Հայաբնակ Հավլաբար թաղամասի պաշտպանության հրամանատար նշանակվում է դաշնակցական գործիչ Տուրբախը, իսկ Քուռ գետի աջ ափի հատվածում Արմեն Գարոն (Վարանդեան 424-425), ով նախկինում աչքի էր ընկել հանդուգն ահաբեկչական գործողությունների հրամանատարությամբ (Բանկ Օտտոմանի գրավումը 1896 թվականի օգոստոսի 14): Փորձելով խաղաղեցնել հակամարտող կողմերին՝ վրաց մենշիկ կուսակցության պարագլուխներն առաջարկում են միջնորդի դեր ստանձնել, ինչի համար Վորոնցով-Դաշկովից պահանջում ու ստանում են 500 հրացան և փամփուշտներ, սակայն հաշտեցման առաքելությունը լիովին ձախողվում է (Garo Armen, Bank Ottoman, memoirs of Armen Garo, 162-163, Detroit, 1990): Նոյեմբերի 27-ի առավոտյան թաթարները

սպիտակ դրոշ են բարձրացնում, և բախումները դադարում են Թիֆլիսում ևս (Վարանդեան 430)։

ՀՅԴ գործիչների հուշերը հայ-թաթարական բախումների մասին

Հայ-թաթարական բախումների մասին հուշագրությունների մեծ մասի հեղինակներն այդ իրադարձությունների անմիջական մասնակիցներն են, որոնց մի քանիսի մասին կխոսենք հոդվածի այս մասում։ Դրանցից մեկը Ալեքսանդր Խատիսյանն է։

Ալեքսանդր Խատիսյանը դաշնակցական գործիչ էր, ով, մասնագիտությամբ բժիշկ լինելով հանդերձ, մեծապես զբաղվել է հասարակական-քաղաքական գործունեությամբ՝ եղել Թիֆլիսի քաղաքապետ, երկու անգամ Անդրկովկասյան Սեյմի ֆինանսների նախարար, Հայաստանի նորաստեղծ հանրապետության տարբեր պատվիրակությունների կազմում իրականացրել է դիվանագիտական աշխատանքներ, զբաղեցրել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի պաշտոնը, իսկ 1919 թվի մարտից մինչև 1920 թվի մայիս՝ վարչապետի պաշտոնը։

Խատիսյանը 1902 թվականից ընտրվում է Թիֆլիսի քաղաքապետի խորհրդական, սակայն, քանի որ Թիֆլիսի այդ ժամանակվա քաղաքապետ Վ. Ն. Չերքեզովը հիվանդության պատճառով հաճախ ամիսներ շարունակ բացակայում էր քաղաքապետարանից, Խատիսյանը փաստացի իրականացնում էր Թիֆլիսի քաղաքապետի գործառույթները։ 1910 թվին, Չերքեզովի մահից հետո, Ալեքսանդր Խատիսյանն ընտրվում է Թիֆլիսի քաղաքապետ, և այդ պաշտոնին մնում է մինչև 1917 թիվը՝ Փետրվարյան հեղափոխությունից հետո հրաժարվելով պաշտոնից և մտնում ՀՅԴ շարքեր։

Հայ-թաթարական բախումների ընթացքում Խատիսյանը Թիֆլիսի քաղաքապետության կարևոր պաշտոնյա էր և իր կապերն օգտագործում էր ազգամիջյան բախումները դադարեցնելու նպատակով։ Իր «Քաղաքապետի մը հիշատակները» կենսագրական գրքում Խատիսյանն առանձին գլուխ է հատկացնում հայ-թաթարական բախումներին։ Պաշտոնական դիրքով պայմանավորված՝ Խատիսյանը գրեթե ազատ ելումուտ ուներ փոխարքա Վորոնցով-Դաշկովի մոտ, (Խատիսյանն իր ժամանակի այն եզակի գործիչներից էր, ում համակրում էին նաև վրացիները (Խատիսեան, 65)), և փոխարքան, լսելով վերջինիս զեկույցներն ու առաջարկները, համապատասխան կարգադրություններ է անում, սակայն ցարական բանակի սպաները, նահանգապետերը, ոստիկանապետերը և տեղական ռուս պաշտոնյաներն ակնհայտորեն կամ թաթարամետ էին, կամ չեզոք, բայց ոչ երբեք հայամետ։ Լինում էին դեպքեր, որ այս համատեքստում վերոնշյալ պաշտոնյաները չէին ենթարկվում իրենց վերադասին (Խատիսեան, 73)։ Հայ-թաթարական բախումների ընթացքում Խատիսյանը, բացի Թիֆլիսից, զբաղվում է նաև Գանձակի հայության խնդիրներով։

Ուշագրավ է Խատիսյանի հետևյալ դիտարկումը, որը մարգարեական դարձավ. խոսելով հայ-թաթարական բախումների մասին, նա նշում է, որ այդ բախումներն ի հայտ բերեցին մի շարք խնդիրներ, որոնց մասին մինչ այդ չէր խոսվում, և որոնք հանրության համար քննության առարկա դարձան 1906-1917 թվերին. «մի քանի հարցեր քննարկվեցին տարբեր խորհրդակցությունների ժամանակ, որոշ հարցեր կովկասյան ժողովուրդներին մղեցին նոր կռիվների, մի քանի հարցեր այդպես էլ մնացին անլուծելի, *որոնք ապագայում նորից պետք է ասպարեզ գան…*» (Խատիսեան, 80)։

Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաջիան) ՀՅԴ անդամ հեղափոխական, հասարակական քաղաքական գործիչ և դիվանագետ էր, ով հայ-թաթարական բախումների ժամանակ Թիֆլիսի ինքնապաշտպանական ուժերի մի մասի առաջնորդ էր նշանակվել ՀՅԴ-ի կողմից։ Ի տարբերություն Հարավային Կովկասի մյուս վայրերի, որտեղ հայերն ու մուսուլմանները բնակվում էին համեմատաբար խառը ձևով, Թիֆլիսում բախումները մեծ ծավալների չեն հասնում, քանի որ հայերին թիվն ու ազդեցությունը Թիֆլիսում անհամեմատ մեծ էին, և այստեղ հայ-թաթարական բախումների ընթացքում մուսուլմանների թիվը համալրվում էր մեծամասամբ Բորչալուից եկած զինյալների հաշվին, որոնց Թիֆլիս էր բերում թալանի հույսը։ Թեև վրացիները հայ-թաթարական բախումների ողջ ընթացքում չեզոք դիրք էին որդեգրել, այնուամենայիվ, Գարոյի հուշերից նկատելի է դառնում նրանց որդեգրած թաթարամետ դիրքորոշումն ու վարքագիծը, քանի որ «հայ-թուրքական թշնամութենէն օգտուողը իրենք էին լինելու թե՛ նիւթապէս, թե՛ բարոյապէս» (Արմեն Գարո, Ապրուած օրեր, «Հայրենիք» տպարան, Բոստըն, 1948, էջ 163-179)

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Աբրահամ Գյուլխանդանյանի թողած հուշագրական նյութերը։

Աբրահամ Գյուլխանդանյանը ծնվել է 1875 թվին, Էջմիածնում։ 19 տարեկանում անցնում է ՀՅԴ շարքերը, չորս տարի անց անցնում է Բաքու՝ մի քանի այլ դաշնակցական գործիչների հետ դառնալով Բաքվի ՀՅԴ կառույցի կարևոր գործիչներից մեկը։ Հայ-թաթարական բախումների ժամանակ, Բաքվում որոշ գործողությունների մասնակցելուց հետո, Գյուլխանդանյանը նշանակվում է Գանձակի ինքնապաշտպանական գործի կազմակերպիչ։ Հայաստանի Հանրապետության անկախության շրջանում զբաղեցրել է ներքին գործերի, ապա էկոնոմիկայի նախարարի պաշտոնները. մահացել է Փարիզում, 1946 թվականին։ Հայ թաթարական բախումների մասին Գյուլխանդանյանի գիրքը լույս է տեսել 1933 թվականին Փարիզում, որը նախատեսված էր հրատարակել մեկից ավելի հատորով, սակայն հրատարակվել է միայն առաջին հատորը։ Բացի այս գրքից, Գյուլխանդանյանը հեղինակել է նաև մի շարք այլ աշխատություններ Կովկասի էթնիկ, սոցիալ-քաղաքական հարցերի մասին, ինչպես նաև Բաքվում հայ հեղափոխական կազմակերպությունն-

րի գործունեության մասին: Իր «Հայ-թաթարական ընդհարումները» գրքում, որպես ականատես, Գյուլխանդանյանը ներկայացնում է Բաքվի առաջին հայ-թաթարական ընդհարման պատմությունն ու ժամանակագրությունը: Բաքվի առաջին ընդհարումը տևում է չորս օր, գրքում օր առ օր մանրամասն ներկայացված են ինքնապաշտպանական կոիվների կազմակերպումն ու ընթացքը, մուսուլման ամբոխի իրականացրած դաժանությունները: Առանձին հատված է հատկացված նավթի արդյունահանման շրջանում տեղի ունեցած իրադարձություններին: Գյուլխանդանյանը խոսում է ինքնապաշտպանական կոիվներին մասնակից աչքի ընկնող մարտիկների մասին: Առանձնակի ուշադրություն է դարձված հայ-թաթարական բախումների հարցին միջազգային մամուլի արձագանքին, ներկայացված են ցարական պաշտոնյաների, հատկապես նահանգապետ Նակաշիձեի գործունեությունը: Իր «Բաքվի դերը հայ ազատագրական շարժման մեջ» գլխում Գյուլխանդանյանը հայ-թաթարական բախումների մասին խոսում է ավելի հակիրճ ու վերլուծաբար:

Հայ-թաթարական բախումների մեկ այլ կարևոր հուշագիր է Վահան Փափազյանը, ով դաշնակցական գործիչ էր հայտնի «Կոմս» ծածկանունով: Նրա՝ ավելի քան 1600 էջ ծավալով հուշերը հրատարակվել են երեք հատորով 1950, 1952 և 1957 թվականներին, և ներկայացնում են ականատեսի տեղեկություններ ՀՅԴ հիմադրումից ի վեր տեղի ունեցած իրադարձությունների մասին: Հայ-թաթարական բախումներին նվիրված հատվածն առաջին հատորում է (Վահան Փափազեան, Իմ յուշերը, «Հայրենիք» տպարան, Բոսթոն, 1950, էջ 427-442): Փափազյանը Նիկոլ Դումանի հրահանգով երկու այլ դաշնակցական գործիչների հետ ստանձնում է Երևանի նահանգի Նախիջևանի գավառի զինված խմբերից մեկի հրամանատարությունը: Նախիջևանում դեռևս պահպանվում էր պարսկական տիրապետությունից մնացած խաների տիրապետությունը, բացի սրանից, մուսուլման բնակչության թիվը հայ բնակչության համեմատ մեծ էր: Սրան ավելացրած այն, որ տեղում զինված կուսակցական կառույցները համեմատաբար թույլ էին, Նախիջևանի հայությունը հայ-թաթարական բախումներից ամենաշատը տուժեց թե՛ բնակչության առումով, թե՛ նյութապես: Փափազյանը Նախիջևանում մնում է մոտ ութ ամիս. նախ զբաղվում է տեղի հայ բնակչությանը զինելու գործով, ինչը նրա խոսքերով շատ դժվար էր, որովհետև հայ գյուղացին զենքի համար գումար հատկացնելը համարում էր ավելորդ շռայլություն, քանի որ «Դաշնակցության զինվորները պիտի պաշտպանեն իրենց» (Փափազեան, 434): Հաճախ գյուղացիներին զենք ձեռք բերել ստիպելու համար դաշնակցական գործիչները ստիպված «մտրակի» են դիմում: Փափազյանի հուշերում նկարագրվում է Երևանի նահանգի ինքնապաշտպանության ընդհանուր կազմակերպումը Նիկոլ Դումանի հրամանատարությամբ, ինչպես նաև, մասնավորապես, Նախիջևանում դեպի թաթարական գյուղեր իրականացված վրիժառու և պատժիչ արշավանքները: Ներկայացված են նաև հայկական գյուղերի պաշտպանության կազմակերպման ուղղությամբ տարված աշխատանքները, որոնց հեղինակը մասնակցել է անձամբ: Նախաձեռնվում են այլ գործողություններ ևս, որոնք, սակայն, ինչ-ինչ պատճառներով չեն իրականացվել: Մասնավորապես մուսուլմաններին բախումների դրդող Ռահիմ խանի ահաբեկումը, մզկիթի հրապարակի պայթեցումը և. այլն (Փափազեան, 438-439): Իհարկե, գործիչների մեծ մասի հուշերում շեշտվում է այն հանգամանքը, որ հայ-թաթարական ընդհարումները հրահրվել էին ցարական իշխանությունների՝ նրանց տեղական սատրապների կողմից: Այս ձևով քաղաքական խորը ճգնաժամի և քաոսի մեջ մխրճվող կայսրությունը շեղում էր ժողովուրդներին և, մասնավորապես, ազգային փոքրամասնություններին սեփական խնդիրները հետապնդելու նպատակից: Մեր պարագայում թաթարական խուլ ու ագրեսիվ զանգվածը որպես բութ գործիք էր օգտագործվում տնտեսական անհամեմատ լավ դիրքեր ունեցող, կիրթ, ազգային-ինքնության խորը գիտակցությամբ օժտված և լուսավորության ու առաջադիմության ձգտող, հայության դեմ:

Աբրահամ Գյուլխանդանյան

Այսքանով, անշուշտ, չի սպառվում մեզ հետաքրքրող նյութը: Վերը խոսվեց սոսկ դաշնակցական մի քանի գործիչների հուշերի մասին, մինչդեռ հայ-թաթարական բախումների վերաբերյալ ՀՅԴ նյութերի մեկտեղմամբ կարելի է ամբողջ հատորներ կազմել: Դա կարևոր ու շնորհակալ գործ է, որի իրականացումը մեծ հույսերով ենք ակնկալում:

Սյունիքը Մուշեղ Գալշոյանի հրապարակագրության էջերում

Արմեն Կարապետյան
Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, հրապարակագիր

Սյունյաց աշխարհը, նրա անցյալն ու ներկան մշտապես եղել են հայ անվանի արձակագիր Մուշեղ Գալշոյանի ստեղծագործական ոգորումների առանցքում: Գրողը հաճախ է անդրադարձել Սյունյաց երկրամասի փառահեղ անցյալին՝ հայոց պատմության դասեր ու եզրահանգումներ առնելով Սյունյաց դարերի և հազարամյակների անցյալի էջերից:

Գրողը մշտական կապ ու մտերմիկ հարաբերություններ է պահպանել Սյունյաց աշխարհի, նրա պարզ ու նշանավոր մարդկանց հետ: Որպես «Գարուն» հանդեսի աշխատակից, նա 1969 թ. օգոստոսին գործուղվել է Զանգեզուր և տասնվեցօրյա ուղևորությունից վերադարձել չափազանց հարուստ ու այրող տպավորություններով: Զանգեզուրյան վերոնշյալ ուղևորությունը հետագայում ծնունդ է տվել գրական ինքնատիպ խորհրդածությունների, որոնք խոհագրության տեսքով և «Ագռավաքար» վերնագրով լույս են տեսել 1973 թվականին: Իսկ մինչ այդ, սյունիքյան տպավորություններն ու մտորումները «Զանգեզուրյան աշուն» խորագրով հրապարակվել են «Գարուն» ամսագրում (1970 թ. մայիս): Արդեն իսկ այդ ակնարկում նկատելի են գրողի խորին անհանգստություններն ու տագնապներն հայրենի եզերքի հայաթափման, բնակչության ծերացման, աշխատատեղերի պակասի և այլ հիմնահարցերի վերաբերյալ: Հրապարակումն այնքան սուր և տագնապալից բնույթ ուներ, որ ամսագրի խմբագրությունը վերևներում նստած գրաքննիչների զգոնությունը մեղմելու նպատակով հարկ է համարել հայտնելու իր զգուշավոր կարծիքը. «Տպագրելով արձակագիր Մուշեղ Մանուկյանի (գրողը նախապես հանդես էր գալիս այդ ազգանունով - Ա.Կ.) ակնարկը, մենք հարկ ենք համարում նշել, որ ամեն ինչում չէ, որ կիսում ենք հեղինակի մտքերն ու եզրակացությունները: Ակնարկը, որ գրված է գրողի, քաղաքացու բարձր մտահոգությամբ ու ազնվությամբ, պարունակում է նաև ծայրահեղություններ, հեղինակը երբեմն շատ է սրում առանձին փաստեր և այլն: Եթե անտեսենք հեղինակի որոշ ծայրահեղ դատողություններ, ապա նրա գլխավոր մտահոգությունն այն է (այստեղ խմբագրությունը համամիտ է նրա հետ), որ գյուղից քաղաք հոսքը կատարվի ավելի պլանավորված, ավելի կանոնավոր և ոչ թե տարերային ձևով»: Տվյալ դեպքում լիովին հասկանալի և ըմբռնելի է խմբագրության զգուշավոր կեցվածքը: Պետք էր ապահովագրել և՛ խմբագրությանը, և՛ հեղինակին չարամիտների հնարավոր հարձակումներից:

«Ագռավաքարը» մեծ ընդգրկումների, մեծ հարցերի ու հարցադրումների, մեծ թեմատիկայի ու բովանդակության գործ է: Մ. Գալշոյանը ոչ այնքան բացահայտորեն, սակայն անսակարկելի ոգով ու ոճով հնչեցնում է այն հարցերն ու հարցականները, որոնք կանգնած էին Հայաստանի և հայության առջև արդեն այդ ժամանակ:

Նա այդ ամենը հնչեցնում է պատմության խորքերից ու պատմության հերոսների շուրթերով:

Սյունիքի համար կռիվը ոչ երեկ է սկսվել և ոչ այսօր, այլ դարերի խորքից է գալիս: Պատմահայր Խորենացին վկայում է այդ մասին: Հենց Խորենացուց մեջբերված վկայությամբ գրողն սկսում է իր խոհագրությունը Սյունյաց երկրի մասին: «Սիսակը, որը թիկնավետ աղեղնավոր էր, ստացած ժառանգությունը՝ երկինք ու գետին, Սիսակը, որ ճարտասան էր և այր իմաստուն, հասկացավ, որ ժառանգածը սուրբ է և ոգեղեն, ժառանգածը անմահություն է, և նա իր երկիրը լցրեց շինություններով ու շնչով, ու շինությունների հիմքերի տակ, շինությունների տեր մարդկանց ոտքերի տակ սիրտ ու դողով փռեց, շնորհեց իր անունը»,- սա է այն պատմականը, առասպելականն ու առեղծվածայինը, որ ամեն հայ գիտե Խորենացու հանրահայտ պատմության էջերից:

Տասնյակ հարյուրամյակներ Սյունյաց աշխարհի վրա արշավել են մեկը մյուսից նենգ, ստոր ու դավադիր ոսոխների ոհմակներ: Անընդհատ ու անընդմեջ Սյունյաց լեռների ու ձորերի վրա արյուն է հոսել, եղել է նախճիր ու գեհեն: Այսպես մինչև 20-րդ դար, մինչև այն օրը, երբ Սյունյաց լեռների և բերդերի տերը դաշնակ սպարապետն էր: Օրերից ամռան այդ օրը մի

բանակ էր գալիս Սյունյաց աշխարհ, գալիս էր սպարապետի վրա, և նա «իր մաշված բանակով դիրք էր բռնել Սյունիքի լեռներում: Սպարապետն ուզում էր պետություն և իշխանություն: Ինչ կռիվ արել էր՝ անցած էր, բոլորը փուչ, հույսը մնացել էր այս մեկը. Սյունյաց լեռները խրոխտ ու անառիկ են՝ կօգնեն, և Սյունիքը կմնա իր ոտքերի տակ» (Մ. Գալշոյան, Ագռավաքար, Եր., 1990 թ., էջ 6):

Սակայն Սյունյաց լեռների ամրությունը զրոյի է հավասար, եթե կռիվը հայի ու… հայի միջև է: Սյունյաց վեհ ու անառիկ լեռները շատ ու շատ կռիվներ էին տեսել, կռվել էին նաև հայերն ու հայերը: 1920 թ. Սյունիքի լեռներում նորից հայի ու հայի կռիվ պետք է լիներ: Լեռնաշխարհը դեռ սպարապետինն էր, դիրք էր բռնել, բայց լեռները դողում էին նրա ոտքերի տակ, որովհետև ժողովուրդը թիկունք էր արել:

Ըստ Մ. Գալշոյանի, Սպարապետը քաջ գիտակցում էր որ տխուր բան է հայի ու հայի կռիվը, և էդ կռվի մեջ ոչ ոք չի հաղթում: Եվ Սպարապետը պայթեցրեց իր վերջին հրանոթն ու անցավ Պարսկաստան:

«Ագռավաքարում» Սյունյաց շատ ու շատ բնակավայրեր են գալիս՝ կողք-կողքի իրենց անցյալով և ներկայով, հասարակ ու հայտնի մարդկանցով, ավանդազրույցներով ու իրական դեպքերով:

Գրողի տաղանդաշատ գրչի ներքո նոր գույներով վառ ու հետաքրքիր կերպավորումներ են ստանում հին և նոր Խնձորեսկը, Կոռնիձորը, Գորիսն ու Տաթևը, Շինուհայրն ու Շամբին, Ղափանն ու Քաջարանը և ուրիշ բնակավայրեր: Ամեն գյուղի վերաբերյալ գրողի զգայուն հայացքը կարևոր ու բնորոշ դիտարկումներ է անում: «Կոռնիձոր գյուղում Անդրանիկ անվանակիրները շատ են. Այդ գյուղի խանձված հողին ոտք է դրել զորավար Անդրանիկը, կռվել այդ անջուր հողի համար», - գրողի բնութագրումն է (էջ 19):

Ահա գրողական վարպետ երևակայությամբ Գորիս քաղաքը բնութագրող ինքնատիպ դիտարկումը.

Մոշեղ Գալշոյան

«Կիրճում ցնցուղվել են Գորիս քաղաքի լույսերը: Ո՛չ շչակ, ո՛չ ծուխ, ո՛չ տրամվայի սուլոց ու աղմուկ, թվում է կիրճում ծվարած փոքրիկ քաղաքը շրջակա լեռների հանդարտությամբ քնել է՝ ամպերի տակ թողնելով իր լույս-երազները, որոնք առավոտվա հետ կհավաքվեն՝ կդառնան մեկ և կիրճ ու քաղաքի գլխին կկախվեն արևի պես: Բայց նա ամեն կեսօր կիրճի վրա փռված երկնքում տեսնում է օրերի գույնն ու երանգները. – ժպտում է, մռայլվում, - ամեն առավոտ ու իրիկուն հեռու-հեռու աշխարհներից իր կիրճը հասած օդի հետ շնչում է բարին ու չարը. - և գիշերվա նրա խաղաղ շնչի մեջ անհանգիստ տնքոց կա: Եվ առավոտյան վեր է կենում, ժպտում եղած-չեղածի համար, սրախոսում, անեկդոտներ հորինում, ինքն իրեն ձեռք է առնում…» (էջ 20):

«Ագռավաքարում» մեր ժողովրդի անցյալի ու ներկայի ճակատագրական հարցերն են վեր հառնում ընթերցողի առջև և մղում առողջ, արդարադատ ու օգտակար խորհրդածությունների:

Գրողի մի ոտքը հայոց անցյալ դարերում է, մյուսը՝ ներկա ժամանակների մեջ: Աչքով տեսածն ու հոգով զգացած դիտարկումներն անընդմեջ հարստացնում է պատմությունից, հայ պատմիչներից, Բակունցից և այլ գրողներից մեջբերված արժեքավոր տեղեկություններով, ուղղակի և անուղղակի վկայություններով:

Սյունիքը մեծ է ու հզոր իր լեռներով ու ժողովրդով, իր կերտած հերոսաշունչ պատմությամբ: Սա է գրողի ասելիքի ու պատմախոսության առանցքը: Սյունիքը հայագիր ու հայաշունչ է եղել վաղնջական ժամանակներից ի վեր և այդպիսին էլ կմնա հետագա հազարամյակներում, - ահա գրողի ուղերձ-պատգամը սերունդներին: ■

Ազատ, անկախ, առցանց...

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Արդեօք: Արդեօք մեր նշանաբանը պիտի փոխուի եւ «միացեալ»-ը փոխարինուի «առցանց» բառով՝ ըլլալու համար աւելի ժամանակակից, աւելի գործնապաշտ, թերեւս նաեւ աւելի... իրականանալի:

Կասկած չկայ, մեծ առաւելութիւններ կրնայ ներկայացնել այս արդի բառը՝ տարբեր ոլորտներու մէջ, ներառեալ ազգի համախմբման եւ մեր ժողովուրդի «ազգացման» տեսակէտէն, եթէ նման յղացք մըն ալ կրնանք երեւակայել: Ոլորտներէն մէկը, առաջինը՝ լեզուն է, լեզուի պահպանումն ու զարգացումը: Արդարեւ, որքան կը դիւրանայ հայերէնի մնայուն գործածութիւնը, եթէ մեր առօրեայ բոլոր հաղորդակցութիւնները, թէկուզ մի քանի բառով, հայերէն կատարուին, հայատա՛ռ հայերէն, ըլլա՛յ արեւելահայերէն, ըլլա՛յ արեւմտահայերէն: Ահա աշխատանքի լայն դաշտ մը՝ հրահրելու համար մեր բոլոր կազմակերպութիւնները եւ ազգակիցները՝ իրենց հաղորդագրութիւնները, յիշեցումները, սիրային թէ այլ զեղումները հայերէնով ընելու համար: Համացանցը այս տեսակէտէն մեր բարեկամն ու զօրավիգը պէտք է նկատել, փոխանակ մեր հակառակորդը կամ թշնամին: Մանաւանդ որ միջոցներ ալ կը հայթայթէ ինքնասրբագրման, ուղղագրական թէ քերականական առումով: Կարեւորը՝ գիտնանք օգտուիլ անկէ ու մեր զաւակներուն թէ մեր թոռներուն փոխանցենք զայն գործածելու սովորութիւնը: Երկրորդ ոլորտը մշակոյթն է: Մշակոյթը՝ իր բոլոր մարզերով: Առանց որեւէ դժուարութեան, հնարաւոր է ամեն տեղեկութիւն ստանալ, գրաւոր, պատկերաւոր թէ ձայնաւոր՝ մեր գրականութեան, կերպարուեստին, ճարտարապետութեան թէ երաժշտութեան վերաբերեալ, գտնել որեւէ գիրք, թերթել որեւէ նիւթի նուիրուած ալբոմ, մէկ-երկու ստեղի չխկացումով՝ ունկնդրել որեւէ հոգեւոր թէ աշխարհիկ երգ, դասական թէ արդի յօրինում. Նոյնը՝ բոլոր այլ մարզերու պարագային՝ գիտական թէ մարզական, ընկերային թէ բժշկական եւ այլն: Երրորդ ոլորտը պատմութիւնն է, եւ ինչպէս միւս ոլորտներուն պարագային, հոս ալ կարելի է մեր տարեգրութեան որեւէ էջը բանալ, որեւէ դէմքի կամ դէպքի մասին մանրամասնութիւններ գտնել՝ ուզուած խորութեամբ, քանի մը տողով թէ բազմահարիւր կամ նոյնիսկ բազմահազար էջերով: Կարելի է առցանց մեր բոլոր դասաւանդութիւններուն ու դասընթացքներուն, նոյնպէս ներկայ ըլլալ ձեռնարկներուն, անոնք դասախօսութիւն ըլլան թէ թատերական ներկայացում, կարելի է մասնակից ըլլալ պատարագներուն ու կրօնական այլ արարողութիւններուն, տակաւին անհատական գետնի վրայ՝ կարելի է տարեդարձ շնորհաւորել, իրարու բաժակ վերցնել, քուէարկել եւ այլն, եւ այլն:

Գիտենք, թէ որքան ցրուած ենք այսօր: Եթէ առաջ տարագրութիւնը ողբերգութիւն մըն էր, – եւ է՛ տակաւին շատ ժողովուրդներու, ներառեալ մեզի՛ համար, – այսօր մենք յաճախ կամովին կը հեռանանք մեր բնակած վայրերէն, ձեւով մը՝ կամովին կ՚աքսորենք մենք զմեզ՝ յանուն յաւելեալ շահի, յանուն յաւելեալ հանգիստի: Երբեմն ալ՝ ստիպողաբար. «ուր հաց՝ հոն կաց»: Առանց համացանցին, ինչպէ՞ս կրնանք կապուիլ մեր հարազատներուն հետ, մեր ծնողներուն թէ մեր զաւակներուն ու թոռներուն հետ, վայելել անոնց ժպիտն ու ծիծաղը, զրուցել, պատմել մեր անցուցած օրուան կամ շաբթուան մասին, մեր կատարած ճամբորդութեան, մեր յաջողութեան կամ հանդիպած մէկ դժուարութեան մասին:

Այս օրերուն աւելի ու աւելի կը շեշտուի մեր ցրուածութեան երեւոյթը, Սփիւռքը կը գրաւէ մեր ուշադրութիւնը, Սփիւռքը վերակազմակերպելու կամ նոյնիսկ կազմակերպելու հրամայականը կը շեշտուի: Հզօրացնելո՛ւ: Ձայն օժտելու կառավարման նոր կառոյցներով: Կարելի՞ է երեւակայել Սփիւռք՝ առանց առցանց հաղորդակցութեան հնարաւորութեան: Տեւական հաղորդակցութեան: Հայրենիքի եւ աշխարհի տարբեր երկիրներու հայութեան միջեւ: Տարբեր գաղթօճախներու, տարբեր համայնքներու միջեւ:

Կը խօսինք Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեան մասին: Ինչո՞ւ նկատի չունենանք Արեւմտեան Հայաստանը, Ջաւախքն ու Նախիջեւանն ալ: Նկատի ունենանք համայն հայկական միասնութիւնը՝ հայաբնակ թէ անհայաբնակ մեր բոլոր հողերով, աշխարհի բոլոր վայրերով, ուր կ՚ապրին անհամար հայեր, թէ թէկուզ մէկ հայորդի: Այսինքն հայաշխարհի՛ միասնութիւնը: Իսկ այս բոլորը՝ առանց համացանցի:

Սակայն՝ արդեօք: Արդեօք մեր երազը պարզապէս համացանցային երազի պիտի վերածուի:

«Ազատ, անկախ եւ առցանց Հայաստա՛ն»:

Երբ գրի կ՚առնեմ այս տողերը, քիչ մը հեգնանքով, բայց շատ ալ տառապանքով, կը զգամ, որ գրասեղանիս վրայ թիզուած գիրքերուն մէջէն ծուռ-ծուռ ինծի կը նայի Յակոբ Օշական: Կը ստիպուիմ բանալ Մարկ Նշանեանի խմբագրած «ՀԱՆԳՐՈՒՄՆԵՐ. Յակոբ Օշական» հատորը (Արաս, 2024, Իսթամպուլ), որուն առաջին էջերուն վրայ կը կարդամ հետեւեալ պատգամը (այստեղ երեք պարբերութիւն, առանց նոր տողի, միասին ներկայացնելով). «“Հայաստանեայց գրականութիւն”-ը [որ Օշականի ստորագրած յօդուածն է «Մեհեան»-ի մէջ 1914-ին] հրաւէր մըն է ցեղին զաւակներուն: Հրաւէր մըն է ան դէպի այն ափերը, դէպի այդ տարածութիւնները, ուր դարաւոր ընտելացման մը հետեւանքով ցեղը ինքզինքը աւելի համարձակ, իր հաճոյքներուն մէջ աւելի սրտազեղ ու տառապանքին ատեն աւելի երկիւղած ու տրոփուն կը գտնէ: Հրաւէր մըն է ան դէպի հայրենի երկիրը, որ մեզի պէս ստրուկ ցեղերուն մէջ ոտքի մնացող միակ աստուածութիւնը պէտք է ըլլայ»:

Որքան ալ առցանցը իր ներկայութիւնը պիտի պարտադրէ, ու մենք ալ պիտի օգտուինք անկէ, իրաւունք ունի՞նք սակայն հրաժարելու մեր այդ աստուածութենէն: Ո՛չ, ամե՛նեւին: Ուստի, միշտ՝

– Ազատ, անկախ ու միացեալ...

ՎԵՀԻՊ ՓԱՇԱ

Դուք կը տեսնէք որ ճակատագիրը կը քաշէ Թուրքիան արևմուտքէն արևելք. մենք հեռացանք Պալքաններէն, կը հեռանանք նաև Ափրիկէէն, բայց մենք պէտք է տարածուինք դէպի արևելք. հոն է մեր արիւնը, մեր կրօնքը ու լեզուն: Եւ ասիկա տարերային ձգողութիւն ունի. մեր եղբայրները Պաքու, Տաղստան, Թուրքիստան և Ատրպէյջան են: Մենք պէտք է ճամբայ ունենանք դէպի հոն: Եւ դուք՝ Հայերդ կանգնած էք մեր այդ ճամբուն վրայ: Պահանջելով Վանը՝ դուք կը փակէք մեր ճամբան դէպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջևանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք մեզի իջնելու Քուրի հովիտը և երթալու Պաքու: Կարսն ու Ախալքալաքը կը փակեն մեր ճամբան դէպի Ղազախ ու Գանձակ: Դուք պէտք է մէկ կողմ քաշուիք և մեզի ճամբայ տաք: Ահա թէ ո՛ւր է մեր հիմնական վէճը: Մեզի պէտք են երկու լայն ճամբաներ, որոնք հնարաւորութիւն տան մեր բանակներուն առաջ շարժելու և պաշտպանուելու: Մէկ ճամբան՝ Կարս-Ախալքալակ-Բորչալու-Ղազախն է, որ կը տանի դէպի Գանձակ, միւսը՝ կ՝երթայ Շարուր-Նախիջևան-Զանգեզուրով Քուրի հովիտը: Դուք կարող էք մնալ անոնց մէջտեղը, այսինքն Նոր-Պայազիտի և Էջմիածնի շուրջը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՏԻՍԵԱՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ,
էջ 86, Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ,
Պեյրութ 1968 թ.

Մայիսի 28-ը Հայաստանի Առաջին Հանրապետության օրն է:

ԴՐՕՇԱԿ